



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1143

613.8
W-28

1903



ՄԱՐԴԸ ԵՒ ԻՒՐ ՑԵՂԸ

ՇԼՅ. 8

Ա-28

ԲՐՅՑ. Յ. ԱՆՊԻԵԻՐ

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏՔԷՐՈՍԵԱՆ

1903

1 FEB 2013

76358

058
JU-5

ՏՊԱՐԱՆ, ՎԻՄԱԳՐԱՏՈՒՆ, ԿԱԶՄԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՆՈՑ
Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

Թիւ 27, Ֆինճանճըլար եօզուշու, Կ. Պոլիս

Սիրելի ընթերցող

Ձեմ կարծեր որ պէտք չունենաս այս գիրքը կարդալու: Սե-
ռային կեանքի սր դասակարգին որ պատկանիս, պատանի՝ երի-
տասարդ՝ կանամբի, մանկամարդ՝ նոր հարս Թէ արամբի, ան-
շուշտ եմ որ մասնաւորապէս քու վիճակիդ յարմար խորհուրդ մը
պիտի քաղես այս գրքէս, և տարակոյս չունիմ որ զայս կարդա-
լուդ համար անցուցած ժամանակիդ արժէքին բազմապատիկը
պիտի շահիս. չպիտի զղչաս կարդացած ըլլալուդ համար:

Հաստատապէս կը յուսամ նաև որ այս գիրքը ծայրե ի ծայր
կարդալէդ ետքը, դուն ալ ինծի պէս, շինիչ գիրքերու կարգը
պիտի դասես և զայս, և ինքնաբերաբար պիտի յանձնարարես
քու ծանօթներուդ:

Գերմանացի Բժիշկ Բրոֆ. Ալպրէխդի այս գործը դեռ անցեալ
տարի իւր 29րդ. տպագրութեան հասած էր. և երբ ըսեմ Թէ
Գերմանիոյ մէջ՝ այս տեսակ գիրքերու տպագրութեան ամէն մէկ
անգամու արտադրութիւնը 6—10,000 օրինակ է, հաստատ ապա-
ցոյց մը ցուցուցած չեմ ըլլար Թէ այս որչափ փնտուռած գիրք մ'է
հոն, ուր հարիւրաւորներ կան իւր տեսակէն:

Այո, փնտուռելու արժանի գիրք մ'է ասիկա . . . :

1895

ԹԱՐԳՄԱՆԻՉԸ



معارف نظارت جلیه سی و مطبوعات اداره علیه سنک رخصتیه طبع
اولتمشدر فی ۷ ایلول ۱۳۱۸



ՄԱՐԴԸ

ԵՒ

Ի Ի Ր Յ Ե Ղ Ը

Գ Լ Ո Ւ Խ Ա .

ԱՄՈՒՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԻՒՐ ՀԱՅՈՑՔՆԵՐՈՒՆ ՎՐԱՑ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ

§ 1. Այս գրքոյկիս նիւթը սերնդագործութիւնն է . հետեւապէս պիտի գրեմ զուզաւորութեան վրայ , բայց կարելի եղածին չափ քիչ պիտի գործածեմ այս բառը . (և միայն այս բառն է որ գայթակղութիւն պատճառէ զուցէ ընթերցողին) : Իսկ թէ ինչո՞ւ համար այս բառը իւր արժանաւոր յարգովը չի գործածուիր և խորթ կու գայ ականջի : — Աղոր պատճառը ժամանակիս զեղծումն է . բարոյական զգացման տրուած նուա՛զ յարգանքը , մանաւանդ այն հոլանի հրապարակութիւնը , որուն ենթարկուած է ամէն գաղտնիք որ , ճշմարիտն ըսելով , ծածուկ մնալ պէտք էր :

Նրբամիտ ընթերցողը գուցէ ըսէ թէ ես ալ այս գրութեամբս մերկացուցած ըլլամ այդ գաղափարիքը և, հետեւապէս, գործած ըլլամ այն սխալը զոր կը վերագրեմ այլոց :

Բայց, ո՛չ . իմ նպատակս է միայն, բառնալ այդ զեղծումը, խօսքի և գործի մէջ վերահաստատել բարոյական զգացումը . ի բաց վանելով անկէ գայթակղական մասը, լուրջ խորհրդածութեան առարկայ ընել այս խնդիրը, և այս մասին ցայժմուս թերի ըմբռնումներուն և հետեւապէս սխալ վարմունքներու ընթացքը խափանելով, իւր նախապատկան յարգը վերընծայեցունել իրեն :

§ 2. Ամուսնութեան առաջին և վսեմ նպատակը մարդկային ցեղին շարունակաբար աճումն է : Ամուսնութիւնը ներքին կապ մ'է, մարդ էակին յատուկ, այսինքն՝ տարբեր սեռէ երկու անձանց միջև սեռային կապ մը :

Մեր ցուցած այս սահմանէն դուրս է սեռային այն կոշտ հեշտանքը, որ կատարելապէս հակառակ է բնութեան : Սեռային վայելքի մէջ ալ կայ, արդարև, մեղրանոյշ ու հեշտ զգայութիւն մը, մարմնոյ բարձրագոյն գրգռութեան հետ միացած . բայց այդ ալ՝ պէ՛տք էր այդպէս եղած ըլլար, որպէս զի կարելի ըլլար փոքր աշխարհին, այսինքն՝ մարդուս մէջ արթնցունել արտադրիչ այն ոյժը՝ զոր մենք մեծ աշխարհին՝ իմա՛՛ բնութեան մէջ ամէն գարնան տեսնելով կը սքանչանանք . աննիւթական և մարմնաւոր նոր ոյժերու, նոր կերպարանքներու արտադրութեան այդ ամենակարողութիւնը :

§ 3. Սակայն և այնպէս, միտքն ալ մարմնոյն

նպատակին ծառայեցունելու, զայն այդ նպատակին գործակից ընելու համար խանդավառութեան (Ekstase) պէտք կայ :

Միւս կողմանէ, նոյն այդ մտաւորական աննիւթ տարրը խանդավառութեան մէջ մարմնականին հետ միանալով կրնայ հեշտանքի վայելքէն աւելի բարձր, աւելի վսեմ հաճոյքներ պատճառել :

Ո՞վ չէ ունեցած իւր կեանքին մէջ, մէկ կամ աւելի անգամներ, այն բարձր զգացումը զոր մարդ կը զգայ բարիք ընելով, այնպիսի գործ մը կատարելով, որուն գիտակցութիւնը աւելի երջանիկ ըրած է զինքն, քան թէ երբ Հեշտանքին բազկացը մէջ գտնուած ըլլար : Իսկ երբ ըսենք նաև թէ առաջին պարագային մէջ զգացումը զգացումը մնայուն է, տեւական է, իսկ միւսն զգլխիչ բայց անցողական, ո՞վ հաճոյալից պիտի չգտնէր, պիտի չփափաքէր բարի գործ մը ըրած ըլլալուն զուարթ ու հաճոյական յուշն ունենալ շարունակ, և շարունակ զգալ այդ հաճոյքը, փոխանակ, գուցէ, այն սրտակսկիծ յուշածութեան թէ անմեղ կոյս մը զլխէ հանած է, թէ մոլորեալ մ'ալ ինքն աւելցուցած է, և գործակցած է այդ շարեաց արդիւնքին, զոր չի կրնար անտես ընել, չի կրնար հաշուի չ'առնել :

§ 4. Յայտնի է թէ մեր խօսքը այդ գործին անկարգ ու անկանոն կիրառութեան վրայ է . տարփանքին վրայ՝ որ գոհացումէ ուրիշ նպատակ չ'ունի, և զմեղ անասուններէն վեր չբարձրացունելէ զատ, շատ անգամ ալ անոնցմէ ստորին կ'ընէ :

Իսկ բոլորովին տարբեր բան է այնչափ գե-

ղեցիկ ու զօրաւոր կերպով մեր մէջ դրուած դրդման գոհացումը, որու կը պարտաւորեցունեն զմեզ բնութիւնը, բանավարութիւնը և պարագաները : — կարող ըլլալ կեանք տալու այնպիսի էակաց որք մեզի պէս կարենան վայելիլ երջանկութիւնը և ճաշակել կեանքի այն հաճոյքները, որք տրուած են մեզ այնչափ առատութեամբ վայելիլ, եթէ ընտրանք ու չափաւորութեամբ վարուիլ գիտնանք : Ասկէ աւելի մեծ կարեւորութիւն ունեցող ի՞նչ բան կայ : Յայտնի է նաև թէ այս բարձրագոյն խանութեան զավատութիւնը զոր սերնդագործութեան դրդումը յառաջ կը բերէ մարդուս մէջ, մեր ցեղին յարածունութեան համար է միայն . թէ՛ այդ դրդումը իւր բարձրագոյն աստիճանին կը հասնի, երբ կանոնաւոր կերպով գոհացուցուի, և թէ՛ եղծուելով անբնական հետանքի կը դառնայ և մարմինը կը տկարացունէ : Ուստի մարդուս համար կանոն մը սահմանելու է, որով պէտք եղածէն աւելի չգոհացունէ այդ դրդումը, պահպանէ մարմինը, և այդ զգացման ու գործին յատկացեալ նպատակին հասնի :

§ 5. Շատ ծիծաղական են բարոյախօս հեղինակաց խիստ քարոզներն այս խնդրոյն վրայ, երբ բացարձակապէս կ'առաջադրեն թէ սեռային դրդումը ա՛յն ատեն միայն պէտք է գոհացունել, երբ արգասաւորութիւն մը կարելի ըլլայ : Աւելի եւս յիմարամտութիւն է խտտապահանջութիւնն անոնց, որք մոլութիւն ըսելու չափ յառաջ կ'երթան, երբ կ'նոյ յղի մնալէն ետքը մարդ գոհացունել ուզած ըլլայ այդ բնական դրդումը :

Բնութեան մեծ ստեղծիչը որ ամէն բան իմաստութեամբ կարգադրած է, այնչափ գրգռիչ, կրնամ ըսել նաև այնչափ ստիպողական պիտի չընէր այդ դրդումը, եթէ աղոր նոյնօրինակ ժուժկալութիւնն ուզած ըլլար : Գարնան մէջ դիտեցէ՛ք ծաղկապատ ծառերը, տեսէ՛ք թէ բնութիւնը որչափ հարուստ է . որչափ հարիւրաւոր ծաղիկներ կ'իյնան, կը կորսուին առանց պտղաւորելու : Գիշերային սաստիկ ցուրտ մը ամբողջ տարեկան պտուղները, պտղաքաղ մը չ'ո՞չնչացուներ . փոթորիկ մը հաղարաւոր պտուղներ անօգուտ կերպով չի՞ թօթափեր, և այդ ծառերը իրենց բեռներուն տակ չ'պիտի ընկճուէին եթէ մայր-բնութիւնը զիրենք չհոգալով, չթօթափէր իրենց վնասակար աւելորդ մասը : — Քանի որ բնութեան ամէն բանին մէջ Արարչին իմաստութիւնը կայ, ինչո՞ւ համար մարդս յանցաւոր դատուեր սերնդագործութեան նպատակը կատարուած ըլլալէն ետքն ալ (այսինքն կինը յղի մնալէն ետքը) սիրոյ հեշտութիւնը վայելելուն համար :

§ 6. Այս մասին մխիթարական մ'է գիտնալ — և արդէն փորձառուները լաւ գիտեն — թէ սեռային դրդման ամէն մէկ գոհացում իրապէս արգասաւորութիւն յառաջ չի բերեր . թէ՛ ամիսներէ ետքն ալ շատ դժուար է վճուել թէ իրօք արգասաւորում տեղի ունեցա՞ծ է :

Ամենուս գիտցածն է թէ ամուսնութեանց շատերը մէկ քանի տարիներ անպտուղ կը մնան . արդ, երբ այդ տարիներու մէջ տեղի ունեցած սեռային դրդման գոհացումը յանցանք մը չէ,

և երբ այդ կերպով կորսուածը — այսինքն կորսուած սերմը — ապարդիւն չի կրնար նկատուիլ, ուստի մարդուս մէջ այնչափ բնականօրէն և այնչափ անզսպելի կերպով դրուած դրդման մը գոհաջողմն ալ յանցանք մը չի կրնար նկատուիլ, գէթ այն պարագային մէջ երբ այդու որեւիցէ հիմնական վնաս մը յառաջ չգայ:

§ 7. Ետտ հետունքը պէտք չէ երթալ համոզուելու համար թէ այդու կարեւոր վնաս մը յառաջ չի գար: Ամուսնացեալք խղճի մտօք թող ըսեն թէ արգասաւորութիւն տեղի ունենալէ ետքը, կատարելապէս ետ կը կենան սեռային վայելքէն: Ես կ'ըսեմ թէ հաստատական պատասխան մը տուող չպիտի գտնուի:

Ուրեմն, ինչո՞ւ համար անդէպ բարոյականութեամբ հաստատել ուզուի այն, որ հին ժամանակաց մէջ իսկ չկար. այն՝ որ հակառակ է բնութեան, և որ մարդատեսցի մը, սիրոյ թշնամիի մը գիտուն մէջ միայն կրնայ դոյութիւն ունենալ:

§ 8. Բայց սեռային դրդման գոնացումը մինչև որ աստիճան վնասակար կրնայ ըլլալ այն պարագաներուն մէջ որ կինը յղի մնացած է, և կամ թէ՛ չէ. գիտնալու կարեւոր կէտը այս է, զոր իւր յատուկ գիտուն մէջ մանրամասնօրէն պիտի քննենք իւր ամէն վնասակար հետեւանքներովը: Աս այժմ սա ըսենք թէ մարդ պէտք չէ անստոյգ տարուբերանք մը ունենայ, կրժող որդ մը դնէ իւր ներսիդին, երբ սեռային հաճոյքը վայելել կ'ուզէ. միայն թէ պէտք է սանձ դնել իւր կրքին, որպէս զի չափազանցութեան վնաս մը յառաջ չգայ:

§ 9. Այս ամենուն վրայ պիտի գրենք յաջորդ գլուխներուն մէջ: Այժմ, գրքիս նպատակին համեմատ, ծննդագործարանաց մէկ համառօտ նկարագրութիւնն ընենք, որ օգտակար պիտի ըլլայ մեր գրելիքներուն:

Գ Լ Ո Ւ Խ Բ.

ՄԱՐԴԱՅԻՆ ՄԱՐՄՆՈՅՆ ԱՅՆ ՄԱՍԵՐԸ ՈՐ
ՍԵՐՆԻԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԿԸ ԵԱՌԱՅԵՆ

§ 10. Մարդկային մարմնոյն ամբողջ յօրինուածութիւնը այնպիսի ինն իմաստութեամբ կարգադրուած է որ աշխարհս անոր մէջ կը տեսնուի, մանրանկարի մը պէս: Ետտ երկար կ'ըլլայ այս երկուքին զուգակշիռն ընել հոս, ցուցունելու համար թէ ինչ որ կայ երկրագնդիս մէջ՝ գետ, քար, հող, մարմնոյ մէջ ալ կան փոխադարձաբար երակ, ոսկոր, միս: Նոյնպէս՝ արտադրութեան, այսինքն վերանորոգութեան ամէն գաղտնիքները, ինչ որ անոնց ծագումը, կաղմութիւնը, հասունութիւնը կը ներկայացունէ: Մարդուս խելքը չի համիր ագոր. բնութեան խորախորհուրդ մէկ գաղտնիքն է այդ մեզ համար:

§ 11. Նոյնպէս նաև մարդուս մէջ իւր նմանը յառաջ բերելու գործը (կարողութիւնը) խորախորհուրդ գաղտնիք մ'է մեզ համար ի սկզբանէ

անդ երբ մարդ սկսաւ ինքնիրմով զբաղիլ, այս այնչափ խոր, անքննելի երեւցող գաղտնիքը լուծել մտադրեց. և բօլշևիկներն ու բնախոյզները ջանացին ադոր համար խելքի մօտ ենթադրութիւններ ընել և հնարաւորութիւններէն իրականութիւն յառաջ բերել:

§ 12. Այդ զանազան կարծիքներուն վրայ համառօտ տեսութիւն մը ընելէ առաջ պէտք է մարդուս սերնդագործութեան ծառայող մասին և զիրքին վրայ խօսիլ:

Շատ մեծ իմաստութեամբ է որ բնութիւնը մարմնոյն կեդրոնը հաստատած է ծննդագործարանները, և այնպիսի զիրք մը տուած է անոնց որ մարդուս կեանքին ուրիշ գործողութիւնները չեն խանդարուիր: Մարդ ամէն աշխատութեան կրնայ ենթարկել իւր անձը առանց այդ մասին ամենափոքր վնաս մը պատճառելու: Նոյնպէս մարդկային մեքենան շինողին իմաստութիւնը երկու սեռին համար ալ աննշան ձեւ մը ընտրած է, այնպէս որ մարդ այդ մասերուն հետ գործ չունեցած ատեն, գրեթէ տեղ չեն գրաւեր և ո՛չ իսկ անհանգստութիւն կը պատճառեն: Ծննդագործարանք կը փոխեն իրենց վիճակը միայն այն նպատակին և գործողութեան պատճառաւ, որուն համար սահմանուած են երկու սեռերը:

Ճշմարիտ է թէ ամուսնութեան գլխաւոր նպատակը մարդուս բազմանալն է, բայց ապացուցանելու համար թէ մարդ իւր տեսակը յառաջ բերելու համար չէ որ կ'ապրի միայն, այլ թէ կրնայ առանց անոր ալ հանգիստ կեանք վարել, բաւա-

կան է մէջ բերել այդ ծննդագործարանաց, առանց մարմնոյն վնասելու, չքացման կարելիութիւնը:

Միթէ շատ անգամ չե՞նք տեսներ որ ծննդագործարանք իրենց վրայ յառաջ եկած դիպուածական վնասներու, և կամ մարդուս իւր անձնական մեղկ ու ցոփ չափազանցութեանց հետեւանքով ինքնին կը չքանան և մարմինը, առանց վնասուելու, կրնայ շարունակել իւր պաշտօնները, և թէ՛ հոգւոյն գործողութիւնները յաճախ աւելի ազդեցիկ կ'ըլլան իւր մէջ, թէ՛ մարմինը հոգ չի ընել այդ կորուստին համար: Եւ դեռ աւելին կայ. ո՞վ չի գիտեր թէ վիրաբուժական գործողութեամբ ամորձիքները հանուելէ ետքը, մարմինը վրայ կը դնէ թէ՛ զօրութեամբ և թէ՛ գիրութեամբ: Իրա՞ւ է որ առաջ՝ սերնդագործութեան յատկացուած հիւթը (սերմը) այժմ ամբողջ մարմնոյն զօրացման կը ծառայէ: Կիրքին լուծութիւնն է որ առողջ կը պահէ մարմինը:

Ես չեմ ըսեր թէ բնական զգացում կոչել կարելի է այդ, և թէ՛ այդպէս մտածող մարդը կատարեալ է. միայն տեսած եմ թէ մարդուս այդ կարողութեան զեղծումէն յաճախ զգուանք մը կը ծագի անոր դէմ. և այս տեղ ապացուցանել կ'ուզեմ թէ մարդկային ցեղին բազմանալուն չաշխատիլը այնչափ մեծ ոճիր մը չէ որչափ ցուցունել կ'ուզուի:

Յաճախ կը պատահի որ կանայք իրենց առաջին տղաբերքէն առաջ կամ ետքը ամուլ կը մնան, սակայն մարմինը առողջ ու անվնաս կը մնայ, և հոգին՝ յօժար ու զուարթ:

էրիկ մարդուն դործարանական կազմուածքը
 կնոջ պէս փոփոխական երեւոյթներ չունենար .
 սերնդագործական դրդումը գոհացունելու ատեն
 միայն պահ մը պէտք ունի անոր իսկ քանի՛ չժնաղ է
 իգական սեռին ծննդագործարանաց կազմուածքին
 խմաստուն շէնքը : Այդ կազմուածքը , որ ապա-
 գայ մարդը 40 շաբաթ իւր մէջ կրելու , պահպա-
 նելու , կերպարանաւորելու և սնուցանելու սուրբ
 ու վսեմ պաշտօնին նախասահմանուած է : Այդ
 կազմուածքը՝ որ նոր ծնելիքին բաւականաչափ
 տեղ տալու համար , առանց ցաւի և անզգալի
 կերպով կ'ընդլայնի և որոշեալ ժամանակի մը հա-
 մար պահպանելէն ետքը սքանչելի ոյժով մը ի լոյս
 կը ծնանի զայն : Եւ այդ նորածինին 40 շաբաթ
 գտնուած վայրը շատ հանգիստ և շատ հաճելի է
 իրեն : Կարելի՞ է գտնել մարմնոյն մէջ ուրիշ որև
 իցէ տեղ մը , ուր կարելի ըլլար ի գլուխ հանել
 այս գործը . և եթէ ըլլար իսկ , քանի՛ տճեւ ու
 անհաճոյ պիտի ըլլար բնութեան կատարելագործ-
 եալ արարածը , կինը :

§ 13. Եւ քանի՛ խնամեալ կերպով կը մնայ
 նորածինը այդ կայանին մէջ , ուր մայրը կը սնու-
 ցանէ , կը խնամէ և կը պահպանէ զանի : Նախ՝
 ջրային հիւթով մը կը շրջապատուի . այդ հիւթը
 կը պահպանէ զինքն ամէն ընդհարումներէ որոնց
 կրնայ ենթարկուել մօրն փորը , և կը թողու որ
 երախան ազատութեամբ շարժի անդ , ինչ որ ան-
 կարելի էր՝ արդանոք շրջապատող անջրպետներուն
 յառաջ բերած նեղութենէն . և այս վիճակին մէջ
 անա , մանուկը , առանց ճնշուելու կրնայ մեծնալ :

Երախան դեռ շնչելու պէտք չունի . բնութիւնը
 այդ պարագայէն օգուտ քաղելով վիճակայարմար
 հեղանիւթի մը մէջ կը պարփակէ զանի , որ կը
 նիրհէ հոն , ինչպէս ձուկը՝ ջուրին մէջ :

§ 14. Ապա երկու մաշկեր կը շրջապատեն
 զանի , իրեւ թէ հաւկիթի մը մէջ պարփակուած ,
 և տեղ կու տան անոր որպէս զի շարժումներ ընէ
 ու մեծնայ : Վերջապէս արգանդին շրջապատն իսկ
 կը պաշտպանէ զանի այն ամէն դէպքերէն որ էգ
 մարմնոյն վրայ յառաջ եկած փոփոխութեանց ատեն
 կրնային վտանգաւոր ըլլալ իրեն : Այս տեղ երբ
 նկատողութեան առնունք թէ փորոտիքը , որո-
 վայնի մկանները և մաշկերն ալ ուրիշ միջնորմ
 մը կը կազմեն սաղմին շուրջը , այն ատեն կ'ըմ-
 բռնենք թէ այս ամէնը ինչպէ՛ս լաւ կը պաշտպա-
 նեն զանի արտաքին ուժգնութեանց դէմ , բաւա-
 կան է միայն որ ասոնք մարմնոյն ամբողջ ջղային
 դրութիւնը խանգարելու չափ զօրաւոր չ'ըլլան :

Եւ մարմնոյն մէջ այդ փոքր սաղմին բնակա-
 րանը այնպիսի զանազան կերպերով ամրացած է ,
 որ մինչեւ ծննդեան պահուն շարունակաբար մեծ-
 ցող սաղմին իւր ընթերակացներովն ունեցած ծան-
 րութիւնը և նոյն իսկ շարժումները չեն կարող
 խախտել զայն :

§ 15. Ո՛րչափ իմաստութիւն կը պարունակէ
 Արարչին ստեղծած այս յօրինուածութիւնը , նո՛յն-
 չափ իմաստութեան սքանչելիք մ'է նաեւ տղա-
 բերքը իմա՛ սաղմին ցայն վայր օթեւանած պատըս-
 պարանէն անջատումը : Այս պարագային մէջ ալ չի
 վնասուիր մարմնոյն մնացորդ մասը : Այդ պատըս-

պարանին մկնանեարդերը զգացուած պէտքին և կարելիութեան սահմանին մէջ այնչափ ուժգնութեամբ լայննալէ և ձգտուելէ ետքը վերստին կը կծկուին ու կ'ամփոփուին, և մրեւնոյն ուղղութեան ընթացող այս նեարդերուն ոյժը այնպիսի իմն կը ճնշէ փոքրիկ խոռոչաքնակը, որ ինքնաբերաբար դուրս կ'ելնէ իւր առջեւ բացուող միակ ելքէն:

§ 16. Սքանչելի իմաստութեան գործ է նաև որ նորածինը (ինչպէս սովորաբար տեղի կ'ունենան աղաբերութեանց ամենամեծագոյն մասին մէջ) գլխու կողմէն դուրս կ'ելնէ: Գլուխը մանկան մարմնոյն վրայ դանուած ամենէն յարմար կտրութիւնն է, որ դիւրութեամբ կրնայ բանալ արգանդաբերանը: Նոյնպէս, բնութիւնը՝ ուղեղը շրջապատող այդ գոգաւոր և ամուր ոսկորներուն մէջ այնչափ զօրութիւն զնելովն հանդերձ դեռ կատարելապէս չէ յօդաւորած զանոնք, որպէս զի մի' գուցէ դիմադրութիւնը սաստիկ եղած ատեն խաւտին իրենց տեղերէն. և ճնշումը, որ ընդհանրապէս ամէն կտր առարկաներու վրայ կը կորսնցունէ իւր ոյժը, հոս եւս մնաս չի պատճառեր:

§ 17. Եւ որովհետեւ ծնունդը իւր յարակից պարագաներուն հետ մարմնական ցաւերով կը կատարուի, ասոր համար ալ բնութիւնը այնչափ մեծ գրգռու և այնչափ հեշտահաճոյ զգայութիւն մը դրած է սերնդագործութեան ՃՇՄԱՐԻՏ գործողութեան եւ սեռային դրդման գոհացումին մէջ, որ բարեբաղդ մայրը անմիջապէս կը մոռնայ իւր զգացած ցաւերը, եւ նոր յղութեան մ'ատեն ամենեւին չի յիշեր այն ցաւազին ժամերը, այլ ընդ-

հակառակն այդ ցաւերը իւր նմանը ծնած ըլլալուն համար զգացած խինդովը կը քաղցրանան:

§ 18. Յայտնի չէ թէ երկու սեռէն ո՞րն աւելի մեծ գրգռութիւն եւ հետեւապէս աւելի մեծ հաճոյք կը զգայ սերնդագործութեան զրդման գոհացումին մէջ. միայն կը կարծուի թէ կիներն է որ կը զգայ առաւել հաճոյք եւ հետեւաբար ցաւուն շատը ինքն է որ կը կրէ:

ԱՐՈՒ ԵՒ ԷԳ ԾՆՆԴԱԳՈՐԾԱՐԱՆԱՑ ԿԱՆՈՆԱԻՈՐ ԾԷՆՔԸ

§ 19. Արու եւ էգ ծննդագործարանաց համառոտ մէկ նկարագրութիւնն ընել հոս օգտակար կը համարիմ, վասն զի երբեմն ո՛չ միայն էրիկմարդուն, այլ եւ կիսը ծննդագործարանաց մէջ կարելի է պատահին այնպիսի տձեւութիւններ որք անպատեղ կ'ընեն ամուսնութիւնը: Այդ տձեւութեանց շատերը վիրաբուժական թեթեւ գործողութեամբ մը կրնան կանոնաւորուիլ, այնպէս որ սերնդագործելու անկարող կարծուած անձ մը դիւրաւ կրնայ երջանիկ ամուսնութեան մը յարմարութիւն ունենալ:

Արու ծննդագործարանի



Ծննդագործարանագործին մասին կը պատկանին ամորձիքները, մտքի և պարզի մը մէջ զեանդուած: Այդ պարկին մէջ որոնցմ երկուորիքներն են սերնդագործութեան կարեւորագոյն գործարանները: Ասոնք ամենափոքր սերմնարաններէ կը բաղկանան եւ իրենց մէջ կը պատրաստուի արական սերմը: — Արանդամը սպունգի

նմանող երկու մարմիններէ եւ միզանցքէ մը կը բաղկանայ : Յայլուարին մօտ գտնուող սպինգային մասններուն մէջ է միզանցքը , որ փայլափուշտին հետ միանալով , մէզն արտաքսելու պաշտօն ունի :

Ծննդագործարանաց ներքին մասին կը պատկանին սերմնապահ փամփշտիկները : Ասոնք շատ փափուկ եւ նրբամորթ են եւ երկուորեքներէն դուրս ելնելով իրենց մէջ եկող սերմը կը պահպանեն . ապա՝ սիրոյ բարձրագոյն արըշուութեան ատեն , վերոյիշեալ միզանցքէն անցնելով՝ կնոջ իգափողէն՝ արգանդին մէջ ցայտեցունելու համար արգասաւորիչ հեղուկը : Եթէ այս սերմնապահ փամփշտիկները կարծրացած ըլլան , կամ թէ միզանցքին մէջ արգեւք մ'ըլլայ , կամ միզանցքը անբնական բացուածք մ'ունենայ (այսինքն բերանը արանդամին տակի կողմը ըլլայ) այն ատեն զուգաւորութիւնը անպտուղ կը մնայ : Նոյնպէս նեղ թլիփ (վերնամաշկ) մը , որ պսակէն վար չիջներ , կրնայ արգելք ըլլալ արգասաւորութեան :

Այսչափս բաւական է արու ծննդագործարանաց համար . այս կանոնաւոր կազմութեան հակառակ վիճակ մը պէտք է բժշկին ցուցունել , որ կարելի եղած միջոցներով դարմանէ :

էգ ծննդագործարանք

Յայլուարին տակ , ստորին որովայնին ստորնագոյն միջավայրին մէջ , այսինքն երկու սրունքներուն իրարու միացած տեղը գտնուած մեծ շրթոնները իրենց մէջ ունին մուտքն զէպի ներքին ծննդագործարանները : Կոյս օրիորդաց ուռու

ցիկ եւ մազերով ծածկուած այս շրթունքը իրարու քով սեղմուած են : Այս շրթունքներուն վերին միացման մէջ , դուրս ցցուած , փոքր մարմին մը կայ որ կղիթորի կը կոչուի եւ շրջապատուած է փոքր շրթունքէն : Կղիթորիին տակ կը գտնուի միզանցքին բերանը եւ ճիշտ ատոր ալ տակը՝ իգամուտքը : Սա գոցուած է շարոյրով (կուսական թաղանթ) որ դաշտանի հոսման համար ծակ մը ունի :

Բայց այս վիճակը կոյսերուն յատուկ է : Առաջին զուգաւորութեան ատեն շարոյրը կը պատռաի եւ այդ ատեն երբեմն արեւն իսկ կը հոսէ : — Անկանոն վիճակներ են՝ շրթունքին կցուած ըլլալը , շարոյրին կոճկացումը , կղիթորիին մեծութիւնը (ինչպէս է արուէգներունը) . ասոնք պատճառ կրնան ըլլալ կնոջ ամլութեան եւ բժշկական օգնութիւնը պահանջելի կ'ընեն : — Հին ատենները ճշմարիտ կուսութեան ապացոյց կը համարուէր շարոյրին անվթար մնացած ըլլալը , եւ առաջին մերձաւորութենէն ետքն արեան բիծերը : — Մերձաւորութենէ զատ շարոյրի պատռելուն պատճառ կրնան ըլլալ նաեւ զանազան հիւանդութիւններ , ցաւքեղ եւ ուրիշ մեքենական պատճառներ : — Այս ամէնը արտաքին մասը կը կազմեն ծննդագործարանաց : Իսկ ներքին մասին կը պատկանին իգամուտքը , իգափողը , 15-20 հարիորորդամթր երկայնութիւն ունեցող անցքը , որ կուսական վիճակի մէջ նեղ , ամուր փոթուածք մ'է եւ զուգաւորութեան օտարբերքի ատեն ջրային հիւթերու արտաթորման համար շատ մը լորձնագեղձեր կը պարունակէ իւր

մէջ : Այս ջրային հիւթերը յաճախ հակարնական երեւոյթ մը կ'առնուն եւ մաղասահութեան (ճերմակ դաշտան) վիճակով երեւան կու գան , որ միանգամայն պատճառ կրնայ նկատուիլ կնոջ ամբլութեան *) : Իգափողին մէջ է արգանդաբերանը : Կնոջ ծննդագործարաններուն կարեւորագոյնն է այս : Արգանդը՝ զօրաւոր վիճակի մէջ՝ տանձի ձեւ ունի , բարակ մասը գէպի վար եւ հաստ մասը գէպի վեր ուղղուած : Յղութեան ատեն արգանդը կ'ընդարձակի եւ կը բարձրանայ այնչափ որ արգանդի վերին մասը ստամոքսի փորոզին կը հասնի : Անսաղմ արգանդն իւր ներքնոյն մէջ շատ փոքր տեղ մը կը բռնէ եւ փալլուպեան փող կոչուած երկու խողովակներու միջոցաւ ձուարանի հետ հաղորդակցութիւն ունի :

Ձուարանք արգանդին երկու կողմերը կը գտնուին եւ ունին իրենց մէջ ձուիկներ , որք այժմուս քեռորին համեմատ արգասաբեր զուգաւորութենէ ետքը նոր էակի մը հունար կը բռնեն իրենց մէջ , Դաշտանի ատեն ձուիկ մը կ'անջատուի ձուարանէն , փալլուպեան փողէն անցնելով , կամ ասոր եւ կամ արգանդին մէջ կ'արգասաւորի արական սերմովը . արգանդին մէջ կը կազմուի սաղմը , մինչեւ ծնելու օրը :

Արգանդը ամրացած է զանազան կապերով : Կնոջ ներքին ու արտաքին այս ծննդագործարանները բնական եւ կատարելա'պէս լաւ կազմակեր-

*) Դիտելի է թէ այն հիւանդութիւնները որք մաղասահութեան հետեւանք են , յաճախ նշան են ամբլութեան :

պուած վիճակի մէջ գտնուած ըլլալու են սերնդագործելու համար :

Եւ ո՛չ այսչափ միայն : Կնոջ կոնքին ոսկերային շէնքը երբ նեղ կամ պակասաւոր կազմուած ըլլայ , կամ արգասաւորութիւն տեղի չունենար եւ կամ տղաբերքն այնչափ դժուար կ'ըլլայ , որ երբեմն մահ իսկ կը պատահի :

Կարելի է նաեւ որ ձուարանք եւ փալլուպեան փողերը կարծրանան , ջրգողին , վիրաւորուին , արգանդին կապերը թուլնան (անզօրանան) եւ արգանդը վար խնայ :

Ասկէ զատ կան նաեւ գործարանային ուրիշ անբնական վիճակներ որոնց մէկ մասը կարելի է բուժել . իսկ մաս մ'ալ կայ որ անբուժելի է եւ պատճառ կ'ըլլայ ամբլութեան :

Էգ ծննդագործարանաց կարեւոր մէկ մասը կը կազմեն նաեւ ծիծերը : Թէպէտեւ սերնդագործութեան համար անմիջական մասնակցութիւն չունին ասոնք , բայց նորածինին աննդեան կը ծառայեն , եւ ներքին ու արտաքին ծննդագործարանաց հետ սերտ յարաբերութեան մէջ են : Ծիծերը կնոջական զարգարանք ալ են : Գեղեցիկ , ուռուցիկ ծիծերը կնոջական միւս կատարելութեանց յայտնարար նշաններ կը համարուին , վասն զի արբունքի չհասած ալջկանց ծիծերը դեռ անկատար են : — Ծիծերու գրգռութիւնը հեշտական զգացում մը յառաջ կը բերէ ծննդագործարանաց մէջ : — Այնչափ ատեն որ կրնը իւր կաթովը սնուցանէ իւր զաւակը , դաշտանահոսումը կը զազրի : Բայց շատ

անգամ ալ կաթ տալովն հանդերձ դաշտանը կը վերսկսի : Պատճառանդի (գորսէ) ճնշմամբ ծիծերը կրնան կորսնցունել իրենց առաձգութիւնը . կրնայ ըլլալ նաեւ որ վիրաւորուին, կարծրանան : Ծիծերը շատ գեղձեր ունին իրենց մէջ, որով տեղի կ'ունենայ կաթի բլխումը :

§ 20. Արգասաւորիչ հիւթը, այսինքն սերմը որ սերնդագործութեան համար կարեւորագոյն պէտք մ'է էրիկմարդուն, ո'չ միայն այդ նպատակին համար պէտք է գտնուի մարմնոյ մէջ, այլ ապացուցուած նորագոյն սկզբունքներու եւ փորձերու համաձայն, անո՛ր համար նաեւ որ ազոր պատրաստութենէն ետքը, մարմնոյն մէջ վերադառնալով, անոր զօրացման, մտքին կազդուրման եւ թերեւս հոգւոյն՝ մարմնոյն հետ ունեցած սերտ յարաբերութեանց ծառայէ : Ասկէց է որ կը հետեւի սա իմաստուն պատուէրը թէ՛ մարդ պէտք չէ որ անօգուտ կերպով ու յիւստաբար վատնէ այդ հիւթը :

§ 21. Անօգուտ կ'անուանենք գլխաւորաբար այն չարաբարոյ եղանակը, որով այդ հիւթը բնականէն տարբեր եղանակաւ դուրս կը հանուի մարմնէն, առանց նպատակ ունենալու սերնդագործութիւնը, եւ իւր ըրած կորուստին համար չընդունելով որ եւ իցէ փոխարինութիւն մը այնպէս՝ ինչպէս որ կ'ըլլայ առն եւ կնոջ միջեւ բնական եղանակաւ տեղի ունեցած վայելքի ատենս Վասն զի երբ սեռային յարաբերութիւնը բնական եղանակաւ կատարուի, այր եւ կին իրենց կորուստը կը փոխարինեն երականման ծծող-խողո-

վակներու միջոցաւ, եւ սանկ ըսենք, այդ գործը կը կազդուրէ ու կը կատարելագործէ երկու կողմին մարմինները, մանաւանդ՝ երիտասարդ, ու ժեղ հասակի մէջ : Իսկ ընդհակառակն, անբնական գրգռութեամբ, այդ հիւթին միակողմանի կորուստը մահաբեր ու ժաթափութիւն մը յառաջ կը բերէ, կը սպառէ կը հիւժէ մարմինը եւ կը բթացունէ հոգին :

Անբնական տուփ մը, յօնանականութիւնը կամ գիջութիւնը, որուն սոսկալի հետեւութիւնները նկարագրուած կան Հին Կտակարանին մէջ, գլխաւոր պատճառ է մարմինը տկարացունելու եւ հոգին բթացունելու, այսինքն այդ մոլութեան ենթական Ֆիդիքապէս ու բարոյապէս մահացունելու :

Դժբաղդաբար այդ մոլութիւնը կը գտնուի 10-12-14 տարեկան տղայոց քով, եւ յաճախ՝ որովայնի գրգռութիւններն (գ. օ. ճճիները) են ազոր պատճառը : Ասոր համար ծնողաց եւ դաստիարակաց խորհուրդ կու տանք որ լաւ հսկեն իրենց զաւակաց եւ աշակերտաց վրայ : Սեռային դրդման անբնական ուղղութիւնը յաճախ պարզ դարմանով մը մէկ կողմ կ'ըլլայ :

Բայց շատ անգամ այս վիճակին պատճառն է ապականեալ երեւակայութիւնը որ յառաջ կու գայ կա'մ լկաի վէպերու ընթերցմամբ եւ կամ աննեւրելի վարմունքովն այն չափահասներուն, որք գայթակղական դէպքեր կը պատմեն տղայոց ու կը թունաւորեն անոնց սիրտերը : Տղայոց սպասաւորութեան յատկացուած անձեր, զանոնք հանդարտեցունելու համար, յաճախ այդ անմեղ մանկանց

ծննդագործարաններուն հետ կը խաղան եւ կամ թէ շատ կանուխէն կը սխիւն տալ անոնց ոգիւից խմելիքներ, յոյժ անդարար ուտելիքներ եւն. եւն.:

Բայց առանց սերմնահոսութեան ալ կրնայ մարդ, հեշտագրվիտ երեւակայութեամբ, գիշու-թիւն ըրած ըլլալ, եւ այսու մարմնական մոլութեան պատճառած վնասէն աւելի վնասել անձին :

Գեղեցիկ սեռին ալ խորհուրդ կու տամ, կատարելապէս հաւատարիմ մնալ բնութեան եւ չենթարկուիլ այն հեշտախախտի անառակութեանց, որք թէ՛ իրենց հոգեկան խաղաղութեան ու զօրութեան, եւ թէ իրենց գեղեցկութեանն ու առողջութեանը կը վնասեն :

§ 22. Յիմարարար վասնուած կ'ըլլայ այդ կենսաբեր հեղուկը երկու սեռին համար ալ, եթէ յաճախ յոգնեցուցիչ ճիգերով, թէպէտ բնական եղանակաւ, շոյլօրէն զուրս հանուի մարմնէն : — Ինչպէս որ պիտի ցուցունենք քիչ մը վերջը, սեռային դրդման չափաւոր գոհացումը որչափ որ կը նպաստէ մարմնոյ կատարելագործութեան, այնչափ ալ վնասակար է աղոր չափազանցութիւնը, եւ ասոր հետեւանքները թէպէտ այնչափ շուտ ու սոսկալի կերպով երեւան չեն ելներ, անօգուտ ու ապարդիւն կերպով վասնուած ատենին պէս (յօնանականութեան պէս) բայց կը կարճեցունեն մարդուս կեանքը, — զոր կարելի է երկարել այդ պիտանի կիրքին չափաւոր գործածութեամբ — եւ այնպիսի հիւանդագին ու վատառողջ վիճակ մը կը պատրաստեն մարմնոյն, որուն ան-

կարելի կ'ըլլայ զգալ կեանքի հաճոյքը ա՛յնչափ որչափ կրնայ զգալ մարդ երբ իւր ոյժը խնայողութեամբ գործածած ըլլայ : Աւելցունենք նաեւ թէ այդ չափազանցութեամբ ո՛չ միայն ընդհանուր, այլ տեղական անդամալուծութիւններ եւ ցաւազին հիւանդութիւններ կրնան յատաջ գալ մարդուս վրայ : Գաղիացի բժիշկ Տօքթ. Ժիոստօ ար Սէն Ժէնովէ դարմանած է դեռատի այր եւ կին մը, եւ կը պատմէ թէ ասոնք սիրոյ հաճոյքը չափազանց վայելելով ենթարկուած էին ամենավտանգաւոր հիւանդութեան մը, որ գարշելի թարախ մը դուրս կու տար իրենց ծննդագործարաններէն : Այսպիսի հետեւանքներ երեւան կու գան նաեւ, երկու սեռին մէջ ալ, սեռային դրդման հակաբնական գոհացումամբ : Չափազանցութեան հետեւանք եղող նշաններն են, յաճախ, արգանդին թուլութիւնը, աչքի ցաւեր, աչքերու շուրջը օղակ, զլխու՝ ստամոքսի եւ կուրծքի ցաւեր, անհանգստութիւն, թախծոս՝ մեղամաղձային վիճակ մը, եւ վերջապէս ողնայարին կորացումը, տեսողութեան սկարութիւնը եւլն. եւլն. : Ծնողք եւ դաստիարակք պարտին մեծ ուշադրութիւն ընել երբ իրենց մանչ կամ աղջիկ գաւակաց եւ աշակերտաց վրայ տեսնեն այդօրինակ կասկածելի նշաններ . վասն զի ոչ ի՛նչ այնչափ ուժաթմափ կ'ընէ մարդս քան որչափ՝ յաճախակի կորուստն այդ կենսատու հիւթին, որ մարդկային նոր էակ մը յառաջ բերելու յատկացեալ ըլլալէն զատ, արդէն կազմակերպուած անձի մը կենսական ոյժին վերանորոգման վրայ մեծ ազդեցութիւն ունի :

§ 23. Բայց ինչպէս որ այդ հիւթին չափազանց կորուստը կը մեղկացունէ, կը ջլատէ ու կը տկարացունէ մարմինը, այնպէս ալ փոխադարձաբար չափազանց ժուժկալուծիւնը փնասաբեր հետեւանքներ կ'ունենայ ու կը փնասէ մարդուս : Այո՛, մինչեւ որոշեալ ժամանակ մը նուրբ երակներուն մէջ պատրաստուած այդ կենսատու հիւթը մեծ մասամբ կը ծծուի, արեան հետ կը խառնուի եւ կատարելագործեալ մարդուն ուժաւորման կը ծառայէ : Սակայն, մարդուս կատարելապէս հասուն վիճակի մէջ գտնուած ատեն, կայ ժամանակ մը յորում սերմին մէկ մասը բացարձակապէս պէտք է դուրս ելնէ այն ճամբէն զոր բնութիւնը գծած է, թէ չէ՝ մարմնոյն աուցութիւն մը, գրգռութեան յանկուծիւն մը յառաջ կու գայ, որ այդ ալ առիթ կու տայ գերագրգռութենէ յառաջ եկող հիւանդութեանց : Ընդունելի չէ ոմանց ըսածը թէ մարդ կրնայ, երբ սերմն առատ է, մաքրողական ու տկարացուցիչ դեղերով նուազեցունել զայն եւ արգելուլ գրգռութիւնը : Այդ միջոցներուն ազդեցութիւնը հարեւանցի է, մանաւանդ թէ շատ կը տկարացունէ ենթական. արդարեւ սերմը արեան մէջ կը վերագառնայ երբ մարդ ուրիշ տեղերէ՝ մարմնէն դուրս բան հանէ, բայց այդ ալ այնպիսի ուժգին գործողութիւն մ'է որ ամբողջ մարմնոյն վրայ վտանգաւոր ազդեցութիւն մ'ունի, եւ ժամանակէն առաջ կը մաշեցունէ մեքենան *) :

*) Սերմը պատրաստուելով՝ փամփշտիկներու մէջ անջատուելէ ետքը կրնայ վերստին ծծուիլ մարմնէն. — Պատշաճագոյն

§ 24. Ամէն բան իւր նախասահմանեալ տեղը լեցուելու է. այս պատճառաւ է որ մարդուս մէջ որոշեալ ժամանակին սեռային կամ սերնդագործական դրդման գոհացումը առողջարար պէտք մ'է, եւ այս՝ մարդուս չափահասութենէն ետքը պէտք է կատարուի :

Ընդհանրապէս իբրեւ կանոն կրնայ ընդունուիլ թէ մարդ որչափ կանուխէն սկսի գոհացունել սեռային ցանկութիւնը, այնչափ կանուխէն կը դադրի զայն գոհացունելու կարողութիւնը : Ընդհակառակն, որչափ ուշ տեղի ունենայ այդ, այնչափ ընդերկար կը վայելէ մարդ սերնդագործութեան ոյժը :

Սնուբանալի է թէ մարդկային կեանքի մէջ կան ժամանակներ յորում տեղի ունեցած պարպումները օգտակար են առողջութեան, եւ ան որ, երբ բնութեան ընթացքը կը պահանջէ զայն իրմէ, բնութեամբ կը զրկէ ինքզինքն առկէ, հակառակ վարուած կ'ըլլայ իւր կոչման : Այս տեսակ ժուժկալութեան օրինակները հազուադէպ են, մանաւանդ թէ ձեր ամուրիները ձայն չունին այս խնդրոյն մէջ. եւ եթէ այդ ժուժկալութեան օրինակները իրապէս գտնուէին իսկ, այդպիսի անձանց առողջութիւնը սարսուած պիտի գտնենք յաճախ : Յա-

է ընդունիլ թէ սեռային դրդում կամ գրգռութիւն տեղի չունեցած ատեն, սերմին պատրաստութեան համար պէտք եղած հիւթը, ամբողջ գործարանաւորութիւնը կատարելագործելու համար, մարմնոյն մէջ կը վերագառնայ : Թուլէմբրի և ուրիշներ ընդունած են թէ ամորձիքներու մէջ պատրաստուած սերմը վերստին կը ծծուի մարմնէն : Ախտաբանական ուրիշ երեւոյթներ ալ ոյժ կու տան այս կարծիքին :

Նորդարար պիտի տեսնենք թէ, նոյն իսկ ամուսնացեալ վիճակի մէջ, ժուժկալութեան չափազանցութիւնը վնասակար է առողջութեան :

Հիւսիսային ցուրտ կլիմաներուն մէջ անկարելի չէ գտնել այնպիսի անձեր որ ամբողջ իրենց կեանքին մէջ ժուժկալ մնացած են : Կարելի է նաեւ գտնուիլ մէկ քանիներ ալ որ առանց վնասուելու կարենան վարել ամենախիստ ամուրիութիւն մը . բաց անուրանալի է թէ չափազանց ժուժկալութիւնը զանազան հիւանդութիւններ կը բերէ իւր հետ : — Որչա՛փ ձեր ամուրիներ կը նեղուին յառաջագեղձերու (քէսթանէճիք) եւ ամորձիքներու կարծրացումէ, կաթուածէ, ոտնացաւութենէ (նիքրիս), թուժքէ (մայասըլ), եւ քանի՛ քանիներ մինչեւ իսկ կը խենդեանան երբ մոլեգլին կերպով ինքզինքն զգացունող սեռային զրդումը անկարելի կ'ըլլայ գոհացունել : Ես տեսած եմ յոյժ գեղեցիկ օրիորդներ, որ թոշնած, խամրած են այդ պատճառաւ, որ հիւճախտէ, ծիրիչ նիհարութենէ, արիւնսթքութենէ, դաշտանի անկանոնութենէ, մաղասահոտութենէ ու քաղցկեղային ախտերէ մեռած են : Ասոր համար է որ, մեզ, մարդկանցս համար երջանիկ ամուսնութիւն մը զրախտ մ'ի՛ է երկրիս վրայ : Ամենէն շատ երկայնակեացները այն ամուսնացեալներու մէջ զըտնութեամբ մը ապրած են : Սիրոյ հեշտութիւնք վնասակար չեն ամուսնութեան մէջ . շատ հազուադիւր է որ ամուլք հիւանդացած ըլլան սէրը վայելած ըլլալնուն համար . միայն թէ չափա-

զանցութենէ զգուշանալու է : Վատառողջ, հիւանդոտ անձինք որ անյարմար են ամուսնութեան, անոնք եւս անյարմար չպիտի զգան ինքզինքնին այդ վայելքներուն, եւ երբ բնական զրգիւր մ'իսկ ունենան, անտարակոյս ինքզինքնին աւելի առողջ ու հանդիստ պիտի զգան եթէ գիտնան չափաւորութեամբ գոհացունել ընութեան պահանջումը :

* * *

Բունն սէր մը անկարելի է զիւրաւ զսպել . սաստիկ սէրը շատ հազուադէպ է որ անսայ բանաւարութեան ձայնին . երբեմն մահ իսկ կը պատճառէ : Երիտասարդ սպային մէկը սիրահարած էր օրիորդի մը . խենդի պէս կը սիրէր զանի : Գիշեր մը ժամադրութիւն կ'ընեն . օրիորդն ուշանալով, երիտասարդը չափազանց կը յուզուի . բազկերակը կը սկսի արագապէս զարնել . արեան տաքութիւնը չափազանց կը բարձրանայ . աչքերը կը սկսին փայլիլ եւ շնչառութիւնն ալ մերթ ընդ մերթ կը բռնուի . . . եւ ահա վերջապէս կը հասնի սիրունին, երիտասարդը անոր վրայ կը ցատքէ, կը գրկէ զանի ամենաբուռն ուժգնութեամբ, ցաւազին հառաչ մը կ'արձակէ ու . . . կ'անշնչանայ : Հանրածանօթ է նաեւ պատահարն այն երիտասարդին որ Օր. Կառուսինի համար բունն սիրով կը սոչորուէր, բայց օրիորդէն չսիրուելուն համար օրին մէկը անոր ոտքն իյնալով հոգին աւանդեց :

Անասուններ կան, ինչպէս՝ շունը, որոնց

խածուածքը թունաւոր է, կ'ըսեն, եթէ իրենց մերձաւորութեան մէջ խանդարուին: Եւ 70 տարեկան ձեր մը դարմանած եմ, որ մերձաւորութեան մէջ խանդարուած ըլլալուն պատճառաւ ճննդագործարանի յոյժ ցաւագլին հիւանդութեամբ մը կը տառապէր: Արիւնը ցամքած ձեր մը եթէ այդչափ դանդաղէս հիւանդանայ, հապա ինչեր չըլլար արիւնով եւ հիւթով զեղուն երիտասարդն այդ պարագային մէջ: — Արճամարհուած սէրը ո՛չ միայն լսկ մէկ քանի ընտանիքներու, այլ երկիրներու, ժողովուրդներու երջանկութիւնը կը խանդարէ:

* * *

Պէրլինցի Գոսպար անուն ըժշկին ծանօթագրութեանց նայելով, ամուսնացեալ եւ ամուրի անձանց մէջ տեղի ունեցած մահերու թիւը սապէս է.

30 էն 35 տարեկան հասակի մէջ մեռնողներուն 27%⁰ը ամուրի եւ 18%⁰ը ամուսնացեալ են: — 100 ամուրիներէն միայն 41 անձ կը հասնին մինչեւ 40 տարեկան հասակի. իսկ ամուսնացեալներէն՝ 78: Տարիքոտ անձանց մէջ այս տարբերութիւնը աւելի յայտնապէս կ'երեւի. 60 տարեկան անձանց մէջ 22 ամուրիի դէմ 48 ամուսնացեալ կան. 70 տարեկաններուն 11ը ամուրի եւ 27ը ամուսնացեալ են. իսկ 80 ամեայ չորս արանց մէջ, միջին հաշուով, մէկը միայն ամուրի է: — Կատարեալ հանգիստն ու կանոնաւոր կենցաղաւարութիւնը, զոր ամուսնութիւնը

իւր հետ կը բերէ, որչափ որ մեծ ազդեցութիւն ունին ամուսնացեալ անձանց մահացութեան թիւին վրայ, այսու ամենայնիւ առողջութեան պահպանման համար դնահատելի պատճառ մ'է նաեւ սեռային գործունէութեան այն կանոնաւորութիւնը զոր կ'ընծայէ ամուսնութիւնը:

§ 25. Այժմ՝ անգամ մ'եւս յիշենք որ թէ՛ արական եւ թէ՛ իգական սեռերն իրենց համար որոշեալ ժամանակին մէջ արտաքսելու են իրենց ներքին յորդութիւնը: Գեղեցիկ սեռը արական սեռէն աւելի կը վեատուի խիստ ժուժկալութեան հետեւանքներէն, վասն զի իգական սեռը մարդկային ցեղին ամման համար առաւել եւս պէտք ունի իւր պահպանութեան. անամուսին մեալու յոռի հետեւանքները սաստկապէս կ'երեւին իւր վրայ:

Ինչպէս որ աղջկան մը կանխահաս զրգուցութիւնը իւր ամլութեան պատճառ կ'ըլլայ եւ մաղասահոտութեան կ'ենթարկէ զանի, եւ այս ալ այնպիսի հիւանդութիւն մ'է որ ժամանակ անցնելով հիմնապէս կը խանդարէ աղջկան առողջութիւնը, այնպէս ալ երբ աղջիկ մը չայիահաս ըլլայ եւ ամուսնանալու ժամանակն անցունէ ու չկատարէ բնութեան պահանջումը, նոյն չարեաց կ'ենթարկուի:

Բնութեան դատը շատ պարզ է այս պարագայիս մէջ: Սերնդագործական հիւթը եւք մը կը փնտռէ դուրս ելնելու եւ չի գտներ: Դրդումը նո-

բանոր գրգռութիւններ յառաջ կը բերէ . մարմինը չի կրնար գոհանալ . հոգին կը բորբոքի , երեւակայութիւնը կը զրգտի , երակներուն վրայ եղած ճնշումը այնչափ ուժգին կ'ըլլայ որ վերջապէս , գէթ Երկամարդուն քով , հեղուկը յորդմամբ կը պարպուի :

Բայց ընութեան այս գործողութիւնը իւր մէջ այնպիսի ուժգնութիւն մ'ունի , որչափ չէ՛ զուգաւորութեան ատեն . այն երակային անօթները ուրկէ կը պարպուի հեղուկը , չեն կրնար պէտք եղածին պէս վերադառնալ կծկուիլ , եւ հետեւապէս երբ այդ վիճակը շատ անգամ կրկնուի , յառաջ կու գայ այնպիսի թուլութիւն մը որ սերմնահոսումներ կը պատճառէ , եւ այսպէս՝ մարմնոյն լաւագոյն հիւթերը կը վասնուին :

Գիշերային սերմներթութիւնները շատ կը մնասեն մարմնոյ , մանաւանդ երբ յաճախակի տեղի ունենան , այն է՝ 1-2 անգամ : Իսկ երբ այդ հոսումները հազուադէպ են , մարմինը կը թեթեցունեն , եւ Հուֆէլանտի ու այլոց կարծեաց համեմատ , հիւանդութիւն իսկ չեն համարուիր : Այս մեծանուն բժիշկը իգական սեռին ամսական դաշտանին կը նմանցունէ այս հոսումը եւ կ'ըսէ թէ այդ մարդուն երբեմնակի սերմներթութիւնը զիւրատար կ'ընէ ժուժկալութիւնը : Սերմներթութիւնը սովորաբար հեշտագրգիռ երազէ մը ետքը տեղի կ'ունենայ : Իսկ երբ այդ հոսումները յաճախ վերակրկնուին ու զիջութեան կարգ անցնին , այն ատեն հիւանդութիւն կ'ըլլան ու կը նիհարցունեն մարմինը : Ասոր բուժմանը համար բժշկի մը խոր-

հուրդ հարցնելու է , վասն զի երբ այդ հիւանդագին վիճակը անինամ թողուի , այդ սխալ ուղղութեան կը հետեւին նաեւ մարմնոյ լաւագոյն հիւթերը , եւ այսու՝ ո՛չ միայն սերնդագործական կարողութիւնը կը կորսուի , այլ մարմինը կ'ընկճի ու կը ծիրի : — Այսպէս նաեւ ժամանակէն առաջ վերակառոյ կամ յորդառստա եւ ուժգին դաշտանն ալ անչափ մնասներ կը պատճառէ կնոջ , ամուլ կ'ընէ եւ վերջապէս գէպի գերեզման կ'առաջնորդէ :

Այս պարագային մէջ ճարտար բժշկի մը դարմաններով կազդուրուիլ ջանալու է :

Հուֆէլանտ գիշերային սերմներթութեան յաճախակի կրկնութեանց ատեն , որ ինչպէս րոինք հիւանդութիւն մ'է , սա հետեւեալ գեղազիլը կը անօրինէ .

Rec. Elixir acid. Halleri 15,0
Tinct. Chinae compos. 45,0

օրը երեք անգամ 50 կաթիլ առնելու է ասկէ ջուրով կամ որեւիցէ սունկի մը հոյսովը :

Ասկէ զատ , պաղ ջուրով լուալու է մէջքն ու ծննդագործարանները , եւ փոքր ինչ քափուրի ոգի քսելու է վրան :



Գ Լ Ո Ւ Խ Գ.

ՔԵ ԻՆՉՊԵՍ ԿԸ ԾՆԻ ՄԱՐԴ. — ԶԱՆԱԶԱՆ ԿԱՐԾԻՔՆԵՐ
ԵՒ ԱՍՈՆՑ ԶԱԻԱՆԱԿԱՆ ՀԵՏՅԻՈՒԹԻՒՆՆԵՐԸ

§ 26. Շատ վիճաբանութիւններ եղած են եւ կ'ըլլան զեռ մարդուս կազմուելու եւ ծնելու եղանակին վրայ : Բժիշկներ , անդամազնիւններ ու բնախոյզներ զբաղած են այդ խնդրով . մօտէն քննած են զայն եւ իրենց հետազօտութեանց վրայ յենլով , կամ իրենց երեւակայութեամբը մուրուռն՝ ենթադրութեանց , իմա՛ հաւանականութեանց վրայ հիմնուած կարծիքներ յայտնած են , որոնց մեծ մասն իրարու հակառակող , մէկզմէկ հերքող , խնդիրն աւելի եւս կնճոտած են :

§ 27. Նախ կը կարծուէր թէ արական սեռը միայն սերնդագործական կարողութիւն ունէր իւր մէջ , եւ իզակսն սեռը կրուորապէս ընդունելով առն պտուղն իւր մէջ , կը պահպանէր եւ կը հասունցունէր զայն :

Յետոյ կարծեցին նաեւ թէ կլինն ալ առն պէս ստեղծական հիւթ մ'ունի իւր մէջ , եւ արգանդին մէջ երկու հիւթերուն միացմամբն է որ կը կազմուի սաղմը , եւ հետեւապէս նոր էակի մը գոյութեան մէջ հաւասար բաժին ունին այդ եւ կլին :

Վերջապէս սերնդագործական հիւթ , կազմակերպելու կարողութիւն եւայլն բառեր էին որք կը գործածուէին իւր թէ գիտակցութեամբ խօսած

ըլլալու համար այդ խնդրոյն վրայ , եւ չըսելու համար թէ բան չեն գիտեր :

§ 28. Ապա , մանրագէտի միջոցաւ տեսան թէ արական սերմին մէջ շարժուն անասնիկներ կան , եւ կարծեցին թէ ադոնք մարդկային փոքրիկ էակներ են , որք տօրիթի կը սպասէին պէտք եղած տեղը հասնելով հոն իրենց փոքրիկ կեանքն ընդունելու եւ ապրելու համար . եւ որովհետեւ այդ անասնիկները շատ բազմաթիւ էին , ուստի պէտք էր որ հազարաւոր փոքրիկ մարդեր ոչնչանային , անոնցմէ մէկն ապրելու բազդ ունենալէ առաջ : Թէ՛ այս պատճառաւ եւ թէ՛ այն տեսութեամբ թէ ուրիշ հեղուկներու մէջ ալ այսպիսի շարժուն մարմիններ շատ կան , մարդ մէկդէ թողուց այդ ենթադրութիւնը եւ դարձեալ մնաց նախկին անստուգութեան մէջ :

§ 29. Մնդագործութեան ուրիշ քօտի մ'ալ կար , ըստ որում կը կարծուէր թէ մարդկային ցեղը միշտ մանր սերմնիկներով՝ մէկը միւսին մէջ պարփակուած ըլլար : Բայց որպիսի անհնարին փոքրութեանց մէջ , աշխարհիս սկիզբէն ի վեր , միլիոններով կորսուած ըլլալու էին այդ սերմնիկները , եթէ ընդունինք թէ ամբողջ մարդկային ցեղը մէկ մարդէ յառաջ եկած է . հիւլէի մը միլիոներորդ մասին միլիոններորդ մասն միջոց մ'եղած ըլլալու էր , որուն մէջ մարդու մը սերմը գրուած ըլլար :

§ 30. Ուրիշներ ալ՝ ընդունելով թէ գեղեցիկ սեռը շատ ձուիկներ ունի իւր մէջ , կլինը համարեցին մարդուն կազմակերպման պատճառը : Ձուարան ըսուածն էր այդ , որ ձուիկները արգան-

գին մէջ կը տանի եւ ուր մարդ կազմուելիք սաղմն իւր ամենափոքր մասերովը պատրաստ կայ : Այս մասին զանազան կարծիքներ ե հերձուածներ կային, զոր հոս ցուցունել աւելորդ կը սեպենք :

§ 31. Ամէն ժամանակներու բժշկաց , ան-
զամազնիններու եւ բնախոյզներու փորձառութե-
նէն գրեթէ ապահովապէս կ'երեւի թէ՛ մօր մէջ ,
այսինքն անոր ձուարանին մէջ գտնուած ձուիկ-
ներուն մէջ , ի բնէ զրուած է մարդ ըլլալու նախ-
նական նիւթը , այսինքն երբ աղջիկը չափահաս
ըլլայ ու կատարելագործուի , ձուիկին մէջ մարդ
էակին մէկ նոր ձեւը կը կազմուի , ա՛յնպէս՝ ինչ-
պէս որ էր առաջ ինքն իւր մօր մէջ :

Բայց այս այնպէս հասկնալու չէ որպէս թէ
մարդկային մարմնոյն ամէն մասերը փոքր ձեւով
ի վաղուց ձուիկին մէջ պատրաստ կը գտնուին .
այլ՝ լոյծ տարր մը կայ որ երբ շարժման մէջ զրուի,
ամէն մասերը տակաւ , բնական օրինաց համա-
ձայն , կը կազմուին եւ ադիէ մարդ մը յառաջ կու
գայ . եւ այդ լոյծ տարրին ներքին շարժումը յառաջ
կու գայ այս մարդուն մէջ գտնուած սերմին միջո-
ցաւ . առանց առն գործակցութեան բացարձակա-
պէս անկարելի է այդ :

§ 32. Մարդկային մարմնոյն մէջ սեղի ու-
նեցած այս գործողութիւնն ըմբռնելու համար յար-
մարագոյն է միտք բերել գարնան ջերմ անձրեւը
որ գրեթէ վայրկենաբար տեսակ մը շարժման մէջ
կը դնէ հողին աակ գտնուած հունտերը . այդ անձ-
րեւն է որ կ'ուռեցունէ զանոնք , որով արմատին
երկու կողմերէն զէպի վեր եւ զէպի վար կը մեծ-

նան եւ այնպէս շքեղ ու մեծ վայելուչ կ'արգասա-
ւորին : Ապա այս մարդը դրուած է ձուիկին մէջ
որ կրնայ , նպատակաւոր պարագաներու բերմամբ ,
կատարեալ անհոտ մը կազմակերպուիլ . եւ այդ
ստեղծիչ գորութիւնը զետեղուած է , ո՛վ սքանչե-
լիք , այդ ձուիկին մէջ եւ հոն կը նիւրէ յարատեւ,
սպասելով այն վայրկեանին յորում գաղտնախոր-
հուրդ ձեռք մը շարժէ զինքն : Այդ ատեն շղթա-
ները կ'անհետանան , կապերը կը քակուին եւ հոն
ուր անշուշտ հանդարտութիւն մը , անապատական
լուսթիւն կը տիրէր , ա՛նա՛ , յանկարծ կենդանու-
թիւն կ'երեւի : Այդ դիւթական ձեռքը որ ընդար-
մացած միայն , կարծր նիւթին կեանք կու տայ ,
արուին սերմն է : Սերմին մէջ կայ այն գորաւոր
յատկութիւնը՝ շարժումը յորում կը գտնուի ինքն
իսկ եւ զոր մանրադէտով կարելի է դիւրաւ տես-
նել . շարժում մը որ այդ սերմին միջոցաւ կը հա-
զորդուի ուրիշ շատ մը գործարանական հիւսկէն .
ներու : Այսպէս , ա՛նա , կը ծագի նաեւ կենսատու
շարժումը թմրած ձուիկին մէջ : Սակայն ձուիկն
ու սերմը չեն այն շինուածոյ նիւթն ուրկէ նոր էակ
մը կը կազմուի . ձուիկը նիւթ է միայն , շինութեան
քար . իսկ սերմը . ընդհակառակն , ստեղծիչ ոգի,
որ անձեւ նիւթէն գործարանաւոր կատարեալ էակ
մը յառաջ կը բերէ : Սա իւր ստեղծական գորու-
թիւնն ի գործ դնելէնն ետքը ինք կը չքանայ ,
ճիշդ այն եղանակաւ , ինչպէս՝ անգործածելի
դարձած ամէն գործարանաւոր մարմին : Ինչպէս
որ ջիղն , երբ կորսնցունէ իւր զգայնութիւնը եւ
չկրնայ շարժում յառաջ բերել անկարող ըլլայ

գործելու, ճարպին մէջ կ'անհետանայ, այդպէս ալ սերմը միեւնոյն եղանակաւ կը չքանայ երբ կնոջ ձուկին մէջ կատարէ իւր պաշտօնը :

§ 33. Մարդ էակը կազմելու յատկացեալ — բայց ո՛չ նախապէս զայն իւր մէջ պարունակող — ձուկին մէջ այդ շարժումը սկսելուն պէս սաղմը կը սկսի արձակել իւր փոքրիկ արմատները արգանդին մէջ և այդ տեղէն կընդունի իրեն պէտք եղած սնունդը, որով նախ և առաջ կը կազմուի ուղեղը և ապա մարմնոյն միւս մասերը : Սաղմը որ ի սկզբան լողացող փոքրիկ ձուկի մը երեւոյթն ունէր, այժմ կը սկսի գոյացունել սրախ տեղին վրայ արեան կաթիլ մը, ուրկէ տակաւ կը կազմուի սիրտը :

§ 34. Արեան այս փոքրիկ կէտէն, որուն մէջ քիչ ժամանակէն զգալի կ'ըլլայ երակի զարկը, հետզհետէ կը կազմուին երակները. նախ՝ կարմիր գիծերու պէս և ապա կանոնաւոր խողովակներ : Սաղմին կեանքը գոյութիւն կ'ունենայ այն ատեն երբ երակազարկն սկսի. վասն զի այդ անզգալի զարկերէն է որ կը կազմուին երակները փոքրիկ և դեռ լոյժ մարմնոյն մէջ, Արեան առաջին կէտը շարժում մ'ունի արդէն, և այդ շարժումը է որ երակային դրութիւնը պզտիկ մարդուն մէջ տակաւ կը կազմուի ու կը զարգանայ : Այդ վայրկեանէն սկսեալ ամբողջ մարմինը կը սկսի աճիլ, թերեւս հաճելի ըլլար ադոր մէկ մանրամասն նկարագրութիւնն ընել հոս, բայց անյարմար կը համարիմ զայն :

Սխալ է այն կարծիքը թէ սաղմը այն ատեն

կը սկսի ապրիլ երբ մայրը կը զգայ անոր շարժումը. արդէն կեանք ունի ան. բայց երբ այնչափ զօրանայ որ իւր բնակարանին արտաքին պատերը շարժել կարենայ, այն ատեն զգալի կ'ըլլան աղոնք :

Սաղմին ոսկորները չիւրեղանման են, կեղրոնախոյս ճառագայթներու պէս ամէն կողմ կը տարածուին : Այս ամէնը նախ մածուածանման, ապա՝ կռճկանման ըլլալով, վերապէս ոսկոր կ'ըլլայ : Սաղմին բազուկներն ու սրունքները ճիւղերու պէս կ'աճին և այդ աստիճանական կերպարանաւորումէն է որ կը ծագին զանազան տճեւութիւնք, այսինքն այս կամ այն անդամին պակասութիւնը, որ կը տեսնուին նորածիններուն վրայ երբեմն :

Հոս չեմ ուզեր խօսիլ այն արտաքին պատճառներուն այսինքն ճնշման, բախման կամ անկման ներգործութեանց վրայ, որք նոյնպէս կրնան մնասել սաղմին. այլ կը կարծեմ և ապահով իսկ եմ թէ ինչպէս որ մենք յանկարծական վախով մը ցնցում մը կ'ունենանք մեր որեւրցէ մէկ անդամին վրայ, որ կատարելապէս զգայաղիրկ կ'երեւի մեզ, և ինչպէս որ յանկարծական սասանում մը մահու դալուկը կը պատճառէ մեզ, այնպէս ալ հոգեկան սաստիկ յուզում մը, ցնցում մը նոյն ազդեցութիւնն ունի թէ՛ մօրը մարմնոյն և թէ՛ սաղմին վրայ. և անոնք որ երախային վրայ տեսնուած ծննդական կերպ կերպ նշաններուն պատճառը մօրը կրած այդ յուզումները չէ կ'ըսեն, հակառակն հաստատելու ուրիշ հիմնաւոր պատճառ մը չ'ունին : — Այս մասին աւելի երկար գրելն անյարմար է գրքիս նպատակին :

§ 35. Առանց անդամազննական բացատրութեանց մէջ մտնելու և այս մասին ցուցուած զանազան կարծիքներով ընթերցողին միտքը խճողելու, բաւական է, մարդկային մարմնոյն կազմաւորումը գաղափարելու համար, գիտնալ թէ նորածինը հաւկիթին մէջէն ելած վառեակին կը նմանի, սա՛ տարբերութեամբ միայն որ հաւկիթը իւր սաղմին կազմաւորման համար պէտք եղած հիւթն իւր մէջ ունի, իսկ մարդկային սաղմը զինքն յղացող արգանդէն կ'ընդունի իրեն պէտք եղած սննդական հիւթը *):

Գ Լ Ո Ւ Խ Գ .

ՅԷ ՄՈՐԴ Ե՞ՐԸ ԿՐՆԱՅ ԳՈՂՅՈՒՆՆԵԼ ՍԵՐՆԴՈՐՈՒԹԵԱՆ
ԴՐԴՈՒՄԸ՝ ԱՌԱՆՑ ՎՆԱՍԵԼՈՒ ԱՆՁԻՆ

§ 36. Արդէն ըսած ենք թէ մեր առողջութեան ինչպէս նաև մարդկանց բազմանալուն համար պէտք եղած հիւթին պահպանումն այնչափ կարեւոր է, որչափ՝ անոր արտահանումը, երբ այդ հիւթն առատ ըլլայ:

Խնդիր է թէ այս հիւթը ե՞րբ կ'առատանայ այնչափ որ դուրս հանել պէտք ըլլայ, կամ, սանկ ըսենք երկու սեռերն ալ ե՞րբ իրաւունք կ'ունենան սեռային յարաբերութեան հաճոյքը վայելելու:

§ 37. Այս կէտիս վրայ կարծիքները բաւական տարբեր են: Ո՛հանք ըսած են թէ այրը 30 տարեկան ըլլալէն ետքը պարտի ամուսնանալ. ուրիշներ ալ, որոնց մէջ կը գտնուին նոր հեղինակներ, կ'ըսեն թէ գեղեցիկ սեռը 18-20, իսկ արական սեռը 20-24 տարեկան հասակի մէջ պարտին ամուսնանալ:

Իսկ ես կ'ըսեմ թէ այս բանիս միակ կանոնը մարմնոյն զօրութեան և մարդուս կենցաղավարու-

*) Հաւկիթը նմանութիւն մ'է որ արուեստին անտեղեակներուն շատ կ'յարմարի անասնոյ բարձրագոյն կարգին ծագումն ու զարգացումն գաղափարելու համար: Թող ներուի ինձ այս առթիւ ներկայացունել գիտական նորագոյն փորձերուն արդիւնքը: Հաւկիթը նման է կնոջ ձուկին, բայց մերձաւորութենէ ետքի՝ արգասաւոր ձուկին: Հաւերուն մէջ, մերձաւորութեամբ, սերմը կը տարածուի և միեւնոյն ժամանակ բազում հաւկիթներ կ'արգասաւորէ: Հաւուն ամած ձուին մէջ արական սերմին ներգործութիւնը եղած է արդէն երբ մանրադէտով քննուի այդ ձուն, ղեղնուցին մէջ յատկապէս ձուկնուցում մաս մը կայ որ ձուածիլ կը կոչուի: Հաւկիթին մէջ այդ փոքրիկ մասն է միայն ձու. ղեղնուցը և սպիտակուցը վառեակ-սաղմին սնունդին յատկացուած են. այսինքն մօրը (հաւուն) արդանդին մէջ, ձուին վրայ, սերմին ներգործութիւնն սկսած և առժամանակեայ կերպով ընդհատուած է, բայց չէ անհետացած. Եւ երբ իրեն յարմար վիճակի մը մէջ գտնուի, այսինքն իրեն համար պէտք եղած ջերմութեան մէջ դրուի, այն ատեն անմիջապէս կը սկսի այդ ընդհատուած ներգործութիւնը դարձեալ շարունակուիլ: Բայց այդ ատեն այդ ձուն մայր մը չունի որ զայն մինչև ծնելու վայրկեանը սնուցանէ շարունակ իւր արիւնովը, ինչպէս է մարդկային սաղմինը: Ասոր համար վառեակ-սաղմը միանգամ ընդ միշտ կ'ընդունի իւր մօրմէն՝ պէտք եղած պաշարը, որպէս զի

սնանի մինչև իւր կատարեալ զարգացումը: Հաւկիթին շուրջը գտնուած կարծր կեղեւը անոր համար տրուած է իրեն, որպէս զի իւր զարգացման ատեն մայրական արգանդի խաղաղութիւնը վայելէ: Ասոր համար է նաև որ հաւկիթը այնչափ մեծ, իսկ կնոջ ձուկիլը այնչափ փոքր է:

թեան եղանակին մէջ կը կայանայ : — Մարդ իւր ցեղն անեցունելու խնդրոյն վրայ խորհելէ առաջ պէտք է որ ինքզինքը կատարելագործէ :

Երիտասարդը — ինչպէս նաեւ օրիորդը — կատարելագործեալ չի համարուիր երբ նոր մարդու մը կազմութեան համար պէտք եղած փոփոխութիւնները երեւին իւր վրայ . երբ չափահասութեան ամէն յայտնի նշաններն երեւան գան իւր վրայ . — այդ վիճակը ապացոյց մ'է լոկ թէ մարմինը նոր սկսած է կատարելագործուիլ և դեռ կը պակսի իրեն . իւր նմանն յառաջ բերելու կարողութիւնը :

Մարդս , իրրեւ տեսակարար , այսինքն իւր ցեղն անեցունելու գործին մէջ , միւս ամէն կենդանի արարածոց պէս անասնական է : Միայն թէ մարդ պարտի ամուսնութիւնը երջանիկ ընելու համար այնպիսի անհասունք ընտրել , որք հոգ չէ թէ տեւական գեղեցկութիւն մը չունենան , բայց պէտք է որ տեւական առողջութեան տէր ըլլան : Չափահաս օրիորդ մը որ ամուսնանալ կը փափաքի և առողջ ու զօրաւոր զաւակներ ունենալ կ'ուզէ , թոյ ընտրէ միջահասակ , զօրաւոր , թիկնեղ ու ջղապինդ երիտասարդ մը : Երկայնահասակ , վտիտ էրիկմարդերը տկար են սերնդագործութեան մէջ և շատ հազուադէպ է որ իրենց զաւակները մտացի ու բարեկազմ ըլլան : Խիտ և թուխ մազերն ու ծնօտամօրուսը , թանձր յօնքերը , երկայն ու լաւ ձեղքուած կոպերը , կլոր լեցուն ծնօտն ու այտերը ապացոյց են զօրաւոր ու բարեկազմ զաւակներ ծնուցանելու կարողութեան : Օրիորդք ամուս-

նոյ ընտրութեան ատեն դիտելու են նաեւ որ երիտասարդն ունենայ եռանդուն՝ կրակոտ աչքեր , կարմիր չրթունք , ոգեւոր ու արտայայտիչ դիմագիծեր , գոգաձեւ կուրծք , ոչ-կարճ և ոչ-երկայն պարանոց , ամուր և լայն ուսեր , կորուլի բազուկ , բարեձեւ փոր մը , որ նշան է զօրաւոր մարսողութեան և հետեւապէս՝ լաւ սերնդագործութեան : Չափազանց հաստ սրունքները յաճախ նշան են ոչ-զօրաւոր սերնդագործութեան . մանաւանդ՝ հաստաբազուկ ու շատ մարմնեղ անձինք սերնդագործելու կարողութեան մէջ քիչ մը ետ կը մնան : Անոնք որ իրենց երիտասարդութեան մէջ Աստղիկի ու Բագոսի տաճարներուն մէջ շուայտութիւններ ըրած են , շատ հազուադէպ է որ լաւ ու գործածելի ամուսիններ ըլլան :

Ազնիւ կեցուածք , յաղթ ու անբուսազրօսիկ քալուածք , և մարմնոյ շարժմանց մէջ նոյն իսկ դժուարին աշխատութեանց — դիւրաթեքութիւն ճշմարիտ ապացոյցներ են գործարանային առողջութեան : Ծարժումիին յամբ ու ծանր , և ձայներնին տկար այրերը վատառողջ կ'ըլլան , և տկար են նաեւ իրենց նկարագրին , ազդուութեան ու սեռային կարողութեան մէջ : Չափազանց նիւարութիւնը դժուարամարսութեան նշան է . բայց չափէն աւելի պնդակազմ և ուժեղ այրերն ալ հազուադէպ է որ կատարելապէս առողջ ու զօրաւոր ըլլան , մանաւանդ երբ մաղասոտ (պաղարիւն) են : Արիւնային խառնուածք ունեցող այրերը շատ կրակոտ կ'ըլլան սիրոյ մէջ . ասոնք իրենց դէմքի կարմիր գոյնովը , իրենց դիւրա-

չարժութեամբը, մտացի և շնորհալի բնաւորութեամբը նշանաւոր են թէեւ, բայց թեթեւամիտ, յեղյեգուկ ու հաճոյասէր կ'ըլլան:

Ջղային, տժգոյն ու տկարաբնոյթ այրերը — որք շատ դիւրազգած են ու ջղագրգիւ — լաւ էրիկ չեն կրնար ըլլալ. հսկայ ու ըմբշական երեւոյթ մ'ունին, բայց գեղեցիկ սեռին համար չունին այնչափ շատ հակում: Մաղձային խառնուածքի տէր անձինք, որ յայտնի են իրենց թխաբոյն մազովն ու մորթովը, նախանձոտ, յամառ, փառասէր ու տուփոտ կ'ըլլան:

Առողջ զաւակ ունենալու յարմարագոյն տարիքը արանց համար 20էն մինչեւ 30 տարեկան հասակն է:

Լաւ էրիկ մ'ըլլալու համար պէտք եղած յատկութիւնները ինչպէս նաեւ անյարմար վիճակները յայտնելէ ետքը, անցնինք գեղեցիկ սեռին:

Մեծ գլուխ կիները տիրելուսէր են: Երիտասարդը թող ընտրէ այնպիսի օրիորդ մը իրեն ամուսին՝ որ իւր գլխուն բռնուածքին վրայ ազնուութեան ու պարկեշտութեան հով մը ունենայ. մանաւանդ երբ այդ գլխուն մազերը խիտ, երկայն, փափուկ և շագանակագոյն են: Այդպիսի կիներ քաղցրաբարոյ ըլլալով հանդերձ կամքի հաստատութիւն ալ ունին: Գեղեցիկ խարտեաշներն ալ սակայն պէտք չէ մէկդի թողուլ, վամնդի դիւրաբարոյութիւնը, հլութիւնն ու անձնուիրութիւնը իրենց գլխաւոր յատկութիւններն են: —

Թուխ ու սեւ մազեր ունեցող կիները մտացի, կրակոտ ու եռանդուն կ'ըլլան. իսկ ընդհակառակն թխամորթ վայրագ և աւելի հակամետ են իշխողութեան: Շիկահերք գեղեցիկ զաւակներ ծնանելու անյարմար են:

Խարտիշահերք մեծ մասամբ ծաւի են, իսկ թխահերք գորշ կամ սեւ աչուի: Աչքը հայելին է հոգւոյն. ուստի եռանդուն, մտացի և փափկութիւն ու պարկեշտութիւն արտայայտող աչքեր փնտռելու է: Աչքերու շուրջը կապոյտ շրջանակներ ունեցող կին մը կամ օրիորդ մը կիրքի, ներքին թախծութեան տէր և շուայտութեան միտեալ կ'ըլլայ, եթէ այդ կապոյտ շրջանակները ապաքինեալ հիւանդութեան մը մնացորդ հետեւանքը չեն: Կին մը պէտք է որ վարդագոյն փոքրիկ բերան մ'ունենայ. գունաթափ շուրթներ, գունատ լինդրեր վատառողջութեան յայտարար նշաններ են:

Պեխաւոր կիները շատ հակամէտ են հեշտանքի. չունին բնաւորութեան քաղցրութիւն, որ զարդն է կին արարածին:

Ձուածեւ դէմք մը, ոչ-ցցոսկրուտ և խոռոչաւոր, գլխաւոր պայմանն է իզական սեռի գեղեցկութեան: Դուրս ցցուած ծնօտ մը՝ հակառակ է գեղեցկութեան, ինչպէս նաեւ՝ շատ պիրկ դիմագիծերը: Շատ երկայն վիզ մը, — մանաւանդ երբ վտիտ ու խորդուբորդ ըլլայ — սիրուն կլորիկութիւն մը չկազմելէ զատ, խոչափողին դիրքը կը պարզէ յայտնապէս, աչքի աղէկ չերեւիր: Նոյնպէս՝ ընդունելի չէ երբ յուզման ատեն պարանոցի մկաններն ու երակներն ուռին. այդ ալ նշան է կնոջ

կատալի բարկացող մ'ըլլալուն : Կնոջ նեղ կուրծքը , ցցուած ուսերն ու ազդրերը նշան են թէ այդպիսին գեղեցիկ զաւակ չի ծնիր և թէ հակամիտու թիւն ունի դժնդակ հիւանդութեան և չի կրնար դիմանալ տղաբերքի : Տախակ ու ներս ինկած փոր մը նշան է յոտի մարսողութեան , և՛ սերնդագործութեան նուազ կարողութեան : Ընդհակառակն , լայն ազդրերով , զօրաւոր սրունքներով , լեցուն ծիծերով , հաստ բազուկներով , նուրբ ու կլորիկ կին մը ընտրելու է մարդ ամուսնանալու ատեն . բայց պէտք չէ որ այդ ալ շատ խոշոր ըլլայ , վասն զի նախ՝ խոշորութիւնը հակառակ է գեղեցկութեան , երկրորդ՝ այդպիսին դժուար կը տղաբերէ : Իսկ եթէ շատ փոքրամարմին ըլլայ , պակասաւոր տղայ կը ծնի յաճախ : Միջին հասակը լաւագոյնն է :

Օրիորդաց համար ամուսնանալու յարմարագոյն տարիքն է 18 էն մինչև 30 : Կիները կարող են զաւակ ծնանիլ մինչև 40 և երբեմն ալ մինչև 50 տարեկան եղած ատեննին , երբ , սովորապէս , դաշտանը կը դադրի :

Վերոյիշեալներէն զատ կնոջական գեղեցկութեան կը պատկանին նաև փոքր , սիրուն , ձեւաւոր ոտքերը : Այսպէս՝ երբ մարմնոյ սիրուն լեցունութիւն մը ունեցող անդամները , գեղեցիկ դէմքի մը և բարեվայելութեան ու շնորհքի հետ միանան , և միւս կողմանէ քաղցր բնաւորութիւն և եռանդուն աշխատութիւն մը ևն . կազմեն կնոջ նկարագիրը , այդպիսին գեղեցիկ և ընդունելի ամուսին մը կրնայ ըլլալ :

Երկու սեռին համար ալ չափահասութեան առաջին նշանները , ինչպէս ըսինք , կը ցուցնեն թէ այդպիսիք նոր կը սկսին ունենալ իրենց նման յառաջ բերելու կարողութիւնը :

Արական սեռմին գոյութիւնը , նոյն իսկ աղօր պատահական կորուստը , ապացոյց չէ թէ այդ հիւթն առատ ու զեղուն է և դուրս ելնելու պէտք ունի : Հիւանդութեամբ ալ կարելի է դուրս կ'ելնէ և գրգռութիւնն ալ կրնայ ժամանակէն առաջ գոյացունել զայդ :

Օրիորդի մը արրունքի սկզբնաւորութիւնը պէտք չէ սեռային դրդումը գոհացունելու պէտքի մը նշանը համարել՝ եթէ գրգռութիւն իսկ ըլլայ , վասն զի վերոյիշեալ պատճառով ալ կրնայ ըլլալ այդ : Արրունքի երեւումը նշան մ'է թէ բնութիւնն ՍԿՍԱԾ է աղջկան սերնդագործելու կարողութիւնը կատարելագործել :

§ 38. Կը խոստովանիմ որ եթէ երկրագնդիս ամբողջ բնակիչները միեւնոյն կանոնի մը համաձայն ապրէին , թերեւս , առանց բացառութեան , կարելի ըլլար ընդունիլ որեւիցէ որոշ տարիք մը սեռային դրդումը գոհացունելու համար : Բայց որովհետև կենցաղավարութեան եղանակները կը տարբերին իրարմէ , ուստի պէտք կ'ըլլայ նկատողութեան առնուլ զանոնք : Դաստիարակութեան տարբեր եղանակներն ալ այս մասին մեծ ազդեցութիւն ունին :

Նոյն իսկ մարդուս ստեղծման մէջ բնութեան ընթացքն այնչափ տարբեր է , որ այժմ գրեթէ անկարելի է ըսել թէ այս կամ այն տարիքն է չա-

փահասութեան տարիքը : Արբունքի երեւումն իսկ շատ կը տարբերի : Աղջկանց ումանց վրայ 12րդ տարիքին մէջ երեւան կուգայ այդ , մինչդեռ ուրիշներ 17 և 18 տարիքներուն մէջ ի գո՛ւր կը սպասեն անոր երեւման : Մանչերն աւելի կանուխ կը գգան արբունքի նշանները :

§ 39. Հոս , առանց մտնելու բարոյական և անբարոյական պատճառներու մէջ , պատշաճ կը համարիմ պարզապէս ըսել թէ աղջիկ մը իւր արբունքէն , այսինքն դաշտանի սկսելէն երկու տարի ետքը կարող է ամուսնանալ և ծննդագործել առանց վնասելու իւր անձին և իւր զաւակին : Բայց չմոռնամ ըսել թէ ասիկա առողջ աղջկանց համար է . օրիորդներ կան որք իրենց տղայ հասակին մէջ անլնական հոսումներ կ'ունենան . այդպիսիք սովորապէս ժամանակէն առաջ կը դաշտանաւորին , վասն զի բնութիւնը այդ ճամբով ուրիշ անբնական վիճակներ հեռացունել կ'ուզէ : Այդպիսիք տարիներ ընդերկար վատառողջ կը մնան և սովորապէս սեռային հասունութեան համար պէտք եղած ուրիշ բաներն ալ կը պակսին իրենց , զ. օ. ծիծերու բարգաւաճումը , և այլն :

Ամէն կերպով կատարելագործուած օրիորդը միայն — պէտք է աւելցունել նաև մարմնական չափաւոր լեցունութիւն մը և մասնաւորապէս՝ կուրծքերու բարգաւաճումը — կրնայ իւր դաշտանի սկզբնաւորութենէն երկու տարի ետքը ամուսնական հաճոյից վայելքին իրաւունք ունենալ և կատարել այն պարտաւորութիւնները , զորս ամուսնութիւնը իւր հետ կը բերէ :

§ 40. Արական սեռին համար շատ դժուար է որոշել այս ժամանակը , որովհետև երիտասարդ մը նախ ուրիշ այնպիսի հոգեր ունի զորս չունի օրիորդը , այսինքն իւր կրնն ու զաւակները սնուցանելու հոգը . վասն զի երիտասարդը իւր գործին ու աշխատանքին համար — ի՛նչ դէրքի մէջ որ գտնուի — ոյժի , կատարելագործութեան և կըրթութեան պէտք ունի և բնականաբար չի կրնար առնուազն 20 տարեկան ըլլալէն առաջ ամուսնանալ , եթէ չուզեր վրիպիլ իւր նպատակէն և վնասել իւր առողջութեան :

§ 41. Սակայն այս ամէն պարագաներու մէջ բացառութիւններ կը գտնուին . գեղջկական ժողովուրդները կրնան ընդերկար յետաձգել սեռային դրդման գոհացումը , վասն զի իրենց անհատնում աշխատութիւնը ժամանակ չի թողուր այդ բանին վրայ մտածելու , և երեւակայութեամբ կամ ինքնահնար գրգռութիւններով կանխահաս հասունութիւն մը գոյացունելու : Նոյնպէս չունին այն հրապուրիչ արդուզարդերը որով քաղաքաբնակ երկու սեռերը , մանաւանդ մեծ քաղաքներունը , զիրար փոխադարձաբար յանկուցանել կը ջանան : Այն թեթև դրդումը որ քաղաքաբնակաց համար գրեթէ անհանդուրժելի է , գեղացին դիւրաւ անտես կ'ընէ , և կատարեալ չափահասութեան չափաւոր դրդումն է միայն որ վերջապէս կը մղէ զանի ձեռք բերել սեռային դրդման օրինաւոր ու պիտանի գոհացումը :

§ 42. Եթէ հարսնցու աղջկանց վիճակը քիչ մը մօտէն քննենք , պիտի տեսնենք որ տասն և

վեց տարեկան օրիորդ մը — որ իւր մէջ արդէն հասունցած կը զգայ տանտիկինն ու մայր ըլլալու համար պէտք եղած ամէն յատկութիւններն և կը գտնուի այնպիսի երիտասարդաց մէջ որք կը վառեն, կը բորբոքեն իւր երեւակայութիւնը — անոր համար չուզուիր ամուսնացունել, որովհետև 18 կամ 20 տարեկան չէ դեռ : Աղջկան իրաւունքներուն վրայ գարշելի բռնաբարում մ'է այդ . օրիորդն իւր պահանջումները եթէ ապօրէն ճամբով գործադրէ, այնչափ պատժապարտ չ'ըլլար, որչափ անոնք՝ որ մեղադրելի եղանակաւ կը ջախջախեն անոր իրաւունքները :

Այսպիսի պարագայի մը մէջ աղջկան տէրը պէտք է որ պարկեշտ ու յարմար երիտասարդի մը հետ ամուսնացունէ զանի, առանց սպասելու վայրուն փեսացուի մը : Իսկ միւս կողմանէ, շատ անմտօրէն վարուած կ'ըլլայ այն աղջիկն ալ որ բացարձակապէս ամուսնանալ կ'ուզէ, և որո՛ւ հետ որ ըլլայ յանձն կ'անուսնանալ, առանց յարգելու ուղիղ առարկութիւններն այն անձին որ իւր վրայ որեւիցէ իրաւունք մ'ունի :

§ 43. Ամուսնութիւնը ուշացունող ուրիշ պատճառ մ'ալ մարմնոյն վատառողջութիւնն է . մասնաւորապէս ջղային տկարութիւնը՝ որուն ենթարկուած կը տեսնեմ, յաճախ, դեռատի օրիորդները, և ասոր ալ ներգործութիւնը միայն յղութեան վրայ չէ, վասն զի կիներ անգամ մը յլի մնալէն ետքը հետեւանքը միշտ առողջարար կ'ըլլայ մարմնոյն համար, որովհետև ես այնպէս կը հաւատամ թէ յարմար տարիքին մէջ տեղի ունե-

ցած յղութիւնն ու տղաբերքը կը նպաստեն մարմնոյն կատարելագործուելուն : Միայն թէ չի վախցո՛ւիր որ սեռային նորամուտ յարաբերութիւն մը, հաճոյքի վայելում մը ակնկալուած հետեւանքն ունենալու տեղ հակառակ արդիւնք մը յառաջ բերէ, այսինքն գերագրգռութիւնը : Եւ ասիկա կրակին վրայ իւղ լեցունելու չի նմանի՛ր : Ջղային կանանց հետ շատ յարաբերութիւն ունեցո՛ղ բռնիկը գիտէ թէ այդպիսի սխալի մը հետեւանքը որչա՛փ ծանր կ'ըլլայ : Ջղային կանայք, որոնց մեծագոյն մասը չափազանց տկար են, խղճի մտօք քննել տալու են ինքզինքնին, հասկնալու համար թէ նոր գրգռութիւն մը իրենց համար առողջարար թէ անյարմար կ'ըլլայ : Իրենց արդէն գրգռուն վիճակը կը մեղմացո՛ւնէ, թէ՛ ընդհակառակն՝ աւելի կը սաստկացունէ : Մեր ժամանակին մէջ, յորում մտաւորական զարգացման տէր ու հեշտախափ կերեւակայութեամբ օժտուած աղջիկն յաճախ միօրինակ ամուսնութեան մը մէջ մտնել պարտի, սեռային վերահաս գործունէութիւնն այնչափ յառաջ կ'երթայ, որ կ'արթնցունէ նիրհող յամառ հիւանդութիւնները, և որոնց մէջ դիւրաւ կը կորսուի առողջութեան ու տոկալու կարողութեան վերջին մնացորդը : Ուստի, ծնողք իրենց ջղային ու դիւրագրգիռ աղջկանց ամուսնութեան ատեն զգուշութիւն ընելու են որ իրենց զաւկին կատարելապէս յարմար կերպով շարժին : Եթէ այդ աղջիկներն իրենց խելքին հաւանելով գործ տեսնեն, միշտ կը զղջան :

§ 44. Այս պարագային մէջ արտաքին ու

ներքին վիճակներն ու հանգամանքները այնչափ տարբեր են, որ և ո՛չ մէկ կերպով որոշեալ ամբիւրջ մը կրնայ հիմ բռնուիլ. մարմնոյ խառնուածքները այս խնդրոյն մէջ շատ կը տարբերին իրարմէ:

Օրիորդներ կան որ 16 տարեկան հասակնուն մէջ կը սկսին հետամտիլ բնական դրդումը գոհացունելու, մինչդեռ ուրիշներ ալ կան որ 20 տարեկան հասակի մէջ իսկ միտում չեն զգար ադոր համար: Այսպէս է նաև երիտասարդաց համար: Ճանչցած եմ երիտասարդներ 18, 20 տարեկան, որք գեղեցիկ սեռին նկատմամբ չէին զգար որ և իցէ հակում. ընդհակառակն ուրիշներ ալ՝ առանց թեւադրութեան, իրենց 16րդ տարեկան հասակին մէջ այդ դրդումն այնպիսի զօրեղապէս կը զգային որ անկարելի եղած էր զսպել:

§ 45. Այս առթիւ Ֆիզիքական խրատ մը տալ կ'ուզեմ: Մանչու կամ աղջկան մը հայրը կամ մայրը ջանալու են բարեկամական մտերմութիւն մը հաստատել իրենց զաւակաց հետ, որպէս զի կարելի ըլլայ, իբրև բարեկամ, գիտնալ անոնց փափաքներն ու միտումները: Եթէ ծնողք որևիցէ պատճառով չկրնան ընել զայս, թող ջանան իրենց զաւակին մէկ բարեկամին կամ բարեկամուհուն միջոցաւ, պատշաճութեան սահմանին մէջ, տեղեկանալ անոնց զգացումներն, որպէս զի իրենց զաւակաց համար պէտք եղածը կամ պէտք չեղածը գիտնալով գործեն:

§ 46. Այս բնական գործին կանուխէն սկսիլը որչափ վնասակար, այնչափ ալ վնասաբեր կրնայ ըլլալ անոր ընդերկար յապաղումը. և ինչպէս որ

ժամանակէն առաջ հասունցող օրիորդները, երբ շուտ ամուսնանան, — մանաւանդ երբ ամուլ մնան — իրենց տկարութեան պատճառաւ շատ դիւրաւ կ'ենթարկուին բազմատեսակ հիւանդութեանց, այնպէս ալ յարմար ժամանակին չամուսնացողները իրենց խառնուածքին հետեւանքն եղող սաստիկ գրգռութեանց եւ վերջապէս առկէ յառաջ գալիք անուղղակի անշօրութեան և ասոր բազմազան մահաբեր հետեւանքներուն կ'ենթարկուին:

Երջանիկ է այն որ ամէն բանի մէջ միջին վիճակ մը կը նախընտրէ. վասն զի ինչպէս այդ դրդման ժամանակէն առաջ գոհացումը, նոյնպէս ալ ադոր ընդերկար յապաղումը հաւասարապէս մեծ ազդեցութիւն ունի մնացորդ գործարանաց բարգաւաճման վրայ:

§ 47. Բայց ասոր համար ալ չափազանց մտահոգ ըլլալու չէ, եթէ պէտք ըլլայ իսկ քիչ մը երկար սպասել: Գիտնալու է թէ այդ յապաղումը վնասակար չէ առողջութեան այնչափ ատեն որ արեան զօրաւոր եռացումներ, անզսպելի դրդումներ և երազական փորձութեամբ յաճախակի սերմնահոսումներ տեղի չեն ունենար, և ուրիշ հիւանդային վիճակներ չեն երեւիր: Մինչև իսկ, եթէ սեռային դրդումը շատ ուժգնապէս երեւան գայ — և պարագաները չի ներեն կանոնաւորապէս գոհացունել զայն — կարելի է զանազան միջոցներով հոգին ու մարմինը ազատ պահել այդ նեղացուցիչ գաղափարէն: Առ այս օգտակար կրնան ըլլալ գլխաւորապէս սովորական զբաղմանց փոփոխութիւնը, նոյնպէս նաև բնակութեան տեղափոխ-

ութիւնը : Նոր նոր առարկաները կը զբաղեցունեն հոգին ու մարմինն այնչափ՝ որ մտազբազութեամբ կամ որ եւ իցէ ուշադրութեամբ կը գրաւունին մեր միտքն ու զգածումը , և սեռային խնդրոց վրայ չեն դառնար : Կանոնաւոր վիճակի մէջ , ամորձիքները այնչափ քիչ սերմ կ'արտադրեն , որչափ քիչ խորհինք սեռային խնդրոց վրայ :

Սեռային գրգման կանխահաս զարթնումը յառաջ կու գայ , յաճախ , ծննդագործարանաց հիւանդային գրգռութենէն : Ծճիներն ալ աղոր պատճառ կրնան ըլլալ : Յաճախ եւս խողատաւորութիւնն ալ աղոր պատճառ է : Ստորին որովայնի հիւանդային գրգռութիւնը , ընդածին ախտնդանոտութիւնն ու ջլագարութիւնը , ստորին որովայնի երակներուն հակաքնական արիւնշառութիւնը հիմ ու պատճառ են սեռային կանխահաս ու չափազանց գրգման , որուն դէմ , արդարեւ , շատ բան կարելի է ընել : Ֆիզիքական լաւ կրթութեան մը հետ , ֆիզիքական զօրացուցիչ վարժութիւն , շատ անդաւոր կերակուրներէ և ջեռուցիչ խմելիքներէ յետակացութիւն , գործունէութիւն ու աշխատութիւն , բաց օդոյ մէջ շատ շարժում , ճամբորդութիւն , մարմնական ճիգեր , նիւթական ու մտաւոր հաճոյից չափաւորութիւն , հոգեոյ դոհուհակութիւն ու խաղաղութիւն , ասոնցմէ զատ՝ ծովի կամ գետի մէջ լոգնալ , ծննդագործարանները պաղ ջուրով լուալ , պաղ ջուր խմելը մեծապէս կ'օգնեն ծննդագործարանաց հիւանդաբին գրգռութիւնը մեղմացունելու : Բայց երբ մարդ հետեւի այդ հակաքնական մարմաշուովին , և հեշտագրգիւ ու երեւ-

ակայական պատկերներով , լիտի վէպերով , նկարներու տեսքով զայն աւելի եւս գրգռէ , այն ատեն մարդ իւր կըքին գերի կ'ըլլայ և վերջապէս կ'ընկճի այն մոլութեանց տարափին տակ որք շուտով կը յարձակին իւր վրայ :

Գ Լ Ո Ւ Խ Ե .

ՔԵ ՄԱՐԳ ՈՐԶԱՓ ԿՐԵԱՅ ԳՈՂԱՅՈՒՆԵԼ ՍԵՌԱՅԻՆ ԳՐԳՈՒՄԸ .

ՔԵ ԵՐՐ ԼԱԻԱԳՈՅՆ Ե ԿԱՏԱՐԵԼ , ԵՒ ՔԵ՝ ԽՆՁ ԿԵՐԳՈՎ

ԿԱՏԱՐԵԼՈՒ Ե ԱՅԴ ԳՈՐԾԸ .

§ 48. Ինչպէս որ մարդ իւր առողջութիւնը պահպանելու և ամբողջ գործարանաւորութիւնն անվնաս , անվթար պահելու համար պարտի իւր մարմնական և նոյն իսկ մտաւորական աշխատութեանց մէջ չափ մը դնել , այնպէս ալ մեր խնդրոյ նիւթը կազմող սեռային յարաբերութեանց գործին մէջ պէտք է պահել այդ չափը , և այս՝ անհրաժեշտ պէտք մ'է , վասն զի վերոյիշեալ աշխատութիւններէն աւելի սերտ առընչութիւն ունի ընդհանուր առողջութեան հետ :

Ընդհանրապէս կարելի է ըսել թէ այս գործողութիւնն անվնաս է մարմնոյն համար , երբ կատարեալ առողջութեամբ գործադրուի , երբ գործողութենէն ետքը յոգնութիւն ու անհանգստութիւն չզգացուի :

§ 49. Սա հին առածը թէ *Omne animal post coitum triste*, ճշմարիտն ըսելով, մարդկան չի յարմարիր. վասն զի երբ այդ դրդման գոհացումը կատարեալ ոյժով, հաճելի առարկայի մը հետ և առ այդ պահանջելի հանգստութեամբ տեղի ունենայ, վայելել չուզուելիք հաճոյք մը չէ. մասնաւանդ թէ այդու կը զուարթանայ միտքն եւ կը փարատի տխրութիւնը:

Եւ ինչ պէտք կար որ բնութիւնը մարդուս բարձրագոյն երջանկութեան պատկանող մէկ դրդման գոհացումէն ետքն անհաճոյ զգացում մը դրած ըլլար. ինչո՞ւ համար իւր նմանը գոյացունելու աշխատութեան միացուցած ըլլար տխրութիւն մը, որ հաճոյից վայելքը դառնացունելէ զատ օգուտ մը պիտի չունենար:

Բայց սա՛ ալ ճշմարիտ է թէ երբ մարդ ինքզինքը չափազանց հեշտութեան կուտայ, մարմնոյ ու հոգւոյ վրայ կը հրաւիրէ այն անհաճոյ ներգործութիւնները զորս ամէն տեսակ չափազանցութիւն իւր հետ կը բերէ: Այս փնասակար ներգործութիւններն են, գլխաւորապէս, ջղաթուրութիւն ու սաստիկ գրգռութիւն, որք հետեւանք են ուտելու, խմելու, աշխատելու ինչպէս նաև մարմնական շարժման, զուարճութեան և մասնաւորապէս զգայական հաճոյից չափազանցութեան:

§ 50. Իբրև բժիշկ, բազմամեայ փորձառութեամբս ու հիւանդներէս շատերուն խոստովանութեամբը համոզուած եմ սա տարբերութեան գոյութեանը թէ մարդ կայ որ կարող է ամէն օր գոհացունել այդ դրդումը, այսինքն Չէ ժամը մի

անգամ, առանց թեթեւ փնաս մ'իսկ պատճառելու իւր առողջութեան, մինչդեռ, ընդհակառակն, մարդ ալ կայ որ շարժումն մէջ մէկ գոհացումն իսկ անհանգստութիւններ կը պատճառէ իրեն, սակայն թէ՛ մին և թէ՛ միւսն, ըստ երեւոյթին, առողջ անձեր են: Այս վիճակներուն պատճառը սա է թէ այդ տարբեր անձանց սերմնարաններու պաշարները տարբեր ուղղութիւններ ունին, և այդ է, ահա՛, որ կրնայ որոշել թէ սեռային դրդումը յաճախ թէ քիչ անգամ կարելի է գոհացունել: Գլխու, այսինքն մտաւորական աշխատութեամբ զբաղողը սովորաբար իւր սերմին մեծ քանակութիւնը դէպի գլուխն կը քաշէ, և այս պատճառաւ քիչ անգամ կը թեւադրուի սերնդագործութեան դրդումը գոհացունելու: Մոռնալու չէ սակայն թէ մեր խօսքը առողջ անձանց համար է միայն:

§ 51. Այժմ մէկ քանի կանոններ տալ կ'ուզեմ, հասկցունելու համար թէ ո՞րն է օգտակար չափաւորութիւնը:

Ա. Սեռային հաճոյից փափաքը շարժող ամէն գրգռութիւն սեռային դրդումը գոհացունելու թեւադրութիւն համարելու չէ: Եթէ այդ գրգռութիւնը արտաքին առարկայէ մը յառաջ եկած է, ապացոյց է այդ մեր զիւրազգայութեան, զոր ունինք Գեղեցկին համար: Ինտութեան տուրքն է այդ որուն համար երախտագէտ ըլլալով հանդերձ պէտք չէ որ չարաչար գործածենք զայն, որպէս զի այդ հաճոյքը վայելելու համար ունեցած մեր ընդունակութիւնը չտկարանայ:

Մասնաւանդ թէ կարեւորութիւն չտալով թե-

Թեև ու անցողական գրգռութեանց, դիտմամբ պէտք է զսպել զայն . վասն զի երբ սերնդագործ հիւթը արեան մէջ վերադառնայ, հոգւոյ ու մարմնոյ վերակենդանութիւն մը յառջ կը բերէ, և այդ ալ առողջութեան վրայ զօրացուցիչ ազդեցութիւն մը ունի: Շատերն հաստատած են ինձ իմ փորձառութիւնս թէ այսպիսի հեշտախտիկ զգացումները զսպուելէ ետքը մարդ աւելի զուարթ կը զգայ ինքզինքն ու բարոյական գոհունակութիւն մը կ'ունենայ ամէն անգամ, մտածելով թէ յաղթանակ մը տարած է իւր անձին, իւր կրքին վրայ:

Բ. Հաստատամիտ զգուշութեամբ ջանալու է չկրկնել սեռային գործողութիւնը երկու կամ աւելի անգամներ իրարու ետեւէ: Ծրբ մարդ կը սիրէ իւր առողջութիւնը, պէտք է լաւ միտ դնէ և հետեւի մեր այս ըստձին: Ադիկէ յառաջ եկած վնասները կրկնակի են. նախ՝ թէ ադոր անմիջական մէկ կրկնութիւնը առաջին անգամու գործողութենէն վեց անգամ աւելի կը տկարացունէ. երկրորդ՝ բնութիւնը ժամանակ չի գտներ կորուստին տեղը լեցունելու. մանաւանդ թէ երակներն ալ շատ կը թուլնան: Այդպիսի ձիգերէ ետքը ո՛չ միայն տկարութիւն յառաջ կու գայ, այլ շարունակ տեսակ մը մաղասահութ կը թորէ միզանցքէն:

Գ. Սեռային այս գործողութիւնը պէտք չէ անհանգիստ դիւրքերու մէջ կատարել, վասն զի մարմինը շատ կը յոգնի և կը նեղուի անյարմար դիւրքերու մէջ: Այս յարձակողական գործողութեան մէջ ադոր յատկացեալ մասէն զատ մարմնոյ միւս ամէն մասերը հանդարտ մնալու են: —

Կինը կրնայ նաև կրօնական բարեպաշտութիւն խառնել ամուսնական խնդիրներու մէջ: Միւս կողմանէ՝ աւելի հեռուն գացած հաճոյակատարութիւնները, կնոջ համար գրգռութիւններ և չարիքներ, և առն համար ալ զղուանք կը պատճառեն:

Դ. Մարդ իւր սիրած անձին հետ կատարելու է սեռային այդ գործողութիւնը: Այս և ուրիշ յիշածնիս գլխաւոր պայմաններ են զգալու համար այնչափ լաւ, որչափ որ է այն հաճոյքը զոր բնութիւնը շնորհած է մարդուն:

§ 52. Այս վերջին դիտողութիւնը մանաւանդ այնպիսի խնդրոյ մը կ'առաջնորդէ մեզ որ արժանի է գեղեցիկ սեռին նկատառման: Ո՛ւր էր թէ կանայք ջանային միշտ իրենց լծակցաց սիրուհին մնալ. ո՛ւր էր թէ ամուսնանալէ ետքն ալ ձեռքէ չթողուին իրենց ամուսնոց հաճոյ ըլլալու այն փափաքը զոր ունէին մինչդեռ օրիորդ էին. ո՛ւր էր թէ կանայք իրենց հրապոյրներն այնչափ խնայութեամբ գործածէին, որպէս կ'ընեն իրենց սիրահարին հետ: — Կանայք իրենց Ֆիզիքական գանձէն միշտ բան մը վերապահելու են, որպէս զի կարենան միշտ նոր, միշտ թարմ երեւիլ իրենց լծակցաց: Այս եղանակաւ՝ մինչև վերջը կը շղթայեն զանոնք:

§ 53. Սեռային դրդման գոհացումը բոլոր խոհութեան՝ հեշտանքի գործ ընելու չէ. հաճոյքն աւելցունելու նպատակաւ, գրգռութեան նոր եղանակներ վնասելու չէ. գոհացման ամենապարզ եղանակը լաւագոյնն է միշտ, վասն զի այդ է որ համաձայն է բնութեան: Այս պարզ ճամբուն վրայ

անընական գրգռութիւն մը տեղի չունենար, մարդուս ոյժը անկորուստ կը մնայ, կամ լաւ է ըսել, կ'աւելնայ :

Մարդուս կեանքին մէջ տարիներ կան, որ այդ աստիճանի դրդման գոհացումը կը զօրացունէ զինքն, առողջութիւն կուտայ և կը գեղեցկացունէ : Այդ տարիներու մէջ, մարմնէն հանուած սերմը, պէ՛տք է որ ելնէ, տեղ բանալու համար ուրիշին որ կը պատրաստուի մարմնոյն մէջ :

Մարդ իւր անձին վրայ իսկ փորձով կրնայ տեսնել թէ սերնդագործութեան առաւել հակամիտութիւն մը կ'ունենայ երբ մարմինը կատարելազգործուած և առողջութիւնը կատարել է, երբ տաժանելի աշխատանք և մտաւորական յոգնեցուցիչ զբաղումներ չունի :

§ 54. Այժմ, այս գործին չափաւորութեան խնդրոյն մէջ, կէտ մը մեր դէմ կ'ելնէ, որուն համար գուցէ խստապահանջ անձինք խժըժեն մեր ըսելիքները: — Սա՛ թէ՛ երբ կ'ենը յղի մնայ, պէ՛տք է կատարելապէս ետ կենալ սեռային դրդումը գոհացունելէ :

Կրօնաւորաց մեծագոյն մասը կուսակից են այդ ժուժկալութեան. բայց բժիշկն ո՛չ թէ հոգեկան, այլ մարմնական տեսակէտով կը դիտէ խնդիրը : Շատ բարի և դիւրին է կարենալ ըսել ինքզինքին. «դու ըրիր այս բարոյական զոհարերութիւնը» : Բայց երբ մարմինն այդու ծիւրի, այլ եւս պիտի չկրնայ բարոյապէս գործել, վասն զի ինքը վնասած կ'ըլլայ թէ՛ իւր անձին և թէ՛ անոր՝ զոր խնամիլ պարտի :

Այս գրքիս § 6 յօդուածին մէջ այս մասին անձուկ գազափար մը տուած եմ արդէն: Կորսուած սերմը հաշուի չհանըուիր, վասն զի մերթ տարիներ կ'անոյնին առանց սակայն կլինը յղի մնալու. ուրեմն այդ ամէնը կորսուած նկատելու է : Չի կրնար ըսուիլ նաև թէ այդ կրնայ անկարելի ընել յաջորդ յղութիւն մը, վասն զի տղուն կամ ապագայ մարդուն կեանքը գոյութիւն չունի առն կամ կնոջ սերմին մէջ, որ կը կորսուի ամէն մէկ գործողութեան :

§ 55. Սեռային դրդումը գոհացունելու համար կանանց զգացած գրգռութիւնը շատ ստիպողական կ'ըլլայ այն ատեն երբ իրենց արգանդին մէջ կը սկսի սաղմին կազմութիւնն ու սննդառութիւնը : Ես ընդհանուր առմամբ կը խօսիմ հոս. մասնաւոր պարագաները բացառութիւն են : Բնութիւնն ինչո՞ւ համար դրած ըլլար հոն դրդում մը, եթէ ուզած չըլլար զայն գոհացունել : Բնախօսական պէտք մ'է այդ :

§ 56. Երբ առն սերմն առատանայ, կամ բնութիւնը կը պարպէ զայն հոսմամբ — որ այդ ալ զուգաւորութենէ աւելի կը տկարացունէ մարմինը — կամ թէ սերմը արեան մէջ կը վերադառնայ և ուրիշ ճամբով դուրս կ'ելնէ, և այդու ամբողջ գործարանաւորութիւնը աւելի կամ նուազ ցաւալի վիճակի մը կ'ենթարկուի, Շատ երկար կ'ըլլայ հոս մանրամասն թուել մարմնոյն անհանգստութեան այն զանազան վիճակները, որք կրնան յառաջ գալ աղկէ :

Ուրեմն, մարդ թող մնայ այն ճամբուն մէջ զոր բնութիւնը կը ցուցունէ մեզ՝ գրգռութեամբ: Այդու

ուղիղ ճամբէն ընթացած կ'ըլլայ մարդ : Միայն թէ կարելի եղածին չափ ձեռքէ ձգելու չէ չափաւորութիւնը , որ ամուսնացելոց համար պարտաւորութիւն մ'է : Բան գործ ընելու չէ այդ :

§ 57. Ասկէ զատ՝ էրիկմարդուն համար բաւական դժուար է երբ կնոջը տղաբերքէն ետքը ընդերկար ժուժկալելու պարտաւորի : Մանաւանդ թէ երկու , կամ լաւ եւս , երեք ամիս պէտք է տեւէ այդ ժուժկալութիւնը :

Ըսողներ գտնուին թերեւս թէ քանի որ այդ ժուժկալութիւնն երեք ամիս կրնայ տեւել , կարելի է նաև տարի մ'ալ տեւէ . — Ես հոս կարելիութեան կամ կարողութեան վրայ չէ որ կը խօսիմ , այլ հետեւանքի վրայ : Չարիք մը որ Յ ամիս կը մնայ մարդուս վրայ , այնչափ դժուար չէ հեռացունելը , քան որչափ՝ երբ տարի մը մնացած ըլլայ :

Մինչդեռ կինը իւր լծակցին սիրոյ պտուղը կը կրէ իւր մէջ , այրը այդ ատենէն թող ըսկսի ետ կենալ տակաւ իւր սովորութենէն , և հետեւապէս՝ երեք ամսոյ շարունակ ժուժկալութիւնն այնչափ դժուար չըլլար իրեն :

§ 58. Կարեւոր պարագան կաթնատուութեան ատենն է : Սեռային դրդման չափաւոր գոհացումը ո՛չ կաթնատուին և ո՛չ կաթնկերին կը վնասէ : Միայն թէ կաթնատու մայրը գործողութենէն անմիջապէս ետքը կաթ տալու չէ գաւկին և սպասելու է որ արեան յուզումը հանդարտի :

§ 59. Սեռային այս գործողութեան կատարումը օրուան ո՞ր պահուն մէջ պատշաճագոյն ըլլալուն համար զանազան կարծիքներ կան : Ար-

դարեւ , պարագայից հանգամանքն ու կնոջ դաշդանի օրերը նկատողութեան առնուելու են : Այս մասին քանի մը ընդհանուր կանոններ կան , որք կ'որոշեն թէ այդ գործողութիւնը օրուան ո՞ր պահուն կատարել պէտք է : Մանաւանդ թէ այդ գործըն ըստ ինքեան աշխատութիւն մ'է , որ չի յարմարիր թէ՛ առն և թէ՛ կնոջ ցորեկուան լուրջ գործերուն և զբաղմանցը , վասն զի գործին կարգը կը խանգարէ և աւելի դժկամութիւն կը պատճառէ քան թէ գոհունակութիւն :

Այդ հաճոյքն իւր կատարեալ վիճակին մէջ պահելու համար պէտք է որ մարդ զուարթ ըլլայ և ուրիշ որեւիցէ բանով զբաղած չըլլայ :

Այդ հաճոյքը պէտք չէ նաեւ հապճեպով վայելել . այդ ատեն անամնոց կըքին վայրկենական յագեցման կարգը կ'անցնի : Վերջապէս այդ գործը կը յարմարի օրուան այն պահուն երբ արեւը երկրին միւս կիսագունդը կը լուստարէ : Այս մասին ալ բացատրութիւններ կրնան գտնուիլ :

§ 60. Ընդունելէ ետքը թէ այդ գործին յարմարագոյն ժամանակն այն է , երբ մարդ անկողնոյ մէջ կը գտնուի , խնդիր է թէ այդ ժամանակին , այսինքն գիշերուան ո՞ր մասին մէջ պատշաճագոյն է այդ . ննջելէ՞ առաջ , կէս գիշերին թէ առաւօտուն : — Անշուշտ՝ ո՛չ այն ժամուն երբ մարդ շատ յոգնած է : Աշխատութեան , շարժման , այսինքն վաստակի համար եղած յոգնութիւնները հանգստեան առաջին վայրկեանները իրենք կը գրաւեն : Լեցուն ստամոքսը շատ կը նեղուի մարմնոյն զօրաւոր յոգնութենէն , հետեւապէս ուշ մնա-

ցած ճոխ ընթրիքէ մը ետքը, հանդստեան առաջին ժամը յարմար չէ այդ գործին: Իսկ արբեցութենէ ետքը՝ ամենէն անյարմար ժամանակն է. վասն զի թողաւք թէ յաճախ շատ վնասարեւր հետեւանքներ կ'ունենայ, այլ մանաւանդ այդ գործին յատկացեալ գործիքներուն կատարեալ անզօրութիւն կը պատճառէ:

Պէտք չէ նաև հոգեկան զօրաւոր ցնցումներէ ետքը, մանաւանդ բարկութենէ կամ զայրուցքէ ետքը սեռային հաճոյից վայելման ձեռնարկել. յանկարծական շատ մահեր պատահած են աղկէ: Նոյն իսկ բնութիւնն ինք կ'արգելէ զայդ, վասն զի զգածման յուզումներէ, դժկամակութենէ, վիշտէ և անձկութենէ ետքը սեռային ցանկութիւնը կը չիջանի գրեթէ. այդ գործին պատկանող գործարաններուն պէտք եղած առաձգական զօրութիւնը կը նուազի և եթէ գրգռիչ դեղերով բռնադատելու շատ սուղի կը նստի մարմնոյն: Հազուադէպ չեն այն դէպքերը թէ սեռային յարաբերութեան ուժգին յուզումները արբեցութեան ատեն կամ ետքը մահուան պատճառ եղած ըլլան:

Սրբեցութեան ատեն մարմինը չափազանց գրգռութեան մէջ է. և այդ՝ ուժգին յուզման պատճառաւ՝ աւելի կը սաստկանայ. մեղկութիւնն ու թուլութիւնը որ արբեցութեան ատեն տակաւ երեւան կ'եղնեն, այս պարագային մէջ՝ աւելի սաստկութեամբ կը յայտնուին և վերջապէս այնպիսի ջլատութիւն մը կը հետեւի, որ մեքենան անշարժութեան կը մատնէ, և այդ ալ, յաճախ, նոյն իսկ մահն ինքն է:

§ 61. Բայց երբ մարդ չափաւոր և կանուխ ընթրած է, օրուան աշխատութեանց մէջ չափազանց յոգնած չէ, ցորեկը բարկացած կամ ուրիշ յուզումներ կրած չէ և երբ այդ և կին այդ հաճոյքին վայելումը կը փափաքին, այդ ատեն, արդարև, դէշերուան առաջին պահն ընտրելի է:

§ 62. Ասոնցմէ վերջը կու գան ամուսնեւորութիւնը, մարմնական որպիսութիւնը, իրենց վիճակը և կենցաղավարութիւնը:

Գլխաւոր կանոններ են՝ ամէն բանի մէջ բնականին հետեւիլ և անոր հակառակ չգործել. չգործածել որեւիցէ գրգռիչ դեղ: Բնական հրապոյրները լաւագոյնն են: Այս գեղեցիկ հաճոյքը մէկ կամ միւսին համար անհրաժեշտ պէտք մ'ընելու չափ չստորնացունի. ամենախիստ մաքրութեան հոգ տանիլ: Մարդ իւր ցեղին վերանորոգութիւնը առաջին նպատակ ըմբռնելով՝ այդու թելադրուիլ, որով գործողութենէ ետքը ակրութիւն չզգացուիր:

§ 63. Մարդ սկզբունք ընելու է իրեն այդ վայելքը չկրկնել յաճախ իրարու ետեւէ. պէտք չէ ամէն թեթև գրգռութիւն իրրև բնական գրգռում համարիլ. մանաւանդ հաճոյից վայելումէն ետքը ուշադրութիւն ընել մարմնոյն որպիսութեան և երբ փոքր ինչ ծանրութիւն զգացուի, երբ յոգնութիւն, թուլութիւն, գլխու պտոյտ, ջղաձգտում, աչքի ցաւ յատուց գայ, համոզուելու է թէ այդ վայելքն օգտակար չէ եղած իւր մարմնոյն, և պէտք է մտադրել այդ վայրկեանէն իսկ, ամէն թեթև գրգռիլ իրրև դրգում չհամարիլ և զայն գոհացունելու ետեւէ չըլլալ:

Մանաւանդ թէ ամէն անդամու յաջողուած
 ժուժկալութիւնը զգալապէս կը զօրացունէ մար-
 մինը . և նոյն իսկ հոգին , սա՛ համոզմամբ թէ յաղ-
 թած է մարմնոյն , բարերար ազդեցութիւն մը
 պիտի ներգործէ անոր վրայ : Բայց դժբաղդաբար
 շատ հազուադէպ են սեռային ցանկութեանց վրայ
 տարուած յաղթանակները . և այն քիչերը , որք
 իրապէս յաղթանակած են , ինչ զոհողութիւններու
 պէտք ունեցած են . զոհողութիւններ որք աւելի՛
 մնասած են գործարանաւորութեան , քան այն չա-
 փազանցութիւններն՝ որոնց յաղթած են : Երկար-
 ամեայ հիւանդութիւններ , դեռ երիտասարդ հա-
 սակի մէջ ծերութեան վերահաս նշաններ , կարե-
 ւորագոյն զգայարանաց կորուստ , սեւամաղձոտ-
 ութիւն եւ զառանցութիւն , յաճախ , անասնձ
 երկարատե և մոլեգին հեշտամոլութեան հետեւ-
 անքներն են : Ասոր համար ամէն մարդ թող ժա-
 մանակին սովորի յաղթել իւր կիրքին , վասն զի երբ
 անգամ մը անոր սանձը ձեռքէ ձգուի , անկարելի
 կ'ըլլայ զայն վերստին ձեռք անցունել , որով գուցէ
 այդ կիրքն ալ , անխնայաբար , իւր կատաղի ըն-
 թացքին հետ կ'առնէ կը քաշէ կը տանի ինչուր :

Գ Լ Ո Ի Խ Զ .

ԱՌՆ ԵՒ ԿՆՈՋ՝ ՍԵՌԱՅԻՆ ԳՐԴՈՒՄԸ ԳՈՀԱՅՈՒՆԵԼՈՒ ԱՏԵՆ
 ՈՒՆԵՆԱԼԻՔ ԸՆԹԱՅՔԻ ՄԱՍԻՆ ՄԷԿ ՔԱՆԻ ԿԱՆՈՆԵՆՐ

§ 64. Արդարեւ , յաճախ և շատ խօսելով
 այն բանին վրայ որ ամուսնական անկողնոյն գաղտ-
 նիքը մնալ պէտք էր , վիրաւորած պիտի ըլլայինք
 այն ամօթղածութիւնը որ մեր օրերուն մէջ գրեթէ
 մէկ կողմ ձգուած է :

Բայց հետեւեալ յօդուածներուն մէջ մեր ըսե-
 լիքին գլխաւոր տեսակէտը պիտի ըլլայ զուգաւոր-
 ութեան էական նպատակը , այսինքն այդ գործո-
 շութիւնը արդիւնաբեր ընելու նպաստաւոր պայ-
 մանները ցուցունել : Բացարձակապէս կ'ըսեմ թէ՛
 իմ նպատակս հեշտանքը բարձրացունելու եղանակը
 ցուցունել չէ :

§ 65. Նախ սա ըսեմ թէ զուգաւորութիւնն
 արգասաբեր ըլլալու համար՝ երկու կողմն ալ հա-
 ւասարապէս առ այդ հակամէտ ըլլալու են . թէ
 մէկ կողմին տհաճութիւնն ու չկամութիւնը ար-
 դեւք է նպատակին , և թէ՛ ամուրք աղէկ կ'ընեն
 երբ իրենցմէ մին առ այդ հաճութիւն չունեցած
 ատեն չմիանան :

Հապճեպով՝ շատ դիւրաւ կը վրիպի սերմնառ-
 ութեան գործը : Պէտք է որ ջլային այն գրգռու-
 թիւնը որ ամբողջ մարմնոյն վրայ կը տարածուի ,
 սերմնառութեան յատուկ գործարանին ալ տայ
 պէտք եղած առաձգական զօրութիւնը , Մանա-

ւանդ թէ կնոջ մարմնոյն շարժութիւնը յաճախ կը վրիպեցունեն նպատակը: Կինը պարտի լաւ դիրքի մէջ պառկիլ և աւելի կրաւորական վիճակի մէջ պահել ինքզինքը:

Հումայեցի բանասկեղծ Լուկրետիոս կը խրատէ կնոջ որ ներգործական վարմունքի մէջ չգլուտնուի, և կ'ըսէ շատ իրաւամբ, թէ այդ կերպով առն ոյժը կը սահի կ'երթայ և սերմն անօգուտ տեղը կը կորսուի: Միայն անառակ կիներն են որ յղի մնալէ զգուշանալնուն համար այդպիսի հակաբնական վարմանց մէջ կը գտնուին հեշտանքն աւելցունելու նպատակով:

Արդարև, սերմնաուժեան գործը վայրկենի մը գործ է: Արուեստը չէ որ այդ վայրկենական գործն ի գլուխ կը հանէ, այլ՝ բնութեան ընթացքն է այդ: Մերձաւորութիւնը կամ առայդ տարուած ճիգերը չեն որ զայդ յառաջ կը բերեն, ինչպէս հաստատել կ'ուզեն զանազան հեղինակներ. վասն զի եթէ այդպէս ըլլար ինչպէս կարելի էր արգասարերութիւն հետեւիլ երբ արտաքին արգելքներ կանոնաւոր մերձաւորութիւն մը անկարելի կ'ընեն, ինչպէս կը պատահի երբեմն: Կան շատ դէպքեր, ուր թոյլ մերձաւորութիւն մը, սանկ ըսենք, երբ երկու կողմերը հաղիւ իրարու հպած են, արգասաւորութիւն յառաջ բերած է, և այդ վասն զի բնութիւնը ամէն անցքերը պէտք եղածին պէս ընդլայնած և ֆիզիքական բարձր յուղում մը միայն իւր սահմանեալ տեղը զրկած է սերմը:

§ 66. Հիմա դառնանք այն միջոցներուն որք կը նպաստեն գոյացունելու այս գրգռութիւնը

երբ երկուքէն մէկուն տկարութիւնն արգելք կ'ըլլայ արգասաւորութեան:

Գործարանային պակասութեանց և հիւանդութեանց դարմանը ուղղակի բժշկին կը վերաբերի:

Գիկամակութիւնն ու չափազանց անզգայութիւնը ամուք իրարու հետ ունեցած վարմունքով չքացունել պարտին, և այդ՝ ինչպէ՞ս: — Մէկուն՝ միւսին հանդէպ ունեցած չափազանց հաճոյակատարութեամբ, անզգայութիւն յառաջ բերող պատճառները փնտռելով և զանոնք բաւանալով. չափազանց մաքրութեամբ և մաքրասիրութեամբ: Գլուտնաց մէջ դադարներ դնելով, նոր և ազդեցիկ գրգռութեամբ, կենցաղավարութեան փոփոխմամբ, նախասիրական ուտելիքներու և խմելիքներու կերասութեամբ ու գործածութեամբ. հոտոտելեաց ջիղերուն վրայ նոր ներգործութեամբ մը՝ վասն զի այս շատ կը նպաստէ այն գրգռութեան գոր կը պահանջէ արգասաւորումը: Իսկ ներքին միջոցներուն զալով, անձնական սննդաուժեան սահմանն անցնելուն պէս, այլեւս օգուտ չեն ընելու Բժշկաց կողմէն յանձնարարուած դեղերուն ալ մէկ մասը կատարելապէս անազդեցիկ, իսկ մէկ մասն ալ այնչափ գրգռիչ են, որոնց պատճառած գրգռութիւնը վերստին մեղկութիւն և տկարութիւն կը բերեն մարդուս վրայ:


§ 68. Ամուրթեան մէկ ուրիշ պատճառն ալ, յաճախ, ամոլներէն միոյն պաղարիւն բնաւորութիւնը և միւսին շուտով գրգռուիլն է: Այս պարագայիս մէջ աւելի կրակոտն ինքն իրմէն մտադրելու

է չափ մը դնել իւր եռանդին, և ասիկա ալ աւելի էրիկմարդուն կը պատկանի, վասն զի սովորապէս ան է նախաշարձակը: Արդարեւ, այս պարագային մէջ կինը ակնածութեամբ և փափկանկատութեամբ վարուելու է. վասն զի կինը ամէն ատեն, լծակցական մտերմագոյն յարաբերութեանց մէջ իսկ, ձեռքէ ձգելու չէ ամօթդածութիւնը:

§ 69. Այս ամթիւ պարտ կը համարիմ յիշեցունել որ հաճոյքի վայելումէն յետոյ զեղեցիկ սեռին համար տեսակ մը հանգիստ պէտք է, թէպէտ և չեմ ընդունիր որ լծակցական յարաբերութենէ ետքը երեսն չափաւոր շարժման մէջ գտնուելն ալ միասակար ըլլայ: Միայն թէ զգուշանալու է որովայնի ուժգին շարժումներէ, պարելէ, ցտքելէ և ձի հեծնելէ. բայց կնոջ իւր սովորական գործերը միւս չեն տար, վասն զի մայր-բնութեան խնամքները շատ մեծ են սաղմին համար, այնպէս որ նոյն իսկ բաւական ուժգին բախումներն ու շարժումներն ալ շատ քիչ անգամ կը միասեն սաղմին. թէպէտ և ես ասի կարծիքէն եմ թէ շատ ձախողանք, որոնց ենթարկուած են մանուկները, հետեւանք են արտաքին ճնշման կամ բախման, որ մորթերէն ու մաշկերէն և ամէն տեսակ պահպանումներէն անցնելով կ'երթայ կը միասէ սաղմին առանց միասելու սակայն իւր մօր:

§ 70. Իսկ այրը կատարելապէս առողջ վիճակի մէջ լծակցական հաճոյքի վայելումէն ետքը, պէտք չունի հանգստանալու: Եւ եթէ այդ վայելքին համար երեկոյեան պահն ընտրած է, բնականաբար մարմնոյն կաղզուրման համար միայն

պէտք է որ քնանայ: Իսկ առաւօտուն կատարուած վայելքէն ետքը կրնայ գործի երթալ, բայց մարմնոյն գրգռութիւնը հանդարտեցունելէ ետքը: Սակայն խորհուրդ կու տամ չքնանալ վերստին, վասն զի այդ ետքի քունը աւելի մեղկացուցիչ է քան թէ՛ կաղզուրիչ:



Գ Լ Ո Ւ Խ Է.

ՍՆԱԱՅԻՆ ԴԴՌՈՒՄԸ ԳՈՂԱՅՈՒՆԵԼՈՒՆ ԱՆՎՆԱՍԱԿԱՐՈՒԹԵԱՆ
ԵՒ ՎՆԱՍԱԿԱՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՑ ԴԵՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

(Արանց հաւեստ)

§ 71. Ինչպէս ըսած ենք ընդհանրապէս, լծակցական հաճոյքին չափաւոր վայելքը միայն օգտակար է մարդուս, իսկ չափազանցը՝ միասակար: Ըսած ենք նաև թէ այդ վայելքը, պէտքն զգացուած ատեն միայն առողջարար է, և ադոր անմիասակարութեան ասպացոյցն ալ վայելումէն յետոյ զգացուած քաջողջութիւնն է. միայն թէ աւելի օգտակար է մարդուս, մօտէն ծանօթութիւն ունենալ այն ամէն պարագաներուն վրայ, որք այդ վայելքին նուազումը կը պահանջեն:

§ 72. Մարդ կատարելապէս առողջ ու զօրաւոր եղած ատենն իսկ աչքի առջև ունենալու է

իւր ազգագայ կեանքը, մանաւանդ՝ ամուսնութեան ակիզքները: Լծակցական պարտաւորութեանց յաճախակի գործադրութեանէն թէ՛ ինքզինքն և թէ՛ իւր ամուսինը հեռի պահելու է. զանազան նկատումաներով խնայող ըլլալու է սիրոյ զգուսնաց մէջ:

Նախ՝ իւր կնոջ համար — որ իրմէ աւելի կրնայ տոկալ — այս վայելքը չընել այնպիսի անհրաժեշտ պէտք մը զոր մի՛ գուցէ չկարենայ գոհացունել, երբ երիտասարդական տարիներն անցնին: Երկրորդ՝ ունակութիւն չընել այդ վայելքը որ մարմնոյն լաւագոյն հիւթը կ'առնէ կը տանի և տակաւ այնպիսի սպառում մը յառաջ կը բերէ որ ազդեցութիւն ունի ամբողջ գործարանաւորութեան վրայ: Երրորդ՝ վերջապէս, որպէս զի մարդ ժամանակէն առաջ զրկուիլ չպարտաւորի այդ անուշ վայելքէն:

§ 33. Մասնաւորապէս կրակոտ և եռանդուն խառնուածքի տէր եղողներն են որ ժամանակէն առաջ կ'ուժաթափին. մաղասայինք քիչ մ'աւելի կրնան դիմանալ: Գլխաւորապէս իրերայաջորդ և յաճախակի վայելքներէն ետքն է որ ուժաթափութիւնը վրայ կը հասնի:

Ինչպէս որ յաճախակի վայելքը ժամանակէն առաջ ուժաթափ կ'ընէ մարդս և վերջապէս այդ հաճոյքը վայելելու կարողութիւնը կորսնցունել կու տայ մարդուս, չափազանց ժուժկալութիւնն ալ նոյն հետեւանքը կրնայ ունենալ: Ասոր համար, չէի ուզեր որ ամուսնացեալ այրը բոլորովին ժուժկալ մնայ (§ 54) սեռային յարաբերութենէ, երբ կինը յղի իսկ ըլլայ. և ասոր համար խորհուրդ տուած էի (§ 57) աստիճանաբար նուազեցունել

այդ յարաբերութիւնները մինչդեռ սաղմը կը սկսի կազմակերպուիլ, որպէս զի կնոջ տղաբերքէն ետքը 2—3 ամսուան անհրաժեշտ ժուժկալութիւնն զգալապէս անհաճոյ ու մնասակար չըլլայ իրեն:

Ենթադրելով թէ այրը սովորապէս շաբաթն երկու անգամ կը վայելէ լծակցական հաճոյքը, կնոջ յղի մնալը յայտնուելուն պէս առաջին երեք ամիսներուն մէջ շաբաթը մէկ անգամ, յաջորդ 3 ամիսներուն մէջ երկու շաբաթը մէկ անգամ, և մնացեալ 3 ամիսներուն մէջ ալ միայն մէկ անգամի վերածելու է այդ: Այս եղանակով կնոջ տղաբերքին յաջորդ 2 և ի հարկին երեք ամիսներուն մէջ, առանց նեղուելու, կարելի է ժուժկալ մնալ և չենթարկուիլ այն չարեաց որք կը հետեւին կատարեալ ժուժկալութենէն:

§ 34. Այս ժուժկալութիւնը հեշտիւ անցունելու համար մարդ իւր կերտութեան մէջ չափաւորութիւն դնելով, աշխատութիւնն ալ փոքր ինչ աւելցունելու է:

Աշխատութեան չափն աւելցունելը մանաւանդ շատ կը նուազեցունէ սեռային դրդումը: Մտաւորական աշխատութեամբ զբաղողներն այդպէս են: Բայց մարմինը յոգնեցունող ուրիշ աշխատութիւններ ալ կ'արգիլեն այդ վայելքին միտութիւնը, և մարդուս սիրած ուրիշ զբաղումները որչափ սեղմիւ գրաւեն զմեզ, այնչափ նուազ պէտք կ'ունենանք սեռային դրդման:

Ուտելիքը և մանաւանդ խմելիքը քիչ գործածելու է, վասն զի այդ միջոց մ'է որ կրնայ նպաստել ժուժկալութեան:

§ 35. Իսկ վատառողջ այրերը մանաւանդ շատ զգոյշ մնալու են ամուսնութեան թէ՛ սկիզբը և թէ՛ շարունակութեան մէջ, որպէս զի մի՛ գուցէ այնքան անուշ վայելք մը իրենց կորստեան պատճառ ըլլայ: Վատառողջ ըսելով կ'ըզեմ հասկըցունել այնպիսիներն որք իրենց երիտասարդութեան տարիներուն մէջ հիւանդութեանց պատճառաւ տկարացած են, կամ թէ տկար մարմնով աշխարհ եկած են, կամ ուսանողական կեանքի ճիգերու և կամ պատանեկութեան մէջ տաժանելի աշխատութեանց ենթարկուած են. վերջապէս՝ երբ այս պատճառներուն մէկովը վնասուած է իրենց առողջութիւնը:

Կրնայ ըլլալ նաև որ երիտասարդական յիմար շուսյտութիւններով խանգարած ըլլան իրենց առողջութիւնը, և այդ ատեն դիւրաւ պիտի տեսնեն իրենց անձին վրայ թէ այդ վայելքէն ետքը պիտի չունենան քաջողութիւն, գոհունակութիւն, երբ այդ վայելքը բան գործ ընեն իրենց. այդ պարագային մէջ պարտին ձեռքէ չթողուլ չափաւորութիւնը և չվերանորոգել վայելքը մինչև որ ընդմիջական երկար դադար մը և զսպուած դրդումներ համոզեն թէ հասած է ժամանակը, յորում առանց վնասուելու կարելի է վերսկսել լծակցական վայելքը:

Ախտաբանները յաճախ կը նեղուին արանգամի յամառ կծկումներով, որ սեռային դրդման գոհացուցմամբ փոխանակ անհետանալու, աւելի եւս կրնայ սաստկանալ: Ադոր priapismus կ'ըսեն, որուն պատճառը ստորին որովայնին հիւանդոտ գրգռութիւնն ու անոր արիւնաշատութիւնը, հիւ-

անդին ջղագրգռութիւնն ու որդերն են: Ասոր դարմանն է արանդամը պալ ջուրով լուալ, իւզով չփել և բժշկին տնօրինած չափովն ու հրահանգովը քափուր գործածել: Սեռային դրդման այսպիսի հակաբնական երեւոյթներուն կարգէն են նաև արանդամին ցաւագին ուռեցքը, միզանցքէն մաղասահոսութիւն և վայելքէ ետք զգացուած սաստիկ գրգռութիւնը:

Սեռային յարաբերութեան չափազանցութիւնը արգելք է նաև արգասաւորութեան. ամուսնութեանց շատին անդաւակ մնալն ադոր հետեւանքն է:

§ 36. Հիւանդկախութիւնը և frolic հիւանդութիւնը պատճառ չեն լծակցական յարաբերութեանէ կատարելապէս հեռի մնալու. միայն թէ այդպիսի անձինք լաւ կ'ընեն խորհուրդ հարցունել այն բժշկին որ կը ձանձնայ հիւանդին բնութիւնը և կրնայ որոշել թէ ինչ եղանակաւ և ինչ չափով ներելի է իրենց վայելել այդ հաճոյքը: Եթէ ընտանեկան բժիշկը վստահելի անձ մը չըլլայ և կամ թէ զանազան պատճառներ կասկածելի ընեն անոր խորհրդագահութիւնը, հիւանդը իւր վիճակը մանրամասնօրէն բացատրելով օտար բժշկի մը, սա՛ եւս կրնայ տալ իրեն պէտք եղած դարմանն ու խորհուրդը:

§ 37. Ես չեմ կրնար ընդունիլ թէ այնպիսի հիւանդութիւններ կան որք հեռ կը բերեն սեռային հաճոյքի մասնաւոր միտում մը. այլ սա՛՛ ճշմարիտ է թէ այդ հիւանդութեանց մէջ գրգռութիւններն այդ մասերուն վրայ այնպիսի ինն կը ներգործեն որ այդու հիւանդագին դրդում մը յառաջ կու գայ,

վասն զի եթէ սերնդագործութեան դրդման համար հիւանդատ'գին միտում մը եղած չըլլար այդ, անշուշտ պիտի անհետանար գոհացուցմամբ :

Եթէ այդ վայելքին համար պէտք եղած անդամներուն մէջ կիզուութեան մը գրգռութիւնը սեռային դրդում անուանել ուղէինք, անիրաւութիւն ըրած պիտի ըլլայինք :

§ 78. Սակայն ախտաբաններն ու թուփքի (մայասըլ) ենթակաները ճշմարիտ դրդում մը ունեցած ատեննին լծակցական յարաբերութենէն չեն վնասուիր, երբ զգուշութեամբ վարուին, չափաւորութեամբ գործեն. այդ ատեն աւելի լաւ կը զգան ինքզինքնին : Այս երկու հիւանդութիւնները, այսինքն ախտաբանութիւն ու թուփք մինչև ցարդ մեծ մասամբ սխալ ըմբռնուելով, ըստ այնմ հակառակ կերպով կը դարմանուէին : Ես կրնամ հաստատել թէ ախտաբանները կը բժշկուին կատարելագոյն, եթէ ամուսնանան. բայց հոս տեղը չէ աւելի երկար գրել այս մասին :

§ 79. Փայլափուշտին մէջ քար ունեցող հիւանդաց գրգռութիւնը կրնայ ծննդագործարանաց վրայ աւելի ազդեցիկ ըլլալ, և կարելի է ընդունիլ թէ մի' գուցէ սեռային յարաբերութեան մեծ միտումը հիւանդութեան հետեւանք եղած ըլլայ : Եթէ իրապէս այդպէս իսկ ըլլայ, դարձեալ չեմ կարծեր որ այդ գրգռման գոհացումը վնասակար ըլլայ. այդպիսի ընդհանուր ջղացնցում մը աւելի օգուտ կրնայ ունենալ քան թէ վնաս, երբ, չմոռնանք ըսել դարձեալ, գործին մէջ չափազանցութիւն չըլլայ :

§ 80. Ես այնպէս գտած եմ որ զանազան տեսակ հիւսախտաւորներուն սեռային դրդումն ընդհանրապէս մարդու սովորական դրդումէն նուազ է, և ոչ թէ աւելի : Այսու ամենայնիւ, ամբողջ մարմինն անվնաս պահելու համար մասնաւոր ուշադրութիւն ընելու է չափաւորութեան :

§ 81. Այս պարագային մէջ ընդհանրապէս մեծ արժէք ունին հետեւեալ կանոնները :

Ամէն հիւանդ կամ հիւանդկախ անձ ջանալու է, որչափ որ կրնայ, զսպել այդ դրդումը գոհացունելու միտումը և հաճոյքին վայելումն ալ յետաձգել, որչափ ատեն որ կրնայ անվնաս կերպով ժուժկալել : Բայց երբ չկրնայ աւելի սպասել, այն ատեն թող գործադրէ իւր փափաքը գոհացունելու համար ունեցած իրաւունքը, § 78 ին մէջ ցուցուած պայմաններով : Այդպիսին կրնայ նախապէս գաւաթ մը գինիով զօրացունել անձը, և ետքն ալ մէկ քանի հաւկիթի կակուղ դեղնուցով և ուրիշ թեթեւ ու մննդարար ուտելիքով կազդուրուիլ. բայց զօրաւոր խմելիքներէն զգուշանալ պարտի ազա, վասն զի աղոնք առաջուց թէև ոգեւորութիւն մը կու տան, բայց յետոյ շատ սաստիկ գրգռութիւն մը կը պատճառեն մարմնոյն :

Այս փորձէն ետքը մարդ իւր գոնուելիք վիճակէն դիւրաւ կրնայ հետեւցունել թէ՛ այդ փորձն առողջարար եղած է իրեն, թէ՛ մարմինը տկարացած է, թէ՛ գէթ վնաս տուած չէ, կամ թէ կատարելագոյն վնասակար եղած է :

Երբ մարդ այդ վայելքէն ետքը նոյն գործին գործակցող գործարանաց մէջ պրկիչ յուզում մը

չզգար, երբ վայրկենական թեթե խոնջութենէ մը զատ — որ հիւանդոտ անձանց վրայ գրեթէ միշտ կը զգացուի, բայց պէտք չէ որ երկար տեւէ — մարմինը կարեւորութիւն ունեցող տկարութեան մը չենթարկուիր, երբ մարդ իւր աշխատութեան և զբաղմանց վերսկսած ատեն (եթէ առաւօտեան պահուն տեղի ունենայ) դժկամակութիւն և թախժութիւն չունենար, և կամ երբ (եթէ երեկոյի պահուն տեղի ունենայ) վաղահաս, լաւ և կազդուրիչ քուն մը վայելելէ ետքը զօրացած արթննայ, այն ատեն կարելի է ապահովապէս ընդունիլ թէ վայելքն առողջարեւ եղած է մարմնոյն, թէ գրգռութիւնը առողջութեան նպաստող կորով մը յառաջ բերած է ամբողջ մարմնոյն մէջ :

§ 82. Վասն զի սա ստոյգ է թէ կատարելապէս առողջ անձանց վրայ, այդ դրաման գոհացումը — երբ մարմնոյ կանոնաւոր պահանջումն եղած ըլլայ այդ և կատարուի — գրգռութիւն մը յառաջ կը բերէ, որ օգտակար կ'ըլլայ առողջութեան և կը փարատէ երակներուն աւլցութենէն յառաջ եկած դանդաղութիւնը :

§ 83. Շատ հիւանդներ այս գրգռութեամբ բժշկուած են չարիքէ մը որ առանց այդ գրգռութեան մարմնոյն մէջ պիտի մնար ընդերկար այսպէս են նաև անդամոց տեղական ու յօդային ցաւերը, որք առողջ անձի մը հետ սեռային հաճոյքի մէկ քանի վայելքէ ետքը կ'անհետանան :


§ 84. Ասկէ զատ, կան ուրիշ պարագաներ զորս նկատողութեան առնուլ պէտք է. այն թէ՛ առողջ կին մը սեռային յարարերութեան ատեն և

անկէ ետքը, տկար էրիկմարդուն կը հաղորդէ իւր առողջ արտաշնչութենէն մաս մը, առանց վախնալու սակայն թէ էրիկմարդուն ոչ-առողջ արտաշնչութիւնը իւր առողջ մարմնոյն վրայ վնասակար ազդեցութիւն կ'ընէ, վասն զի առողջ և իւր յարատեւ կատարելագործութեան աշխատող մարմինը չթողուր որ իրեն անյարմար մաս մը մտնէ իւր մէջ, այլ կը վանէ զայն. և եթէ մարմնոյ մէջ մտնէ իսկ, ուժով մը զայն առողջ մասի մը կը վերանորոգէ :

§ 85. Բայց երբ ծննդագործարանաց մէջ անհաճոյ պրկումներ յառաջ գան, երբ տեսակ մը խոնջութիւն երեւան գայ, երբ վայելքին ստնգանքը ցաւով զգացուի, երբ երեկոյեան վայելքէն ետքը անքունութիւն, ծանրատաղտուկ նեղութիւն, անհանդարտութիւն, աչքի կամ կուրծքի մէջ ցաւեր զգացուին, երբ առաւօտեան վայելքին խուճեալ քուն մը յաջորդէ, և երբ մարդ արթնցած ատեն ալ դժկամակութիւն ունենայ, իւր սովորական զբաղումներն անախորժ և նոյն իսկ իւր սիրոյ առարկան անհաճոյ երեւին, ամէն ասոնք անվրէպ ապացոյցներ են թէ սեռային զրգման գոհացումը վնասակար եղած է անձին. այդ ատեն պէտք է ձեռք առնուլ ժուժկալութիւնը և չփորձել հաճոյից վայելքին կրկնումը, մինչև որ ժամանակ անցնելէ ետքը փոխուի իւր անձնական ու հոգեկան վիճակը և համոզուի թէ իւր հիւանդութիւնը բարեփոխուած է :

§ 86. Այս գրքիս պարունակութեան սահմանները չեն ներեր մեզ մտնել այն պարագաներ-

ուն մանրամասնութեանց մէջ, որք սեռային դժբախտ-
ման գոհացումն օգտակար կամ վնասակար կրնան
ընել: Մարմնոյ կազմուածքին վրայ մօտէն ծանօթ-
ութիւն և պարագաներուն գիտակցութիւնն ունե-
նալ պէտք է: Ուստի երբ մարդ այդ վայելքին
վնասակարութեան կամ անվնասակարութեան վրայ
տարակոյս ունի, խզճամիտ ու վստահելի բժշկի
մը խորհուրդին դիմել պարտի:



Գ Լ Ո Ւ Խ Ը.

ՍԵՌԱՅԻՆ ԳՐԴՈՒԾԸ ԳՈՀԱՑՈՒՆԵԼՈՒՆ ԱՆՎՆԱՍԱԿԱՐՈՒԹԵԱՆ
ԵՒ ՎՆԱՍԱԿԱՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ ԳԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

(Կանանց համար)

§ 87. Նախորդ գլխուն մէջ ցուցուած հիւ-
անդութիւնները գեղեցիկ սեռին ալ կը պատկանին:
Անոնցմէ զատ լոկ կանանց յատուկ զանազան վի-
ճակներ ալ կան որ այս գլխուն նիւթը կը կազմեն:

§ 88. Կին մը որչափ տկար ըլլայ, այնչափ
ժուժկալ ըլլալու է, եթէ կարելի է, սեռային յարա-
բերութեան մէջ: Այս սկզբունքը գլխաւորապէս
այն կանանց կողմանէ յարգուիլ պէտք է, որք
մաղասահոտութեան (ճերմակ դաշտանի) ենթակայ
եղած են: Հիւանդութիւն մ'է այս որ մեծ մասամբ
հաճոյքի չափազանց վայելքէ յառաջ կու գայ

և այդ վայելքն ինչ տեսակ ներգործութիւն կըր-
նայ ընել այն մարմնոյն վրայ, երբ այդ չարիքը
ամուսնութենէ առաջ արդէն գոյութիւն ունեցած
ըլլայ:

Գլխաւորապէս վատառողջ, հիւանդկախ կի-
ններն են որ հարմարագոյութեան կամ առնամոլու-
թեան ենթակայ կ'ըլլան: Հակաբնական, չկշտա-
ցող սեռային դրդում մ'է այդ: Սակայն մարմ-
նեղ ու արիւնաշատ կանանց վրայ ալ այդպիսի
վիճակի մը պատճառը սեռային յարաբերութենէն
ընդերկար զրկուած մնալն է և որուն դարմանն
է բնութեան պահանջումը գոհացունել: Հիւանդ-
կախ կիներն ալ որդերու պատճառած գրգռու-
թեան, ջիղերու չափազանց յուզման, ստորին
որովայնի արիւնաշատութեան, երեւակայութեան
գրգռման գործարանաց գրգռութեան պատճառաւ
— զոր պակասաւոր կամ անկատար գոհացումը
յառաջ կը բերէ — կ'ենթարկուին աղբոր: Սակա
յաճախադէպ վիճակ մ'է այն դեռատի այրիներ-
ուն վրայ, որք իրենց սովորական վայելքէն զրկուիլ
կը պարտաւորին. նոյնպէս նաև այն մանկամարդ-
և հրաբորբք աղջկանց վրայ՝ որք հեշտ կեանք մը
կը վարեն, լկաթի վէպեր շատ կը կարդան, երի-
տասարդաց հետ ազատ յարաբերութիւններ ունին,
բայց յղի մնալէ վախնալով հեռի կը կենան սեռ-
ային հաճոյքէ. նաև անոնց վրայ՝ որք այս պատ-
ճառին համար կիսկատար կը վայելին այդ հա-
ճոյքը:

Այս պարագաներուն մէջ, ամուսնութիւնը
ամէն բան կը կանոնաւորէ:

Հարսնամուլութեան կամ առնամուլութեան ընկերներ են նաև միզելու ցաւ, թալուկ, ջլազարային կծկումներ, ծննդագործարանաց մէջ այրիչ, մարմաջող կսկիծներ: Յայտնի է թէ այս վիճակին մէջ բժշկին դարմանն անհրաժեշտ է:

Այս վիճակներուն երթակայ եղողները մեծ զգուշութիւն ընելու են իրենց կերառութեան մէջ, ամէն տեսակ համեմներէ (պահար), մսեղէնէ, սուրճէ, թէյէ և այլն, հեռու մնալու են. պէտք է ժրութեամբ աշխատին, պաղ ջուր խմեն, պաղ ջուրի մէջ լոգնան կամ ծննդագործարաններն անող լուան, միտքերնին լուրջ բաներով զբաղեցունեն: Այս պարագային մէջ բժշկին տնօրինածը լուծողական մը և քափուրի*) զգուշաւոր գործածութիւնն է:

Քափուրէն (ուրկէ ես շատ քիչ օգուտ տեսած եմ) աւելի մեծ չափով bromcali կը գործածուի այժմ, իբրև ամոքիչ սեռային հիւանդութեանց:

Դեռատի աղջիկները, յաճախ, իրենց արտունքէն առաջ կը նեղուին ճերմակ դաշտանէ և ազոր պատճառն ալ մարմնոյ հիւթերուն պակասաւոր խառնուրդն է, իբրև հետեւանք մարմնոյն տկարութեան: Այդպիսի աղջիկներ յետոյ, սովորապէս, կանաչախտի կ'ենթարկուին. ուստի զօրացուցիչ դեղեր գործածելու են, որպէս զի մարմինը կարող ըլլայ ամսական կանոնաւոր հոսուիլը (դաշտանը)

*) Քափուրը շատ զգուշեամբ գործածելու է. վասն զի ազոր անզգոյշ գործածութիւնը կրնայ կատարելապէս շիջուցանել սերնդագործական ոյժը:

հրաւիրելու, որ այդ վիճակին մէջ գրեթէ միշտ բացակայ է:

Հոս շատ երկար կ'ըլլայ ցուցունել այն դասադան պատճառներն որ յառաջ կը բերեն այդ հիւանդութիւնը: Բաւական է ըսել միայն թէ այդ հիւանդութեան ենթարկուողներն ադէլ բժշկուելէ առաջ սեռային յարաբերութեան մէջ մտնելու չեն: Եւ որովհետեւ ազոր գլխաւոր պատճառը ծննդագործարանաց տկարութիւնն է, և հիւանդութիւնը մեծ մասամբ տեւական է, ուստի կրնան գտնուիլ բաւական միջոցներ զայդ դարմանելու համար, մանաւանդ՝ մանկամարդութեան մէջ:

Միայն թէ հիւանդութիւնը դեռ չբժշկուած երբ մարդ սեռային յարաբերութեան մէջ մտնէ, հիւանդութիւնն աւելի կը սաստկանայ. վասն զի այդ գործին յառաջ բերած գրգռութիւնը, որ առողջներուն ծննդագործարանները կը զօրացունէր, այս վիճակին մէջ տկարութիւն և հիւթերու չափազանց սպառում կը պատճառէ:

§ 89. Տեսակ մը ճերմակ դաշտան կայ, գիտեմ, որ սեռային յարաբերութեամբ կը բժշկուի. միայն թէ այդ ալ այն ատեն կ'ըլլայ երբ մարմինը զօրաւոր, լեցուն և առողջ է. նոյն իսկ այս հիւանդութիւնը իւր հիւթովը շատ կը տարբերի միւս տեսակէն: Ասիկա ալ այն ատեն կը պատահի երբ լծակցական հաճոյքը ժամանակ մը յաճախակի վայելելէ ետքը, յանկարծ կատարելապէս կը զբրկուի կինն ադէլէ. մանաւանդ թէ երբ երեւակայութիւնը շատ յուզուած է և գիջութեան կը դբրուի: Դեռատի աղջկանց քով անմաքրութիւնն

ալ այն պատճառներուն կարգէն է, որք կրնան սեռային հակաքնական դրդումներ և ճերմակ դաշտան յառաջ բերել: Աղտեղի հիւթեր՝ հոն միանալով՝ դժնդակ մարմաջներ և խտղաուքներ կը պատճառեն. և այդու՝ ոչ միայն սեռային դրդումը ժամանակէն առաջ կ'արթննայ, այլ ճերմակ դաշտան ալ յառաջ կու գայ. գոյնէն ու հոտէն յայտնի է այդ. աւելին ըսելու պէտք չի կայ:

§ 90. Իգական սեռի ներկայացուցիչք խտտորելու չեն վերոյիշեալ ընդհանուր կանոններէն: Պէտք է որ պարտասին. պէտք է որ չափաւորութիւնը ձեռքէ չթողուն: Շատ գեղեցիկ բան է երբ կինը այդ գործին մէջ սանձն ինք ձեռք առնէ և խոհեմութեամբ իւր լծակիցն ալ չափաւորութեան առաջնորդէ:

Կինն իւր դաշտանահոսման ատեն ներկու չէ որ այրն իրեն մերձենայ. շատ տեսակէտներով վնասակար է այդ. նախ՝ թէ այդ ատեն իւր ներքին երակներն ընդարձակուած ըլլալուն համար դիւրաւ կ'ենթարկուի ճերմակ դաշտանի. երկրորդ՝ թէ այդ ժամանակը վնասատու և անպատշաճ է առն և կնոջ մաքրութեան:

Եւ դեռ աւելին կայ. այդ պատճառաւ արգանդային այնպիսի վտանգաւոր արիւնահոսութիւն մը կրնայ պատահիլ որ երբեմն ուժաթափ կ'ընէ կինը և կրնայ մահ պատճառել անոր:

§ 91. Տղարեքէ ետքը երկու և ի հարկին երեք ամսոյ չափ սեռային յարաբերութեանէ հետի մնալու համար նախապէս ըրած դիտողութիւնս հոս անգամ մ'եւս յիշելու պէտք կը զգամ. և


այդ՝ այն պատճառաւ թէ կնոջ առողջութիւնն այդու կը խանգարուի այդ ժամանակին մէջ: Այդչափ դադար մը պահանջելի է, որպէս զի ընդարձակուած և հետեւապէս տկարացած գործարանները վերստանան այն տոկոճութիւնը, որուն պէտք ունի գեղեցիկ սեռը յաջորդ յղութեան մը համար: Նոր տղաբերող կինը լաւ գիտնալու է թէ, եթէ չուտով վերսկսի սեռային յարաբերութեան, զանազան հիւանդութեանց կ'ենթարկուի, որոնց մէջ սովորականն է սաստիկ արիւնահոսութիւնը. ասոր ալ կը յաջորդեն ուրիշ հիւանդութիւններ, որ չափազանց դժբաղդ կ'ընեն կինը:

§ 92. Սեռային յարաբերութեանց մէջ չափաւորութիւն, միշտ մաքրութիւն, այդ գործին հետեւանքներուն մեծ զգուշաւորութիւն, և եթէ ասոնց ալ միացունենք իմաստուն բժշկի մը խորհուրդները, այն ատեն կինը պաշտպանուած կ'ըլլայ այն ամէն դժնդակ հիւանդութեանց դէմ, որոնց կրնան ենթարկուիլ ծննդագործարանք, գերագոյն նպատակի մը յատկացեալ այդ նրբակազմ գործիքները:

Մանաւանդ, սքանչելին այն է որ բնութիւնն իսկ ձեռքէն եկածը կ'ընէ ամէն ինչ կարգաւորութեան մէջ պահելու համար:

Սակայն պէտք է որ մարդս ալ պատշաճ ուշադրութեամբ և մանրակրկիտ հետազոտութեամբ զգուշանայ վնասակար ազդեցութիւններէ, և ամէն կին ջանալու է ագոր. այդու տարիքն առնելէ ետքն իսկ ծննդագործարանաց առողջութիւնը անխախտ կը մնայ, և այդ՝ շատ զաւակներ ծնելէ

ետքն իսկ . վասն զի բնութիւնը կսկիծ դրած չէ
 այն հեշտութեանց մէջ , երբ մարդ անոր դրած
 կարգովն ու սահմանած պատուէրներուն համեմատ
 վայելէ զանոնք . միայն յանցապարտ չափազանց-
 ութեանց կամ դժբաղդ մեղկութեանց հետեւանք-
 ներն են որ շատ սուղի կը նստին մեզ : Եթէ ա-
 մենափոքր չարիքները սկզբնաւորութեան մէջ ան-
 տես աւնըուին , տակաւ այնչափ կը մեծնան , կը
 ստուարանան որ այլ եւս որեւիցէ դարման օգուտ
 չընեն :



Գ Լ Ո Ւ Խ Թ .

ԿԱՆԱՆՑ ՅՂԱՆԱԼՈՒ ԵՒ ԱՐԱՆՑ ՍԵՐԵՎԱԳՈՐԾԻՈՒ
 ԿԱՐՈՂՈՒԹԵԱՆՑ ՏԵՒՈՂՈՒԹԵԱՆ ՎՐԱՑ

§ 93. Աղջկան մը չափահասութեան սկզբը-
 նաւորութիւնը դաշտանի երեւումէն երկու տարի
 անցնելէ ետքը նշանակած էի , վասն զի ծննդա-
 գործելու կարողութիւնը գործնականի մտնելէ ա-
 ուջ ժամանակ մը խաղաղ մնալու է : Բայց այս
 ըսել չէ թէ այդ ժամանակէն անմիջապէս ետքը
 նոյն գործին սկսելու է : Աղջիկներ կան որ 14 տա-
 րեկան հասակնուն մէջ կ'ունենան այդ կարողու-
 թիւն . և այդ պարագային մէջ , երբ բնութիւնը
 զիրենք այդչափ կանուխ կ'արթնցունէ , միշտ խո-

հետութիւն է ժամանակ մ'եւս սպասել , բայց այդ
 ալ առ առաւելն մինչև 20 տարեկան հասակը :

§ 94. Հետազօտութեամբ և փորձառու-
 թեամբ համոզուած եմ թէ ժամանակին ամուսնա-
 ցող և տղաբերող կին մը աւելի կը դեղեցկանայ
 և կ'ուժաւորի , թէ՛ առաջին ծննդապահութեան
 (լօճուսալք) մէջ կանոնաւոր վարմունքով անվնաս
 մնացող կինը իւր յաջորդ տղաբերքներով աւելի
 կ'աւողջանայ : Կիներ կը ճանչնամ որ 10—12 և
 մինչև իսկ 20 դաւակ ծնանելէ ետքն իսկ կատա-
 րելապէս աւողջ մնացած և տանտիկնութեան տա-
 րիքնուն մէջ ալ հրապուրիչ գեղեցկութիւն մ'ու-
 նեցած են . այս վիճակը սովորապէս այն կանանց
 յատուկ է որ իրենց արբունքի սկզբնաւորութենէն
 2—3 տարի ետք , այսինքն 16, 17, 18 տարիքնուն
 մէջ կ'ամուսնանան : Անոնք որ 20 էն ետքի կը
 մնան , շատ դժուարաւ մեր ըսած վիճակը կ'ու-
 նենան : Ատոնք ծննդապահութեան մէջ ենթակայ
 կ'ըլլան յանկարծահաս հիւանդութեանց . ծննդա-
 գործարանք ուժգնապէս կ'ընդարձակուին , որով
 իրենց նախկին վիճակին մէջ չեն կրնար մտնել և
 մարմնոյն միւս մասերուն գիրք ու աւողջ երեւոյթ
 մը չեն տար , վասն զի հիւթերը պէտք եղած չափով
 չեն տարածուիր մարմնոյն մէջ , որպէս է՝ դեռատի-
 ներուն քով : Այս պարագային մէջ ծիծերը կը
 հիւժին , դէմքի գոյնը կը դալկանայ գլխաւորապէս :

§ 95. Մարդ որչափ տարիքն առնէ , պա-
 րագաներն այնչափ մտածել կու տան : Մէկ քանի
 հեղինակներ ըսած են թէ կնոջ յղանալու կարող-
 ութիւնը 20 տարեկանէն սկսելով մինչև 40 տա-

րիքը կը տեւէ . բայց այսու կարծելու չէ թէ աղ-
ջիկ մը 25 կամ 30 տարեկան հասակին մէջ ամուս-
նացած ատեն ալ այդ կարողութիւնը կրնայ տե-
ւել մինչեւ 45 կամ 50 տարիքն :

Նոյնպէս՝ կարելի չէ ընդունիլ նաեւ թէ 1½
տարեկան հասակին մէջ առաջին տղաբերքն ունե-
ցող աղջիկ մ'ալ 3¼ տարու ըլլալէն ետքը կը կոր-
սընցունէ այդ կարողութիւնը : Ընդհակառակն, ես
կը կարծեմ թէ երբ կատարելապէս առողջ աղջիկ
մը 16 տարեկան եղած ատեն և կամ արքունքի
սկզբնաւորութենէն 2—3 տարի ետքը ամուսնա-
նայ , այդպիսին 40 տարեկան եղած ատենն ալ
կրնայ պահել իւր այդ կարողութիւնը , վասն զի
առաջին տղաբերքներն այնչափ յոգնեցուցած չեն
ըլլար զինքն , եւ ընդհակառակն զօրացուցած և
գեղեցկացուցած ըլլալով մարմինը , նպաստած
կ'ըլլան այդ կարողութիւնն ընդերկար պահելու :

Արդարեւ , այս մասին շատ տարբեր կարծիք-
ներ կան . հեղինակներ կան որ կ'ըսեն թէ աղջիկ
մը 25 տարեկանէն առաջ պէտք չէ ամուսնանայ .
ոմանք ալ 30 տարեկանէն առաջ պէտք չէ կ'ըսեն :
Ուրիշներ ալ կ'ըսեն թէ կին մը 36 տարիքին մէջ
այլ եւս կը դադրի կամ դադրեցունել պարտի
սերնդագործութիւնը : Այդ պարագային մէջ կին
մը որչափ ժամանակ կրնայ ունենալ ինքզինքը
սերնդագործութեան նուիրելու համար : — Բայց
ասոնք երկրորդական բաներ են : Իմ գլխաւոր
նպատակս է համոզել թէ ամուսնութեան ժամա-
նակն անցունելու չէ , վասն զի սա՛ ճշմարիտ է թէ
իգական սեռին առողջութիւնը այդ բանէն կա-

խուս ունի : Միայլ է ըսել թէ 16—18 տարեկան
աղջիկ մը շատ կանխահաս է ամուսնութեան , և
թէ այդպիսի դեռատի մայր մը ենթակայ է վտանգ-
ներու : Ծիշդ այդ ժամանակն է որ օրիորդը նուազ
ենթակայ է այն վտանգներուն : Ինական ծնունդ
մը , որ բնութեան սահմանած վայրկեանին տեղի
կ'ունենայ — ինչպէս է ծննդոց մեծագոյն մասը —
վտանգաւոր բան մը չէ մանկամարդի մը համար ,
և մարդկային իրաւանց դէմ՝ յարձակում կը հա-
մարիմ այդ գործողութիւնը վտանգաւոր ցուցու-
նել այնչափ՝ որչափ չէ : Արգելել պէտք է այդպիսի
հեղինակներու ձայնը , վասն զի շատ նոր հարսեր
ասոր անոր կողմէ ցուցուած երկիւղներէն այնչափ
կ'ահարեկին որ այդ վախը իրենց հոգւոյն վրայ
ներգործելով , իրօք վտանգաւոր վիճակներու
կ'ենթարկեն իրենց մարմինը :

§ 96. Երբ մանկամարդ մը իմ ցուցուցած
վիճակիս մէջ կը գտնուի (§ 93) մայր ըլլալու
առիթը թող չի մերժէ , ըսելով թէ յղութեան հե-
տեանք եղած նեղութեանց դէմ դնելու համար
դեռ շատ փոքր է : Վախնալու բան չի կայ : Թող
հեռեւի բնութեան օրէնքին և ասպնով թող ըլլայ
թէ թեթեւ ու դիւրին տղաբերքի մը երջանկու-
թիւնն ու մայրական խիղերը պատրաստ կան իրեն
համար : Անկէց ետքն ալ ժուժկալութեան կանո-
նին հնազանդելով , ընդերկար պիտի կրնայ վա-
յելիլ սերնդագործելու կարողութիւնը :

Օրիորդ մը որչափ ուշ ամուսնանայ , այնչափ
քիչ են այդ ասպարէզին մէջ սննեւալիք խիղերը ,
և այնչափ անհաստատ՝ իւր այդ գործը : Ասիկա

այնպիսի գործնական սկզբունք մ'է, որ շատ կի-
ներ կը հաստատեն ագոր ճշմարտութիւնը :

§ 97. Սակայն էրիկմարդուն համար խնդիրը
տարբեր է, վասն զի սիրոյ պտուղը իւր մէջ կրողը,
անուցանողն ինք չէ : Արական ծննդագործարան-
ները, որ սաղմին կազմութեան կը ծառայեն, իգ-
ականներուն պէս որեւիցէ ժամանակէ մը ետքը
չեն կորսնցուներ իրենց ընդլայնման կարողութիւնը :

§ 98. Բնութիւնը գեղեցիկ սեռին տուած
չէ էրիկմարդուն ունեցած այն ուղիները, որ մաս-
ամբ՝ հիւթերը մարմնոյն մէջ վերադարձունելու,
և մասամբ՝ թանձրացեալ հիւթը մարմնէն դուրս
հանելու կը ծառայեն : Արական սեռին ծննդական
ներքին կազմուածքը պէտք չունի ընդլայնման
ճիգերու, ինչպէս է՝ կանանցը, որ թեթեւ կար-
ծութեամբ մը սաղմը կը նեղէ և ծնունդը կը
դժուարացունէ :

§ 99. Էրիկմարդը սերնդագործութեան մէջ
վայրկենական աշխատութիւն մ'ընի միայն, և
այդ նպատակին հասնելու համար ալ բաւական է
որ իւր սերմն առողջ ու լաւ ըլլայ . կնոջ պէս՝
ներքին գործարաններու չափազանց կարծրութիւնը
արգելք մը չէ այդ գործին : Ուստի 18, 20 կամ
25, ինչ որ ալ ըլլայ իւր տարիքը, ամուսնանալու
համար, տարբերութիւն չընէր իւր վրայ :

§ 100. Ինչպէս որ ըսած եմ արդէն, չափ-
աւորութիւնը թէ առն և թէ կնոջ համար պահանջ-
ելի է, և այս գործին մէջ այրը քանի՛ չափաւոր-
ութեամբ վարուի, այնչափ ընդերկար կրնայ վայ-
ելել այդ կարողութիւնը : Ինչպէս որ տարապայ-


ման չափազանցութեամբ առ առաւելն մէկ տար-
ուան մէջ մարդ կրնայ սպառել իւր սերնդագոր-
ծական կարողութիւնը, այդպէս ալ, ընդհակա-
ռակն, կրնայ պահել այդ կարողութիւնը մինչև
50, 60 տարեկան հասակին մէջ, և աւելի իսկ՝
եթէ չափաւորութիւնը ձեռքէ թողած չըլլայ :

Ասոր օրինակները շատ հազուագիւտ չեն, և
անոնք ալ բացառութիւններ չեն համարուիր, վասն
զի սերնդագործելու երկարատեւ կարողութիւնը
այր մարդուն բնութեան մէջ կայ արդէն, և կըր-
թութեան, կենցաղավարութեան սխալի մը և կամ
արկածի մը պատճառաւ է որ այդ ոյժը ժամա-
նակէն առաջ կը կորսուի, եթէ երբէք այրը այդ
գործին չափազանցութեամբ տկարացուցած չըլլայ
ինքզինքը :

Այս վիճակը յաճախադէպ է այժմ, և այդ
իսկ կարելի է հետեւցունել այն յաճախակի բար-
բանջանքներէն որոնցմով կը պարծին նորփեսա-
ներն իրենց ոյժին և ցուցուցած փորձերուն վրայ :
Ասոնք չեն մտածեր թէ յամրադեցիկ թոյն մ'է այդ,
որով կը փճացունեն իրենց ոյժը . կանայք իրենց
օրէնք ընելու են այդ գործին մէջ իշխողութեան
սանձն իրենց ձեռքը պահել :

§ 101. Նոյնպէս, աւելորդ չեմ համարիր
յաւելուլ թէ սիրոյ առարկային փոփոխութիւնը
տկարացուցիչ միջոց ու պատճառ մ'է էրիկմարդուն
համար, թէպէտև ի սկզբան մեծ գրգռութիւն
կը պատճառէ : Նախ թէ երեւակայութիւնը այդու-
չատ կը գրգռի և իւր չափազանց ուժգնութեամբը
տակաւ կը բթանայ, և երկրորդ թէ՛ մարմնոյն ծծած

հիւթերուն տարբերութիւնը միշտ առողջարեւի չէ : Այն ամուսնութիւնները՝ որոնց մէջ այր և կին իրարու հաւատարիմ են , բարոյապէս շինիչ յատկութիւն մ'ունենալէ զատ ֆիզիքական տեսակէտով ալ շատ առողջարար են : Ադոնց մէջ է որ կը գտնուին քաջառողջ զաւակներ , և այր ու կին ընդերկար կը պահեն լծակցական հաճոյքը վայելելու կարողութիւնը :



Գ Լ Ո Ւ Խ Ժ .

ԺՈՒԺԿԱԼՈՒԹԻՒՆԸ ԿԱՐԵԼԻ ԸՆԵԼՈՒ ՉԱՄԱՐ
ՄԵՎ ՔԱՆԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

§ 102. Ընթերցողացս անհաճոյ եղած չեմ ըլլար , յուսամ , երբ այս գրքիս մէջ երկու խօսք ալ ընեմ ժուժկալութեան համար :

Նրիտասարդաց շատերը կը գանգատին ժուժկալութեան ստիպումէն . կը կարծեն թէ հրապուրանքը շատ է , թէ՛ ներկայիս մէջ գեղեցիկ սեռին գործածած զգեստներն ու արդուզարդերը շատ դիւրաւ կը բորբոքեն արիւնը , և անգամ մը արթընցող դրդումն անկարելի կ'ըլլայ զսպել :

Նախ սա ըսեմ թէ իզական սեռին այժմուս նորատեսակ զգեստաւորման եղանակը հիներէն ընդօրինակուած է : Հելլենուհիք ալ այժմու մեր հնարամիտ արուեստագէտ կանանց չափ լաւ գի-


տէին էգ մարմնոյն հրապոյրներն աչքի զարնել տալու գաղանիքը . սակայն անկարելի է ըսել թէ անոնք գաղափար չունէին զգաստութեան և պարկեշտութեան վրայ : (Մէկ քանի անառակ կանանց վիճակովը և աղաւաղեալ աւանդութիւններով ամբողջին վրայ գաղափար կազմել ուղելը չափազանցութիւն եղած կ'ըլլայ) :

Գեղեցիկին համար զգացուած սէրն իսկ կը կորսուի զգայական հեշտանաց մէջ :

Ժուժկալութեան համար տալիք առաջին խորհուրդս սա է թէ՛ ամէն ոք տեւական վայելքի մը մէջ գաղափարելու է Գեղեցիկը , և մտադրելու է հաստատապէս թէ առողջ մարմին մը , ամենայն կարողութեամբ բան մը գոյացունելու համար սպիտեալ ժուժկալութիւն կը պահանջէ , և թէ՛ շատ դժնդակ ու վնասաբեր է՝ մարմինը վատառողջ վիճակի մը մէջ դնելէ և ունեցած ոյժն ալ յանցապարտ վարմունքով կորսնցունելէ ետքը ստիպուած ըլլալ այդ ժուժկալութեան : Այս գաղափարն իսկ արդէն չափաւորութիւն յառաջ կը բերէ :

Նրկրորդ խորհուրդս ալ զբալումն ու աշխատութիւնն է : Բարեկամներէս մին այդ մոլութեան մէջ ինկած էր բաւական . զանազան ձախորդութիւններ թշուառացոյցին զինքն , որով ստիպուեցաւ օրուան մէջ հազիւ մէկ քանի ժամ միայն ննջելով , գրեթէ տարի մը շարունակ աշխատիլ . այդ ամբողջ ժամանակին մէջ անգամ մ'իսկ չդրդուեցաւ սիրոյ հաճոյքը վայելելու : Ինքնօգնութեան գաղափարն ա՛յն աստիճան հաստատ կերպով արմատացած էր

հիւթերուն տարբերութիւնը միշտ առողջաբեր չէ : Այն ամուսնութիւնները՝ որոնց մէջ այր և կին իրարու հաւատարիմ են , բարոյապէս շինիչ յատկութիւն մ'ունենալէ զատ ֆիզիքական տեսակէտով ալ շատ առողջարար են : Ադոնց մէջ է որ կը գտնուին քաջառողջ զաւակներ , և այր ու կին ընդերկար կը պահեն լծակցական հաճոյքը վայելելու կարողութիւնը :



Գ Լ Ո Ւ Խ Ժ .

ԺՈՒԺԿԱԼՈՒԹԻՒՆԸ ԿԱՐԵԼԻ ԸՆԵՆՈՒ ՀԱՄԱՐ
ՄԵԿ ՔԱՆԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

§ 102. Ընթերցողայս անհաճոյ եղած չեմ ըլլար , յուսամ , երբ այս գրքիս մէջ երկու խօսք ալ ընեմ ժուժկալութեան համար :

Նրիտասարդաց շատերը կը գանգատին ժուժկալութեան ստիպումէն . կը կարծեն թէ հրապուրանքը շատ է , թէ՛ ներկայիս մէջ գեղեցիկ սեռին գործածած զգեստներն ու արդուզարդերը շատ դիւրաւ կը բորբոքեն արիւնը , և անգամ մը արթընցող դրդումն անկարելի կ'ըլլայ զսպել :

Նախ սա ըսեմ թէ իգական սեռին այժմուս նորատեսակ զգեստաւորման եղանակը հիներէն ընդօրինակուած է : Հելլենուհիք ալ այժմուս մեր հնարամիտ արուեստագէտ կանանց չափ լաւ գի-

տէին էգ մարմնոյն հրապոյրներն աչքի զարնել տալու գաղանիքը . սակայն անկարելի է ըսել թէ անոնք գաղափար չունէին զգաստութեան և պարկեշտութեան վրայ : (Մէկ քանի անառակ կանանց վիճակովը և ալաւաղեալ աւանդութիւններով ամբողջին վրայ գաղափար կազմել ուղեւը չափազանցութիւն եղած կ'ըլլայ) :

Գեղեցիկին համար զգացուած սէրն իսկ կը կորսուի զգայական հեշտանաց մէջ :

Ժուժկալութեան համար տալիք առաջին խորհուրդս սա է թէ՛ ամէն ոք տեւական վայելքի մը մէջ գաղափարելու է Գեղեցիկը , և մտադրելու է հաստատապէս թէ առողջ մարմին մը , ամենայն կարողութեամբ բան մը գոյացունելու համար սպիտեալ ժուժկալութիւն կը պահանջէ , և թէ՛ շատ դժնդակ ու վնասաբեր է՝ մարմինը վատառողջ վիճակի մը մէջ դնելէ և ունեցած ոյժն ալ յանցապարտ վարմունքով կորսնցունելէ ետքը ստիպուած ըլլալ այդ ժուժկալութեան : Այս գաղափարն իսկ արդէն չափաւորութիւն յառաջ կը բերէ :

Նրկորդ խորհուրդս ալ զբաղումն ու աշխատութիւնն է : Բարեկամներէս մին այդ մոլութեան մէջ ինկած էր բաւական . զանազան ձախորդութիւններ թշուառացուցին զինքն , որով ստիպուեցաւ օրուան մէջ հազիւ մէկ քանի ժամ միայն ննջելով , գրեթէ տարի մը շարունակ աշխատիլ . այդ ամբողջ ժամանակին մէջ անգամ մ'իսկ չդրդուեցաւ սիրոյ հաճոյքը վայելելու : Ինքնօգնութեան գաղափարն ա՛յն աստիճան հաստատ կերպով արմատացած էր

իւր մտքին մէջ որ իւր նպատակին հասնելէ զատ ուրիշ բանի վրայ չէր խորհեր, և ժամանակ անցնելէ ետք իւր դրդումն ալ չափաւորուելով՝ փրկուեցաւ իւր մոլութենէն :

Երրորդ խորհուրդս իգական սեռին կը վերաբերի : Կանայք, ընդհանրապէս, օրինաւորապէս ամուսնացեալ ըլլան, թէ՛ ոչ, — վասն զի հեշտասիրութեան զոհերը նոյնն են միշտ — այնպէս նկատուելու են թէ իրենց սիրոյն առարկան թանկագին մեքենայ մ'է, որ շատ գործածուած ատեն ո՛չ միայն կը բթանայ, այլ կը կորսնցունէ իւր տոկոսութիւնը :

Երբ այր և կին մտադրեն երկար ու երջանիկ կեանք մը վայելել, շատ դիւրին է իրենց նպատակիլ չափաւորութեան, որ քաջողջութիւն կու տայ իրենց, որ կ'աւելցունէ իրենց խինդերը և խաղաղ ու անքոյթ ապագայ մը կ'ապահովէ :

Արդարև, կրթեալ կանանց հետ տեսակցութիւն ունենալը աւելի յարմար է ժուժկալ մնալու համար, քան թէ գեղեցիկ սեռէն հետո ապրիլը վասն զի այս վերջին պարագային մէջ երեւակայութիւնը կը գրգռի լիտի պատկերներով, և առիթ կ'ընծայեցունէ հակաբնական շուայտութեանց : Մարդ աշխատելու է յոգնելու չափ, այնպէս որ անկողին մտած ատեն անմիջապէս քնանայ : Առաւօտուն արթնցած ատեն անմիջապէս ցատքել ելնելու է անկողինէն առանց ընդերկար մնալու հոն, որպէս զի երեւակայութիւնը չմարմաջի հեշտախտիկ պատկերներով :

Սեռային խիզախ դրդումը հանդարտեցունելու համար լաւ է պաղ ջուրով լուալ ծննդագործարան-

ները : Պէտք է պատուաւոր ընկերութեանց, բարոյական շրջանակներու մէջ մտնել, ուր անպարկեշտ խնդրոց վրայ չի խօսուիր յաճախել այն ժողովներն ուր բարոյաւոր ու կրթեալ կիներ և օրիորդներ միայն մուտք ունին : Պէտք չէ առանձին մնալ, վասն զի առանձնակեցութիւնը հեշտագրգիւզացմանց շատ առիթներ կ'ընծայեցունէ երեւակայութեան : Մասնաւորապէս յանձնարարելի է նաև կերտութեան խիստ կանոնաւորութիւն, այսինքն շատ անդաւոր կերակուրներէ և արիւնն ու ջլային դրութիւնը գրգռող խմելիքներէ հետո մնալ : Արդէն չորրորդ գլխուն մէջ մէկ քանի միջոցներ ցոյց տուած եմ. եթէ ընթերցողներս հետեւին անոնց, անշուշտ եմ որ զգաստ կը մնան :



Յ Ա Ի Ե Լ Ո Ի Ա Մ

ՍԵՆԱՅԻՆ ԳՐԴՈՒՄ ՅԱՌԱՋ ԲԵՐՈՂ ԿԱՄ ԳՐԳՌԻՉ ԴԵՂԵՐՈՒՆ
ՎՆԱՍԱԿԱՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

§ 1. Կարծեմ թէ հոս այնպիսի խնդրոյ մը ձեռք զարկի, որ արժանի է մարդկային ցեղին օգտակար ըլլալ ուզող անձի մը քննութեան ենթարկուելուն :

Մեր ուշադրութիւնը գրաւող բանը՝ յաճախ մեծ չարիքներու պատճառ եղող այդպիսի դեղեր-

ուն զեղծումը չէ լուկ, այլ անոր ուզիղ գործածու-
թիւնն ալ պէտք է որոշել, ցուցունելու համար թէ
մինչև ո՞ր աստիճան կրնան գործածուիլ, և ե՞րբ
անհրաժեշտ է ադոնց գործածութիւնը: Նոյն իսկ
բարոյական տեսակէտով ալ կարելի է ըսել թէ
սեռային դրդումը գրգռող այդ դեղերու գործած-
ութիւնը ո՞ր պարագայի մէջ ներելի, և երբ դա-
տապարտելի է: Սակայն այդ կէտը բժշկին չի
պատկանիր, վասն զի սա միայն մարմինը և անոր
պահպանումը տեսակէտ ունի իրեն, թէպէտ ան-
ուրանալի է թէ բարոյական զգացումն ալ մեծ
ազդեցութիւն ունի մարմնոյն քաջառողջ կամ
տկար ըլլալուն վրայ:

§ 2. Երբ մարմնոյն վատառողջութիւնը ձեռք
առնենք, այսինքն մարդու սերնդագործելու ան-
կարողութիւնը դարմանելով, անոր սեռային կա-
րողութիւնը վերահաստատել ուզենք, արդարեւ
դեղերու պէտք ունինք. բայց ադոնք բժշկական
դեղերու կը պատկանին և չեն այն դեղերը զորս
առողջ անձինք կը գործածեն այն նպատակաւ:

§ 3. Ըսել չեմ ուզեր թէ սիրոյ կամ լաւ եւս
հեշտանքի զոհարերութիւններ ընելու համար դեղ-
եր փնտռող և այդ գործին մէջ իւր դրդումը զօր-
ացունողը բնութեան սահմանէն դուրս չեղնիր, չի
վնասուիր. ընդհակառակն, այդպիսին կը հակա-
ռակի բնութեան, կը բռնադատէ իւր մարմնեղէն
մեքենան՝ անոր ընթացքին հապճեպ արագութիւն
տալով, և հետեւապէս ժամանակէն առաջ կը մաշ-
եցունէ զայն և աւերմանը պատճառ կ'ըլլայ:

Մարդ չյարգելով այս ճշմարտութիւնը, յաճախ,

գիտնալով կը մեղանչէ. իր հեշտանքի զգացումը
կը յաղթէ ամէն բանաւոր պատճառի. և երբ
մարդ անգամ մը վարժուի, ապագային մէջ
վատոյժ մնալը հոգ չընելով, վայրկեանական հա-
ճոյք մը վայելելու կարելիութենէն օգուտ քաղել,
ադկէ յառաջ գալիք վնասը չի տեսներ:

§ 4. Այդպիսի պարագաներու մէջ է, ահա,
որ մարդ իրեն առաջարկուած որ և իցէ դեղը կը
գործածէ առանց հարցունել փնտռել իսկ ուզելու
թէ մի՞ գուցէ վնասակար և մինչև իսկ մահաբեր
հետեւանքներ ունենայ իւր մարմնոյն վրայ:

Վերջապէս, մէկ խօսքով, սեռային դրդումը
զօրացունելու և բարձրացունելու նպատակաւ դեղ
գործածելը, ի՞նչ պարագայի մէջ որ ալ ըլլայ,
մեծ ու անդարմանելի սխալ մ'է:

Շատեր, իմ ճանչցածներէս, մեռած են այդ
տեսակ դեղերու գործածութեամբ:

Բայց ոչ թէ մահացու ըլլալու չափ շատ քա-
նակութեամբ, այլ սեռային դրդումը գրգռելու
համար առնուած քիչն անգամ, զանազան պատ-
ճառներով, ակնկալուած արդիւնքը չունենար.
նախ՝ թէ իւր առթած պատիկ գրգռութիւնը բնա-
կանին պէս հաճոյական զգացում մը յառաջ չբե-
րելէ զատ, ընդհակառակն՝ ապա ջիղերու շատ
ցաւագին կծկումներ և հետեւապէս, չափազանց
մեղկութիւն և ջլատութիւն կը պատճառեն:

Անկէց ետքը յառաջ կու գայ գործարանին այն
յամառ կծկումները, որք տակաւ ցաւագին այրուցքի
մը կրնան հասնիլ. այդ պարագային մէջ եթէ հեշտ-
ասէրը անխոհեմ փութաջանութեամբ վերսկսի իւր

հեշտանքը, սերմի տեղ արիւն կը հոսէ միզանցքէն՝ Աստուած պահէ մարդ այդպիսի ցաւերէ : Ասկէ զատ, նոյն իսկ գործողութիւնը ցաւագին կ'ըլլայ և այդ գերագրգիւ մոլուցքը այնպիսի իմն կը յարձակի մարմնոյն, որ շատ անգամ կատարեալ անկարողութիւն մը կը հետեւի և մարդ կը զրկուի այն հաճոյքէն իսկ որուն առաւելութեանը կը բաղձար :

Վնասակար են նաեւ ամէն ուրիշ զօրաւոր քրգո՞ւիչք . իսկ նուազ վնասակար են բնական զօրացուցիչ (բայց ոչ քրգո՞ւիչ) դեղերը :

§ 3. Ո՞վ որ բնութեան տուած միջոցներէն չկրնար օգտուիլ, ո՞վ որ անզգայ է բնական զգացումներու, այնպիսին թող չփորձէ ուժգին քրգո՞ւիչ դեղեր գործածել . թող վստահ ըլլայ թէ ազոնք քիչ ժամանակէն կատարեալ վատոյժութիւն մը պիտի տան իրեն :

Բայց այս ըսել չէ թէ այդպիսին չկրնար վերստանալ իւր խինդերը : Ծննդագործարանք իրենց գործին ու արդիւնքին նկատմամբ մարմնոյն ընտրելագոյն մասը կը կազմեն . բայց իրենց դիրքովը, մարմնոյ մնացորդ մասին հետ բաղդատմամբ, շատ իմաստուն և սքանչելի կարգադրութեամբ, երկրորդական կարեւորութիւն ունեցող տեղ մը կը բռնեն և կենսական ոյժին այն ատեն վնասակար կ'ըլլան, երբ իրենց վրայ ուրիշ հիւանդութիւններ երեւան գան—որոնց մանրամասնութեան մոնելու հարկ չի կայ հոս — և այդ հիւանդութեանց ապականութիւնը կենսական ոյժին հետ առընչութիւն ունեցող ուրիշ կարեւոր գործարանաց վրայ ներգործէ :

§ 8. Բայց, այսու ամենայնիւ, ըսել չեմ ուզեր թէ ամոլներէն մէկին կամ միւսին թմրած քրգոուութիւնը պէտք չէ դարմանել : Բժշկին ձեռքով տրուած դեղերը, կանոնաւոր չափերով, զարթնում մը յառաջ կը բերեն : Մտունդն ալ մեծ դեր ունի ազոր մէջ : Մանաւանդ՝ մէկ երկու գաւաթ տաք զինի (դարիճկնիկով խառն), ուժով արգանակ մը շատ լաւ արդիւնքներ ունեցած են իմ հիւանդներուս վրայ :

§ 11. Վերջապէս, եզրակացունելով խօսքս, կ'ըսեմ թէ ամէն ոք լաւ կ'ընէ երբ այդ դրդման քրգոուութիւնը բնութեան թողու . թէ՛ առողջ մարդը պէտք չունի այդ զօրացուցիչ դեղերուն, թէ՛ հիւանդն ալ պարտի քննել և դարմանել տալ իւր հիւանդութիւնը :

Վերոյիշեալ անկանոն վիճակներուն համար ըսուածը ընդհանրապէս կարելի է ընդունիլ նաև մարմնոյն ուրիշ տկարութեանց համար : Կերառութիւնը, ամբողջ կենցաղավարութիւնը պէտք է որ գլխաւոր մասն կազմեն դարմանման բժշկին տուած դեղերը առանց ազոնց օգուտ չունին : Բժշկին գլխաւոր գործը՝ պարագաներու զանազանութիւնը մասնաւորելն է : Երբ խնդիրը երիտասարդական հասակի մէջ սեռային կարողութեան նուազութիւնն ըլլայ, երկու պարագաներ կան մտածելու . կամ այդ անձը արդէն վատառողջ մէկն է, որուն ամբողջ գործարանները և մասնաւորապէս մկանները զօրաւոր և արտադրիչ ոյժ չունին, կամ թէ՛ ադ անձն ուժեղ է բայց այս գործին մէջ միայն չի կրնար պէտք եղածին չափ տոկալ : — Վատառողջ անձի

մը գրգռիչ դեղ տալ ուղեւը, եթէ ոչ անոր կեանքին, գեթ անոր առողջութեան հետ դաւաճան խաղ մը խաղալ է: Այս պարագային մէջ ալ բժշկին պարտքն է ամենակատարեալ ժուժկալութիւն պատուիրել:

ԱՌՈՂՋ, ԶՕՐԱԻՈՐ ԵՒ ԲԱՐԵԿԱԶՄ ԶԱՒԱԿՆԵՐ
ՄԵԱՆԵԼՈՒ ԱՐՈՒԵՍՏԸ

Այս արուեստը գաղտնի միջոցներու և դեղերու վրայ հիմնուած չէ. ադոր գաղտնիքն է առն և կնոջ կատարեալ յարմարութիւնը. և երկու կողմին ընտրութեան համար պէտք եղածն ալ գրած ենք նախընթաց գլուխներուն մէջ: Բայց տկարակազմ ամուսնին ալ կրնան առողջ ու բարեկազմ զաւակներ ծնանիլ, երբ կանոնաւոր կեանք վարեն, և սեռային դրդումը գոհացունելու մէջ չափը չանցունեն: Վատառողջ այր մը և զօրաւոր ու առողջ կին մը շատ առողջ զաւակներ կը ծնանին յաճախ, բայց ասոր հակադարձը միշտ նոյնը չըլլար: Սակայն, լաւագոյնն ասին է որ այր և կին հոգուով ու մարմնով առողջ ու զօրաւոր ըլլան: Ասկէ զատ, պէտք է նաև միասիրտ և միահոգի ըլլան, վասն զի բռնազբօսիկ կամ, սանկ ըսենք, պարտաւորիչ միաւորութիւն մը կամ բոլորովին անպտուղ կը մնայ և կամ իւր արգասիքն եղող զաւակները միշտ գեղեցիկ ու զօրաւոր չեն ըլլար: Ամուք պէտք չէ որ լծակցական հաճոյքը վայելեն, երբ յոգնած ու պարտասած կամ արբեցած, բանակուած,

բարկացած և յուզուած են: Հիւանդոտ անձինք պէտք չէ որ ամուսնանան: Հիւժախտաւոր, լուսնոտ, կծկուճաւոր անձինք յաճախ անկարող կ'ըլլան ծննդագործելու, և վատառողջ՝ թշուառ զաւակաց ծննդեան պատճառ կ'ըլլան, մանաւանդ՝ երբ կինն ըլլայ այդ հիւանդութեանց ենթական: Ամուք պարտին սեռային հաճոյից վայելումը կարելի եղածին չափ ուշկէկ գործադրել, որպէս զի յաջորդ անգամուն համար արգասաբեր հեղուկէն բաւականաչափ պատրաստուի. մանաւանդ թէ այդու աւելի հաճոյական և զօրաւորապէս տեղի կ'ունենայ ամէն ինչ: Պէտք է լաւ սնունդ առնել, զաղջ լոգանք ընել, պայծառ երկնից տակ շրջագայիլ, հաճոյալի առարկաներու հետ զբաղիլ, գձուձ ու նեղացուցիչ կիրքերէ հեռանալ. երգիծանքն ու փոխադարձ պարսաւն ամենեւին տեղի ունենալու չեն: Ասոնցմէ զատ, կինը պարտի երեւակայական հաճելի պատկերներով զբաղիլ, գեղեցիկ մանչերու և աղջիկներու պատկերներ ու արձանիկներ ունենալ իւր շուրջը, վասն զի երեւակայութիւնը, հաւատացէ՛ք, դիւթական մեծ զօրութիւն մ'ունի այս պարագային մէջ: Ամուք ամէն բանէ առաջ շանալու են սերնդագործութեան արտողութիւնը մոլեգնաբար չլիտարել, այլ՝ հանդարտ ու խաղաղիկ, և՛ սիրոյ արբուցութեան մէջ զիրար յանկուցանելով, — կարելի է այդ գործին համար գաւաթ մը գինիով թեթեւ իմն զօրացունել մարմինը, բայց ուժգին գրգռիչ դեղերը, դարձեալ կ'ըսենք, միտասկար են:

* * *

Հարսանեաց օրերուն մէջ կատարուած վնասարեք կերուխումներուն և հանդէսներուն վրայ չենք ուզեր ծանրանալ հոս : — Գեղակազմ զաւակ ծնանելու գլխաւոր միջոցը յղութեան ատեն յարմար վարժունք ունենալն է*) : Յղի կինը պարտի զգոյշ կենալ ամէն տեսակ յոգնեցուցիչ աշխատութիւններէ և սաստիկ կիրքերէ, յուզումներէ . զգուշանալու է նաև — թերեւս ծիծաղին ըսածիս — հաշմանդամ, ահարեկիչ և զարհուրեցուցիչ անձերէ և տեսարաններէ . ըսել կ'ուզեմ, չստակալ**):

Յղութեան ատեն լծակցական յարարերութիւնները հազուադէպ ըլլալու են : Յղի կինը բաց, մաքուր օդոյ մէջ շարժումներ ընելու են

*) Յղինը շատ անգամ նեղիչ փխտում մը կ'ունենան, որ մինչև յղութեան կէսը կը տեսէ : Որչափ նեղիչ ըլլայ այդ, անկարելի է կատարելապէս դադարեցունել, բայց կարելի է չափաւորել : Ատիկա յառաջ կու գայ տեսակ մը ջղային գրգռումներէ, որ յղինը յատուկ է : Եթէ այդ փխտումները շատ ուժգին ըլլան կը վնասեն Սէ մօրը և Սէ սալմին, մանաւանդ Սէ կրնայ ըլլալ որ վիժման կամ կանխահաս ծնունդի մը պատճառ ըլլան : Արիւնաշատ կանանց համար ալ օգտակար է բազկէն երակահատումիւն մ'ընել : ուստի, այս տեսակ յամառ փխտումներու ատեն խոհեմութիւն է տան բժշկին խորհուրդ հարցունել, որ Սերես եծեր (æther 15 կաթիլ), սառն, ափսոն և կամ ասոնց նման ամորիչ դեղեր կը տնօրինէ :

***) Գիտութիւնը տուած է այժմ իւր վճիռն այս մասին, այսինքն Սէ յղութեան մէջ կինը իւր հոգեկան կեանքին ալ մասնակից կ'ընէ սալմը . և մօր եռանդուն երեւակայութիւնը կամ զարհուրանալու զգացումները խորապէս կ'ազդեն կազմակերպուող սալմին մարմնոյ վրայ : Առանց մօրն զգածման, այսինքն մինչև որ մայրը չզգածուի, արտաքին առարկաները ազդեցութիւն չունին սալմին վրայ :

առանց մարմինը յոգնեցունելու . դիւրամարս ուտելիքներով անանելու են . և աւելի՛ բուսական : Գործածելու չէ կծու համեմներ և ոգելից ըմպելիք : Յղի կնոջ նեղութիւն պատճառող ամէն նեղ զգեստ, foras, կապ մէկդի ձգելու է . թեթեւ, բուրդէ և տաք պահող զգեստ մը բաւական է . վնասակար են ամէն սարսեցուցիչ շարժումները . նոյնպէս նաև՝ ջղային դրութեան վրայ ուժգին ազդեցութիւն ունեցող յուզումները, սուր հոտերը, ցուրտն ու տաքը : Ծանր բաներ վերցունելէ կամ կրելէ զգուշանալու է : Այդու՛ չեն պատահիր նաև կանխահաս ծնունդներ (վիժումներ), որք կենցաղաւարութեան անկանոնութիւններէ դիւրաւ յառաջ կրնան գալ :

Ահա առողջ և բարեկազմ զաւակներ ծնանելու ամբողջ գաղտնիքը այս է . այդ գաղտնիքն ուրիշ տեղեր փնտռողը չարաչար կը սխալի :

Կանխահաս ծնունդի (վիժման) հակամէտ կրնները յիշեալ կանոններուն լաւ ուշադիր ըլլալէ զատ, պարտին նաև երկաթաւոր հանքաջուրի մէջ լոգանալ և խմել իսկ այդ ջուրէն, բայց ոչ թէ յղի եղած ատեննին : Յղութեան ատեն շատ պառկելու է, և որովայնն ու մէջքը շփելու է գինիի և կամ ուրիշ ոգիներով (spiritus) :

Տղարբքէն ետքը՝ զաւակին կաթ տալու խընդիւրը կայ *) : Տղարբքին հետեւող վազուկը և

*) Առողջ ու զօրաւոր կինը պէտք է որ իւր ստինքէն սնու-

մորթին արտաշնչութիւնը (քրտնիւր) օգտակար են տղարեր կնոջ : Տղարերող կնոջ համար պէտք եղած բանը հանգիստն է . թէ՛ չուտով ոտքի ելնելը և թէ՛ մտաւորական կամ նրեթական պատճառներով յառաջ եկած գրգռութիւնները շատ կը վնասեն իրեն : Տղարերը ամէն բանէ առաջ չափազանցութիւններէ զգուշանալու է : Սեռային վայելքը, ինչպէս ըսած ենք նախընթաց գլուխներուն մէջ, պէտք է երկու և կամ ի հարկին երեք ամիս յետաձգել : Մայրը ձեռքէն եկածն ընելու է որ լոկ իւր կաթովը սնանի իւր զաւակը . բայց այդ ալ շատ երկար տեւելու չէ, այսինքն մինչեւ որ դաշտանահոսումն սկսի նորէն : Մայրը ընդհանրապէս Յ ամիսէն աւելի կաթ տալու չէ զաւակին, թէ չէ՝ շատ կը նեղուի : Իսկ եթէ այդ միջոցին մէջ դաշտանահոսումն ըսկսի, և կամ նոր յուրթիւն տեղի ունենայ, մայրը պարտի անմիջապէս դադրեցունել կաթ տալը :

* * *

Երկու խօսք ալ ծննդապահութեան (լօճուսա-

ցանէ զաւակը, եթէ կ'ուզէ շարունակ առողջ մնալ, Տղարերբէն ետքը կաթ տալու անկարող չըլլալու համար ալ, մէկ քանի ամիս առաջ պատրաստուելու է աղոր. այսինքն՝ օրիով լուալու է պլոտկունքը : Տղարերբէն 12 ժամ ետքը պէտք է որ մանուկը սոխնրին դուրս, որպէս զի կաթը չփախի և ուրիշ հիւանդութեանց տեղի չտրուի : Եթէ տղարերի ջերմ ըստածը (բայց այս շփոթելու չէ կաթի ջերմ ըստածին հետ, զոր ամէն տղարեր կին կ'ունենայ . բնական է այդ) երեւան գայ, որ այդ ալ արգանդի, իգափողին, ձուարանի և ստորին որովայնի գործարաններուն բորբոքումներով կ'ըլլայ, այդ ատեն անպատճառ բժշկի ցուցունելու է :

լըք) վիճակին : Այդ միջոցին, դրացի կամ բարեկամ կանանց «աչքի լոյսի» այցելութիւնները յետաձգուելու են : Ծննդապահ կնոջ սնունդին համար օգտակար են մսի ջուր, բրինձ, մուրկ, մածուցիկ դեղեր և խմելիք : Եթէ փորը չեղնէ, վնաս չունի մէկ երկու օր սաստիկ լուծողական դեղ տալու չէ : Սալորը ջուրին մէջ եփելէն ետքը այդ ջուրին գործածութիւնը վնաս չի տար : Կնուէնքի առթիւ տրուած խնճոյքն ու հանդէսը, յաճախ, մեծ վնասներ կուտան ծննդապահին : Այս պատճառաւ 6—8 շաբաթէն առաջ կատարելու չէ կնուէնքը, վասն զի այդ առթիւ ծննդապահ կինը կը ստիպուի ցուցուած առողջապահական կանոններու հակառակ գործել :

Այս պայմաններով՝ երախան կը բարգաւաճի և մայրն առողջ կը մնայ և կրնայ աւելի եւս առողջ ու գեղեցիկ զաւակներ ծնանիլ .

ԱՌՆ ԱՆԿԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ

Սիրոյ յուայտութիւնները, սերմին՝ ժամանակէն առաջ սպառոււմը, յոգնեցուցիչ մտաւոր աշխատութիւնները, ոգելից ըմպելիքի չափազանց գործածութիւնը, հիւանդութիւնը, որեւիցէ մէկ կողմին անդամալուծութիւնը յաճախ անկարող կ'ընեն այրը սեռային յարաբերութեան : Բայց այդ վիճակները կրնան բարւոքիլ առաքինի կեանքով, ժուժկալութեամբ, պաղ ջրով լուացմամբ, լոյսալով, տուշով : Ուստի, այս վիճակները դարմանելու

համար ճարտար բժշկի մը դիմելու է: — Ակամայ սերմերթութեան վրայ արդէն գրած ենք: — Եթէ ստամոքսի խանգարումներ ըլլայ պատճառը, պէտք է ստամոքսը զօրացունող դառնահամ դեղերով վերահաստատել մարտողութիւնը: Համեմ, վերմութ և քինքինա կրնան գործածուիլ այս պարագային մէջ:

Երբ մարմինը կանոնաւոր սնունդ առած չըլլալուն համար տկարացած ըլլայ, պէտք է հաւկթախառն կաթ, հաւու և աղաւնիի միս, զօրաւոր մսի ջուր և մինչև իսկ գորտ ու կրեայ ուտել: Իսկ խմելիքի համար յարմարագոյն է լաւ հին գինին որ կ'օգնէ մարտողութեան: Լաւ խմորուած զօրաւոր գարեջուրն ալ օգտակար է: Չափաւոր քունն ու հանգիստն ալ պէտք է որ համաձայն ըլլան աշխատութեան ու յոգնութեան հետ: Մաքուր օդոյ վայելքն ալ մտնալու չէ. ամենեւին գործածելու չէ ուրիշ որեւիցէ քիմիական կամ գալանի բաղադրութեամբ դեղեր:

Սեռային գործարանաց թերութիւնները, հաշմութիւններն ու տձեւութիւնները կանոնաւորելը բժշկին գործն է: Արուեստը մեծ դիւրութիւններ ունի այժմ, որոնցմով կրնայ ծննդագործարանաց շատ անբնական վիճակներ բնական ու կանոնաւոր վիճակի մը վերածել:

Էրիկմարդուն անկարողութիւնը կարծուածէն աւելի հազուադէպ է: Անդաւակ ամուսնութեանց մեծագոյն մասին մէջ պատճառը կինն է: Էրիկմարդուն անկարողութեան պատճառը կամ ընդհանուր է, կամ տեղական: Մարմնական խօթութիւն, վերջին աստիճանի հիւժախտ, ամբողջական

ծիւրում, ողնածուծի կամ ուղեղի հիւանդութիւններ և ծերութիւն յաճախ պատճառ են անկարողութեան: Այս կարգէն են նաև այն հիւանդագին վիճակները, որք սեռային չափազանց շուայտութիւններէ յառաջ եկած մեծ սպառումներէ կը ծագին: Գիջութեան երկարամեայ սովորութիւնն ալ յաճախ աղէպ պատճառ մ'է անկարողութեան: Ասկէ զատ, մարդ անկարողութեան ենթակայ կ'ըլլայ նաև ապշութեան և ուրիշ մտաւոր խանգարման ատեն: Էրիկմարդուն անկարողութեան տեղական պատճառներուն կարգէն են նաև ամորձիքին ուռէցքը, գաղիական ակտի և քաղցկեղանման այտումները: Վերջապէս կարգ մը ուրիշ պարագաներ ալ կան որ անկարողութիւն յառաջ կը բերեն և որոնց պատճառը յայտնի չէ. տարբալուծութիւնը այս խնդիրը չլուսաբանելէ զատ, մութը կը թողու զմեզ սերմին վիճակին վրայ ալ: Բայց մանրադէտը կը ցուցունէ թէ այդպիսի պարագաներու մէջ սերմնորդները դանդաղ կամ ջնջուած են, կամ թէ սերմը շատ աղքատ է, ջրոտ է և շատ անօրացած է:

ԿՆՈՁ ԱՆԿԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ

Ինչպէս քանիցս գրած եմ, կնոջ սեռային անկարողութիւնը կրնայ ըլլալ որ գործարանային տձեւութեան, կրնայ ըլլալ նաև որ պատահական հիւանդութեանց հետեւանք ըլլայ: Չուարանին, իգափողին ծուրութիւնը, ուռէցքը, կարծրութիւնը, ջրգողութիւնը և կամ արգանդին ամբողջական

չգոյութիւնը, արդարեւ, այնպիսի թերութիւններ են զորս արուեստը չի կրնար միշտ բուժել կամ կանոնաւորել: Բայց շատ կարծր շարոյր մը, շըրթունքներու տձեւութիւնը, իգափողին՝ ի ներքուստ կպած ըլլալը կարելի է այժմ արուեստով կանոնաւորել. փայլափուշտի և ուրիշ պատուածքներն ալ վիրաբուժական զիւրին գործողութեամբ դարմանելով՝ ծննդագործելու կարող վիճակի մէջ դնել կինը: Արգանդի, իգափողի և ներքին ծնընդագործարանաց հինցած բորբոքումներ և ուռէցքները կարելի է բժշկել դարմանելով: Վերջապէս՝ ուրիշ շատ վիճակներ ալ կան, որք արգելք են սեռային արգասաբեր յարաբերութեան, բայց արուեստին դանազան ճիւղերով կարելի է անոնց առաջըն առնել. միայն թէ՛ իւր անկարեւոր ինչ չհամարելով զանոնք, պէտք է ճարտար բժշկի մը խորհուրդ հարցունել. վասն զի առանց բժշկի դարմանումին յետինն չար քան դառալինն կ'ըլլայ: Այս կարգէն են նաև ջլային տկարութիւնը, պակասաւոր կամ անկանոն դաշտանահոսումը, մաղասահոսութիւնը (ձերմակ դաշտան) և այլն և այլն:

* * *

Բայց բոլորովին տարբեր խնդիր է երբ ամուսններէն մին միւսին դէմ հակակրութիւն ունենայ. բժշկութեան արուեստը չի կրնար բան մ'ընել այդ վիճակին. ենթակայք պէտք է զիրար բժշկեն: Այս պարագային մէջ կնոջ դատողութիւնը կամ կամքը շատ բան կրնայ ընել, մանաւանդ՝ երբ

նկատողութեան աւնրուի թէ ամուսնական միութիւնը ելած լմնցած գործ մ'է և պէտք է համակերպել վիճակին: Ասիկա շատ դիւրին է, երբ այրը չափաւոր ու տեւական վարմունքով բեկանէ կնոջ յամառութիւնը, առանց սակայն խիստ ու բիրտ միջոցներու ձեռնարկելու: Այր մը կնոջ հակառակութեան յաղթելու համար շատ միջոցներ ունի իւր տրամադրութեան տակ: Ասիկա խնդիր մ'է որուն վրայ ստուար հատորներ կրնան գրուիլ: — Ինչ որ է: Մենք հոս կնոջ շնորհին արժանանալու խնդրոյն ակնարկել կ'ուզենք: Եւ ինչ բան է այդ: Անյողդողդ, մշտակա՞ց բան մ'է այդ, թէ՛ յարափոփոխ ցնորք մը: Որեւիցէ արժանիքի՞ մը վրայ հաստատուած է այդ, թէ չէ՛ դիպուածի սնոտի խաղ մը, պատրանք մը: Գեղեցիկ այրերն են միշտ որ կնոջ սիրտը գերի կը վարեն. խելացիներն են, այլանդա՞կ անձերն են, թէ չէ՛ հասոյալի, հուժկու կամ փափկակազմ և կամ աղնուական անձերը: — Առն ամէն մէկ արժանիքը կամ առաւելութիւնը կրնայ դիւթել կինը: Գեղեցիկ այրերը խիզախ յաղթանակներ կ'ընեն, այդ ճշմարիտ է. բայց շատ կիներ ալ կատեն էրիկմարդուն գեղեցկութիւնը: Եթէ ընդունինք թէ տգեղ այրերն ընդհանրապէս անյաջող կ'եղնեն, միւս կողմանէ չենք տեսներ թէ կանայք իրենց ընկերական դիրքը, իրենց պատիւը, իրենց համբաւն առ ոչինչ համարելով, այնչա՞փ բուռն զգացմամբ կ'երթան անձնատուր կ'ըլլան տգեղ անձերու գրկաց մէջ... Միուպոյին, այդ տգեղ մարդուն, ծաղկախտէ ցտուած այդ վագրագէ՞մ — ինչպէս ըսած

է ինքն իրեն համար—մարդուն գրկաց մէջ: Դուքս
 Կլոստր անուն ճիւղաղային սապատողը չէ՞ր որ իւր
 արիւնաթաթաւ գոհին գեղեցիկ կնոջ անձնուէր
 համակրութիւնը վայելեց վերջապէս: — Առաջին
 պարագային մէջ, տարապայման տգեղութեան՝
 այնպիսի գերմարդկային բան մ'ընկերացած էր,
 որուն չէին կրցած դիմադրել կանայի սիրտերը. և
 այդ՝ այնպիսի իմն սաստկութեամբ յանկուցած էր
 զանոնք որ խելքերնին թուուցած են: Երկրորդ
 պարագային մէջ՝ լեզուն է, լեզուն՝ որ յանչափս
 կը հրապուրէ կիները: Հոս առնական ոյժն է որ կը
 յանկուցանէ և հոն անազգեցիկ կը մնայ. մէկուն
 համար մարմնոյ նուրբ կազմն է որ շնորհի կ'արժա-
 նանայ, իսկ միւսին հակակրութիւն կը պատճառէ:
 Կանանց ումանց համար այլանդակ այրերը շատ սոս-
 կում կը պատճառեն, և կիներ ալ կան որ պարզ
 մարդուն կու տան իրենց ձեռքն ու սիրտը:

Հեռացանք մեր նպատակէն: — Ո՛չ: Չափա-
 զանց յաճախադէպ են այն ամուսնութիւնները և
 այն ամուսնական վիճակներն, ուր մթին գաղա-
 փարներ կը դառնացունեն առն զգածումը, երբ
 մտածէ թէ, « Ի՞նչ կրնամ ընծայել կնոջս, ի՞նչ-
 պէս պահանջեմ իրմէ իւր անկեղծիկ սէրը, եթէ
 ինձմէ աւելի գեղեցիկ, աւելի խելացի ու երջանիկ
 այրեր տեսնէ: » Չէ՞ մի որ շատ անգամ այրը չի
 խելամոտիւր կնոջ հոգեկան բնութեան, չէ՞ մի որ
 շատ անգամ այրը անտարբեր կ'ըլլայ անոր նկատ-
 մամբ. և քանի՛ յաճախ այդ վիճակն է պատճառը
 որ այդպիսի ամուսնութիւններ անդաւակ կը մնան:
 Նոյն իսկ, վերջապէս, քանի՛ յաճախ, այրն իւր

կնոջ անընկճելի հակակրութիւն մը կը ներշնչէ իրեն
 դէմ: — Այդ, ամէն էրիկմարդ, որչափ որ տգեղ
 ալ ըլլայ, կրնայ յաջողիլ ոչ միայն շահիլ իւր կինը,
 այլ կատարելապէս երջանիկ ընել զանի, երբ ազ-
 դեցիկ միջոցներու ձեռնարկէ: Եթէ կինը միշտ
 իսկ հակակրութեամբ և միայն պարագաներուն
 համակերպելով պսակուած ըլլայ, խոհուն ու խել-
 այի և ազնիւ էրիկ մը կը յաջողի վերջապէս սիր-
 աշահիլ իւր կինը. և ադոր ալ միակ գազանիքը
 ինքզինքն իւր կնոջ յարգել տալու մէջ է. յար-
 գելի ընել իւր նկարագիրը, իւր առնական գոր-
 ծունէութիւնը, արիւթիւնն ու կորովը:

Այս յարգանքը ամէն էրիկմարդ կրնայ վա-
 յելել չափաւոր ու անկիրք վարմունքով: Եթէ
 կինն սկսի յարգել զայրն, այն ատեն նա արժա-
 նիք մը կ'ունենայ անոր առջեւ և այնպիսի իմն
 կը յանկուցանէ զանի, որ սէրը չուշանար յաջորդել
 այդ յարգանքին: Ասոր համար է, անա՛, որ
 դժբաղդ ամուսնութեանց շատին մէջ յանցանքը
 էրիկմարդունն է, որ չէ կրցած յարգել տալ ինք-
 ղինքն իւր կնոջ:

Կնոջ իւր էրկանը բարեմասնութեանց համար
 ունեցած յարգանքը, անոր համար ունեցած սիր-
 ոյն հիմն է. այդ յարգանքն է որ կ'ապահովէ
 սէրը. ա՛յդ է որ զանազան խութերէն կը պահ-
 պանէ զանի, և այդ է որ անհետացած սէրը
 վերադառնի երեւան կը հանէ: Կնոջ իւր ամուսնոյն
 համար ունեցած այդ յարգանքն ուրիշ շատ կա-
 րեւոր օգուտներ ալ կրնայ գոյացունել: Մեր ժա-
 մանակին մէջ շատ առատ են ջգային կոչուած

կինները : կը տեսնենք որ այդ նորերուկ հիւանդ-
ութիւնը մեր խելացի , սիրարժան , տաղանդաւոր ,
կրթեալ կանանց վրայ կը գտնուի յաճախ , և ամէն
բարեբաստիկ ամուսնութեանց այդ սոսկալի
թշնամին , հարսնիքէն անմիջապէս ետքն , — եթէ
օրիորդը դեռ ջղային եղած չէ — կու գայ մտնել
ամուսնական յարկին մէջ : Այդպիսի ջղային կան-
անց մեծագոյն մասն անպտուղ կը մնան յաճախ .
չատ ցաւալի է իրենց վիճակը . աւելի եւս՝ իրենց
ամուսնոց վիճակը , իսկ առաւել եւս՝ իրենց բժշ-
կին վիճակը : Այս վերջինը պարտի օգնութեան
հասնիլ , պարտի ոգորիլ այնպիսի հիւանդութեանց
դէմ որ գոյութիւն չունին , երեւակայական են ,
որ եթէ մարմնական որեւիցէ հիմնապատճառ մ'ու-
նենան իսկ , ատոնք սովորապէս կապակցութիւն
չ'ունին այն իսդերային ցաւերուն հետ , որ ամե-
նայն զօրութեամբ իրարու կը յաջորդեն : Այս պա-
րագային մէջ նկարագրի ամբողջութիւնն ալ շատ
օգուտ ունի : Կինը պարտի առնանալ , և ասոր
համար ալ լծակիցն օգնելու է անոր : Եթէ կինը
տկարաբնոյթ ամուսին մ'ունեցած ըլլայ , չի գտներ
բարոյական ու ֆիզիքական ոյժ մը , որու կարե-
նար ապաւինիլ իւր խոր թախճութենէն և տկար-
ութենէն ազատելու համար : Ընդհակառակն ,
կինը պիտի չըլլար այնչափ բարձրաստիճան իսդե-
րածէտ մը , երբ կարուկ , աղդեցիկ ու կորովի
լծակից մ'ունենար . ամուսին մը՝ որ իւր խօսքե-
րուն ու գործին մէջ չափաւոր , և իւր անձին տէրն
ըլլար միշտ , որ մինչև մէկ աստիճան համակեր-
պող ըլլար : Ահա , այդ ատեն , կինը իւր առջեւ

ունենալով լաւ օրինակը , ինքն ալ պիտի համա-
կերպէր և երեւակայական այդ վիշտերը պիտի
թեթեւնային առանց դեղի գործածութեան :

Իսկ եթէ կնոջ իսդերիին պատճառը արգան-
դային իրական հիւանդութիւններ են , այդ ատեն
պէտք է առանց ժամանակ անցունելու բժշկի
դիմել : Ադոր համար ժամանակ անցունելը շատ
ազետաբեր պակասութիւն մ'է : Այս մասին յա-
պաղում մը դէշ հետեւանքներ կ'ունենայ և կինը
ամուլ կը մնայ :

Շատ յաճախադէպ է նաեւ մաղասային (պաղ-
արիւն) կանանց ամբողջութիւնը : Սաղմնատութեան
նկատմամբ խառնուածքին ունեցած կարեւորու-
թիւնը ցոյց տուած ենք նախորդ գլուխներուն
մէջ : Կրակոտ կնոջ քով սեռային յարաբերութեան
ատեն ամէն ինչ փափաքուածին պէս կը կատար-
ուի ինքնին , այնպէս որ ատն սերմը կնոջ ներսի
դին ամենուրեք բաց դուռ կը գտնէ և անսայթաք
անխոտոր կ'երթայ կը հասնի իրեն համար որոշ-
ուած տեղին : Ասոր հակառակն է պաղարիւն կինը ,
անզգայ կինը , որ գաղափար իսկ չունի թէ ինչ
է գեղեցիկը , թէ ի՞նչ է լծակցական , սեռային
հաճոյից վայելքը : Բայց այդպիսին ալ կրնայ
յղանալ երբ ամուսինը կարենայ տակաւ դգացու-
նել անոր . ճանչցունել այդ գործին նպատակը ,
և ոգեւորել զանի Գեղեցիկին ըմբռնման մէջ :

ԳԻՋՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՕՆԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Օնանականութիւն կամ գիջութիւն ըսելով կ'իմանանք այն գործողութիւնը, որով մարդու սերմը հակաքնական եղանակով դուրս կը վտարուի մարմնէն. այն հիւթը՝ որ երկու սեռին բնական մերձաբուրութեամբը դուրս ելնել պէտք էր. նոյնպէս՝ այդ բունագրութիւն արտաքսմամբ մարդուս մարմնական ու մտաւորական ամբողջ կազմուածքին վրայ ուժգին ցնցում մը յառաջ կու գայ, որ այդ ալ ի սկզբան կսկծուն ցաւ մը կը պատճառէ և շատ անգամ ալ մահ յառաջ կը բերէ:

Երբ ըսենք թէ օնանականութիւնը կամ գիջութիւնը առնական սերմին բուռն վտարումն է, չհասկցողի թէ օնանականութիւնը՝ միայն արական սեռին յատուկ ախտ մ'է, ո՛չ: Այդ սոսկալի ախտը որ մարդուս մարմնական ու մտաւորական կարողութիւնները կը ջլատէ, իգական սեռին վրայ ալ կը գտնուի յաճախ, միայն թէ՛ գործին եղանակը տարբեր է: Արական սեռին գիջութիւնն այն է որ որեւիցէ մեքենական զրգումամբ սուտ հեշտութեան զգացում մը յառաջ կու գայ, և այդու՝ սերմ կը ցայտէ: Գեռ արբունքի չհասած տղաքներն ու պատանիներն ալ գիջութեամբ, առանց սերմնահոսութեան, սուտ հեշտութեան գրգիռ մը կ'ուսնենան, որ այդ ալ ամբողջ մարմնոյն ախտաժէտ ցնցմամբ կը յայտնուի: Մեր օրական փորձառութիւնը կը ցուցունէ թէ երիտասարդք աւելի յաճախ կ'ենթարկուին գիջութիւն ըսուած գարշելի ախտին, առանց իսկ կասկածելու թէ գէշ բան մ'է ըրածին:

չեն գիտեր թէ որպիսի խոր ու անյատակ անդունդի մը եղերքին վրայ կը գտնուին, վասն զի շատ հազուադէպ է որ ճշմարիտ բարեկամ մը, մարդասէր մը բարեհասճի այդ մասին խրատ մը, յորդոր մը տալ իրենց և ճանճրութիւն յանձն առնէ հասկըցունելու համար անոնց թէ մտային ու մարմնաւոր կործանման վիճակի մը մէջ կը գտնուին: —

Իսկ իգական սեռին մէջ տարբեր է գիջութեան եղանակը. դեռատի աղջիկներն ալ իրենց սեռակիցներէն մոլորելով, երբ հեշտախտութեան այդ հակաքնական զրգութեան վարժուին, օրուան մէջ մէկ քանի անգամներ կը կրկնեն զայն, չգիտնալով թէ այդ ախտն ամէն օր իրենց մանկամարդութեան վարդէն մէյմէկ թերթիկ կը թառամեցունէ և իրենք հսկայաքայլ կը դիմեն իրենց մարմնոյն հիւժման, իրենց գերեզմանին:

Գիջութեան կը նմանին նաեւ, իրենց պատճառած վնասներուն համար.

Ա. Ժամանակէն առաջ սեռային յարաբերութեան սկսիլը. այսինքն երբ մանչն ու աղջիկը, կամ երկուքէն մին անչափահաս ըլլան.

Բ. Սեռային հաճոյից չափազանց վայելումը. մանաւանդ՝ երբ առ այդ զգացուած զրգութիւնը արուեստական միջոցի և կամ զրգութիւնը և ջեռուցիչ խմելիքներու արդիւնք է.

Գ. Երբ երիտասարդք զուգաւորին իրենցմէ տարիքոտ կանանց հետ, — որոնք անամօթաբար երիտասարդներէն ծախու կ'առնեն իրենց ցանկութեան գոհացումը: — Շատ երիտասարդներ այդ գժուճ ծառայութեան պատճառաւ մեծապէս վնասուած են.

Գ. Նոյնպէս նաեւ՝ երբ մանկամարդ աղջիկներ դրամի համար, տարիքնին առած էրիկմարդոց անձնատուր ըլլան, և կամ ամուսնանան հիւժեալ ու վատառողջ անձանց հետ, որք իրենց երբեմնի շուստ կենցաղավարութեան պատճառաւ չեն կրնար գոհացունել այդպիսի աղջկանց հեշտագրգռութիւնը:

Գիշտութիւնը կրնայ նաեւ մտաւոր ըլլալ

Մտաւոր գիշտութիւն ըսուածն այն է որ մարդուս երեւակայութիւնը իրականութենէ հեռանալով իրեն յարմար մտատիպար մը կը կազմէ, որուն համար մարդ մտաւորական մեծ յուզման մէջ կը տարուբերի, կը շոյէ, կը գգուէ զայն և անոր հետ կը մոլորի երեւակայութեամբ. մտաւորական այս գիշտութեան պատճառը, շատ անգամ, լկտի գիրքերու ընթերցումն է, որով մանկամարդ աղջիկները կը վատնեն իրենց երիտասարդութեան թանկագին ժամանակը, և դեռատի կլինին ալ՝ լոկ շահագիտութեան պատճառաւ իրենց հետ ամուսնացող էրիկներնուն համար ունեցած համակրութեան պակասը կը լրացունեն, ինքզինքնին յանձնելով գերզգայական մտատիպարի մը, որ կը համապատասխանէ յաճախ իրենց գրգռեալ պահանջմանց: Այսպէս՝ կը խռովեն իրենց միտքը, կը յուզեն իրենց երեւակայութիւնը և այդու կը խանգարեն իրենց արեան շրջանին կանոնաւորութիւնը, կը տկարացունեն իրենց մարտողութիւնը և հետեւապէս տեղի կու տան այն կարգ մը հիւ-

անդութեանց, որք ո՛չ միայն հոգին կը ցնցեն, այլ ամենաձրասակարու սպասիչ գրգռութիւն մը կը պատճառեն մարմնոյն: — Հոգեկան այս հիւանդագին վիճակը կը բարձրացունէ ծննդագործարանաց գրգռականութիւնը, յոյժ անբարոյական դրդումներ կը թելագրէ և այս եղանակաւ ֆիզիքական անհնարին վայելքներու միտումներ և զգայմանց հիւանդութիւններ յառաջ կը բերէ:

* * *

Ծնողք և դաստիարակք ինչպէս նաեւ ամէն անոնք որոնց հոգածութեան յանձնուած է տղայոց մտաւորական կրթութիւնը, լա՛ւ ընտրութիւն ընելու են իրենց զաւակաց և աշակերտաց գիրքերուն: Գիշտութեան սոսկալի հետեւանքներն են, նախ՝ դէմքի գունատութիւն, աչքերու շուրջը կապոյտ շրջանակ, կատարեալ ուժաթափութիւն, սրունքներու և ոտքերու տկարութիւն, և վերջին տարիներու մէջ ալ զանազան անդամալուծութիւններ, ստամոքսի յայտնի խանգարումներ և զանազան գործարաններու հիւժու՛մ:

Այս ախտին ենթարկուողներուն գործնական դարմանը պաղ ջուրն է. պաղ ջուր խմել, պաղ ջուրի մէջ լոգնալ, առտու իրիկուն ալ պաղ ջրով լուալ ծննդագործարանները:

Իսկ գալով ԿԵՐՍՌՈՒԹԵԱՆ, այդ ալ, ինչպէս ուրիշ ամէն հիւանդութեանց ատեն, նոյնպէս գիշտութեան հետեւանք եղող վիճակի մէջ եւս, կարեւորագոյն մէկ մասը կը կազմէ դարմանին:

Օնանականներուն ու տելիքն ու խմելիքը շատ

պարզ ըլլալու է . կծու և համեմտոտ (պահարը) , իւղոտ, աղի, թթու և անուշ բաներ ուտելու չեն, և որ գլխաւորն է , կերածնին ու խմածնին պաղ ըլլալու է , վասն զի տաք ուտելիքները կը թուլցունեն ստամոքսը և կատարելապէս կը տկարացունեն մարսողութիւնը : Զօրաւոր համեմտոտ կերակուրներն ալ ստամոքսին բնական ջերմութիւնը բարձրացունելով , վայրկեանական ջերմնոտ գրգռութիւն մը կու տան անոր :

Օնանականներու յարմարագոյն ուտեստ են ցորենեղէնները , հաճարահացը , կամ 2-3 օրուան օթեկ ցորենահացը , և մէկ քանի տեսակ բանջարեղէններ , ինչպէս՝ ստեպլին , շողգամ , ընդակաղամբ . իսկ , ընդհակառակն , ամենեւին արգելեալ է իրենց ուտել ազատքեղ , կարոս , պրաս , սոխ , սխտոր , մանանեխ , ճակնդեղ , բողկ , թթուակաղամբ (թուրչի) , բոճկաւոր ընդեղէնք , կանանչ ոլոռն և լուբիա , թրթնջուկ և շոմին : Պտուղ կրնան ուտել , բայց լաւ հասունցածները , իսկ ապուր և միսի ջուր՝ բնաւ : Մսեղէնի գալով՝ կրնան ուտել կովի , ոչխարի , աքաղաղի , հաւու և ամէն տեսակ երէի միս : Իսկ ներելի չէ ուտել խոզի , հորթու , սագի , բաղի միս , ինչպէս նաեւ՝ անթեփ ձուկ , չորցուցուած միսեր , այսինքն՝ երչիկ , ապուխտ և այլն և այլն , և քացախի կամ աղի մէջ պահուած ուտելիք (պանիր , ձուկ , միս) , վասն զի ամէն ինչ որ կծու , թթու է , կ'ապականէ և կը թանձրացունէ արիւնը : Խմելիքներէն՝ հիւանդութեան ատեն թարմ կաթը , չեփած , ներելի է խմել , և այդ ալ սա՛ պէս . մինչեւ 10

տարեկան տղայոց համար $\frac{1}{3}$ մասը ջուր , մինչեւ 15 տարեկան հիւանդաց համար $\frac{1}{4}$ մասը ջուր խառնելով , իսկ ադկէ աւելի տարիքոտներուն համար՝ անարատ կաթ : Այս տեսակ հիւանդներ օրուան մէջ մէկ անգամ միայն եփուած կերակուր ուտելու են , և այդ ալ ցորեկուան ճաշի ատեն , և այդ ճաշն ալ , սակայն , պէտք չէ որ 2 տեսակ (եփուած) կերակուրէ աւելի ըլլայ , այսինքն բաւ է մէկ տեսակը մսեղէն և միւսն ալ խմորեղէն , զորս տաք ուտելու չէ : Նախաճաշին և իրիկուան ճաշին համար ալ (այս վերջինը ննջելէ 2 ժամ առաջ ըլլալու է միշտ) հիւանդը կրնայ ճերմակ օթեկ հացիկով մը կաթ ուտել , և եթէ ծանր հիւանդներն այդ ալ չուտին լաւ կ'ընեն : Հիւանդներն ընդհանրապէս շատ ուտելու չեն . այսինքն այնչա՛փ ուտելու են որ միշտ քիչ մը ախորժակ մնայ դեռ : Եթէ հիւանդն ախորժակ չունենայ , պէտք չէ բռնի կերցունել , ըսելով միմարանայ , պէտք է ուտել , կորսուած ոյժերը վերստանալու համար : Ընդհակառակն , լաւ է որ հիւանդն այնչափ ատեն չուտէ մինչև որ բնականապէս ախորժակը ինքնին բացուի , վասն զի չկամութեամբ ստամոքսին մէջ լեցուած սնունդն աւելի կը տկարացունէ և անկարող կ'ընէ զայն կերուած կերակուրները մարսելու : Երբ կերակուրը պէտք եղածին պէս չի մարսուի ստամոքսէն , կը նեխի անոր մէջ և չի մարսուի կերակուրին մամացը արեան մէջ կը մանէ , նեխած կերակուրին մամացը արեան մէջ կը մանէ , որով արիւնը կ'աւրուի , շրջանը անկանոն կ'ըլլայ որով արիւնը կ'աւրուի , որ կայ արդէն մարմն- և հիւանդութեան հիւթը , որ կայ

նոյն մէջ , աւելի կը շատնայ : Շատ բնական է որ այսպիսի պարագաներու մէջ հիւանդութեան աստիճանը կը բարձրանայ և հիւանդին վիճակն աւելի կը ծանրանայ .

Այս տեսակ հիւանդներուն կերակուրի պատրաստութեան համար պէտք եղած գլխաւոր բանը թարմ կարագն է , և քիչ մ'ալ՝ աղ :

Այս տեսակ հիւանդութեանց ատեն խմելիքի համար ալ մեծ ժուժկալութիւն պէտք է . խմելու չէ ո՛չ ոգելից (դարեջուր , գինի , օղի , ուօմ , բօնջ) և ո՛չ ալ ջեռուցիչ ըմպելիներ (խահուէ , թէյ , չօքօլա) :

Ծխախոտն ալ վնասակար ազդեցութիւն ունի ուղեղին , ողնածուծին , թոքերուն և ստամոքսին վրայ : Այս պատճառաւ , ահա՛ , այս հիւանդութեան մէջ ծխախոտի ու քթախոտի գործածութիւնն արգելեալ է խստիւ :



ՇՐՋԱՆԿԱՏ ՀՕՐ ՄԸ

ԻՒՐ ՆՈՐԱՊՍԱԿ ՈՐԴԻՌՅՆ ՏՈՒԱԾ ԽՐԱՏՆԵՐԸ

Այն դեռատի ու վարդափթիթ աղջիկը զոր այժմ այնչա՛փ սիրով կը գրկափարեա , ո՛չ ծնողացդ «անողօքելի» կամքը տեղը տարած ըլլալու և ո՛չ ալ իւր հարստութենէն շլանալով է որ քեզ կին առիր . քու անբռնազբօսիկ ընտրութիւնդ է այդ . նա մարմնական ու հոգեկան այնպիսի թանկագին յատկութիւններ ունի որ դուն պէտք է ինքզինքդ երջանիկ համարիս զանի սիրելուդ և անոր հետ ամուսնանալուդ համար : Փառք տուր , որդեակ իմ , և նախ շնորհակալ եղիր Աստուծոյ որ այդ սիրաժան աղջիկը քու առջեւդ հանեց իբրև ընկեր ու օգնական քու կեանքիդ . վասն զի իւր սեռին հազարաւորներուն մէջէն անոր հանդիպիլդ , զանի զանեղդ ու զիբար սիրելնիդ , դիպուածի գործ չէ , զաւակս , ո՛չ , տարակոյս մի՛ ունենար ադոր , այլ առաջնորդութիւնն է Նախախնամութեան , որ կը հարթէ մեր կեանքի ուղին և հաճելի կ'ընէ զայն մեզ , որպէս զի անյողդօղդ կատարենք մեր պարտաւորութիւնները և նպաստենք ընդհանուրին լաւութեան : *

Քու վարմունքէդ միայն կախում պիտի ունենայ երջանիկ ըլլալդ այդ ամուսնական վիճակիդ

*) Դժբաղդ ամուսնութեանց մեծագոյն մասին պատճառն էրիկ մարդերն են , և այդ ալ իրենց կամ ֆիզիքական , կամ մտաւորական և կամ բարոյական ոյժին պակասութեան պատճառաւ :

մէջ, որ իւր թէ՛ առաջին և թէ՛ վերջին նպատակ-
ներուն համար յարգելի է, և մարդկային ընկեր-
ութեան համար մեծապէս օգտակար, որ առողջ-
ութիւն և զուարթութիւն կու տայ մարդուս, և
որով կարող կ'ըլլաս վայելել ամուսնոյդ սէրը և
զաւակացոյ օրհնէնքը: Ձանա՛ որ լծակցական վայ-
ելքներուդ մէջ ձեռքէ չթողուս չափաւորութիւնը.
քեզ սիրող կնոջդ բաղկացը մէջ ամուսնական վի-
ճակի հաճոյքները վայելած ատենդ՝ որդիական
յարգանք ու երախտադիտութեամբ՝ միշտ միտք
բեր թէ ամենարարի էակը մեր վայելքին համար
ստեղծած է ամուսնական հաճոյքները: Բայց ադոր
չարաչար գործածութիւնը, — ինչպէս ամէն զգայ-
ական վայելք — կը պատժէ անհաճոյ հետեւանք-
ներով՝ զմեզ մեր անձին պահպանման ուշադիր
ընելու համար: Սիրոյ ամենարուճն արքութեանդ
մէջ իսկ մի՛ մոռնար արժանապատուութիւնդ. չըլ-
լայ որ անյագ հեշտասիրութեամբ անասնական
բիրտ վիճակին ստորնացունես ինքդինքդ:

Երիտասարդ կանամբի մը իւր ամուսնութեան
առաջին տարիներուն մէջ վայելքի չափազանցու-
թեամբ այնչափ կը տկարանայ որ ամուսնութեան
գարունին մէջ իսկ կը զրկուի իւր առնական ոյժէն:
Չափաւոր վայելքը երջանկութիւն մ'է ամուսնու-
թեան մէջ: Չափազանց հեշտասէր կանամբին քիչ
ժամանակէն հարկատու կ'ըլլայ դեղագործին, և
անկարող՝ իւր պաշտօնին աշխատութեանց: Չա-
փազանց հեշտանքէն վնասողը աւելի ուղեղն է,
ագնուագոյն ուժերու այդ կեդրոնը: Խորհելու և
յիշելու կարողութիւնները խեղճ ու կրակ վիճակի

մը մէջ կ'իջնան այդ մոլութենէն: Սեռային կա-
րողութիւնը բարձրացունելու և դրդումը բազմա-
ցունելու նպատակաւ յոյժ մննդարար ուտեստներ
և ջեռուցիչ խմելիքներ և կամ գրգռիչ դեղեր
գործածելը թունաւորել է առողջութիւնը: Շատ
և շատ հեշտասէրներ այդ վտանգաւոր եղման
զոհերն եղած են: Եւ քանի՞ն ամօթալի է ամուս-
նութեան զգայական վայելքը — որ միջոց մ'է
նպատակին հասնելու համար — նպատակի վերա-
ծել և վայրկեանական հաճոյքի մը համար անմո-
օրէն վրայ տալ մարմնական ու հոգեկան ոյժ,
առողջութիւն և կեանք:

Վայելէ՛ չափով, որդեակ իմ, և անվնաս
պահէ այն կարողութիւնը զոր Ստեղծիչը քու սե-
ռիդ բարգաւաճման համար պարգեւած է քեզ.
որչափ սակաւադէպ ըլլայ լծակցական վայելքը,
այնչափ անուշ ու առողջարար կ'ըլլայ ան: Չաշէն
անմիջապէս ետք, լեցուն ստամոքսով տեղի ու-
նեցած վայելքը կը վնասէ մարսողութեան. այդ
ատենի զգացուած սեռային դրդումը արուեստակ-
եալ է, բնական չէ, և ադոր գոհացումն ալ, հե-
տեւարար, վնասակար է առողջութեան: Երբ լծակ-
ցական վայելքէն յետոյ անսովոր ուժաթափու-
թիւն, անմարսողութիւն, պրկիչ գլխուցաւ,
գժդմութիւն և դիւրագրգռութիւն զգայ մարդ
իւր վրայ, ըսել է թէ այդ վայելքն զգայականու-
թեամբ տուփացող երեւակայութեան գործ մը եղած
է և ո՛չ թէ բնականին ճշմարիտ պահանջումը: Այդ
բանը ամրան մէջ աւելի կը տկարացունէ քան թէ
ձմրան մէջ, վասն զի ամրան մէջ մարսողութիւնն

ընդհանրապէս տկար է: Բնութիւնը կը ցուցունէ թէ սաղմնառութեան, այսինքն ամուսնական վայելքին նպատակն իրագործելու յարմարագոյն եղանակը գարունն է: Նորաիթիթ, թարմ ու զեղուն կեանքը, որ այդ եղանակին մէջ կը լեցունէ ամբողջ բնութիւնը, ներշնչում կուտայ նաև մարդկային մարմնոյն և ադոր համար է որ մայրսի մէջ յղացուած զաւակներն ընդհանրապէս կայտառ ու խելացի կ'ըլլան: — Նաև՝ մարմնական դժնդակ աշխատութենէ կամ մտաւորական խոնջեցուցիչ զբաղումէ մը ետքը, փոխանակ հանգչելու, լծակցական հաճոյքը վայելելը չափազանց վնասակար յիմարամտութիւն մ'է: — Երբ կինը վատտող ըլլայ, լծակցական վայելքը կը վնասէ անոր առողջութեան: Թոքախտի կամ ուրիշ վտանգաւոր, դժնդակ հիւանդութեան մը հակամտութիւն ու նեցող կիներն յղութեան վիճակի մէջ դնելը անոր մահը փութացունել և տխելո՞ւ ու թշուառ դաւկի մը ծննդեան պատճառ ըլլալ է: — Երբ մարդ դժնդակ հիւանդութենէ մը նոր ելած է և դեռ կատարելապէս չէ կաղզուրուած, շատ վտանգաւոր է դեռ անկատար կերպով զգացուած ոյժերը սեռային յարաբերութեան յոյզերուն գործածել, և այդ՝ շատ անգամ — մանուանդ ընդհատական ջերմի տտեն — հիւանդութեան յամառ կրկնումներու պատճառ կ'ըլլայ: — Կնոջ դաշտանահոսման օրերուն մէջ տեղի ունեցած մերձաւորութիւնը — որ ըստ ինքեան անպատշաճ ըլլալովն հանդերձ, անսանձ կիրքի հետեւանք և վայրագութիւն կը համարուի — պատճառ կ'ըլլայ արեւահոտութեան և

ուրիշ կանացի հիւանդութեանց, որք ուչ կամ կանուխ կը խրամատեն կնոջ առողջութիւնը:

Յղութեան տտեն, մանաւանդ առաջին ամիսներուն մէջ, կատարուած մոլեղին մերձաւորութիւնը գաղտնի որդեսպանութիւն է և դեռուտի, արիւնաշատ ու գրգռուն կնոջ վիժում կը պատճառէ: Յղութեան մէջ մերձաւորութեան ամենավտանգաւորը այն պահունն է յորում կինն իւր դաշտանահոսումը պիտի ունենար եթէ յղի եղած չըլլար: — Յղութեան վերջին ամսոց մէջ մերձաւորութիւնը — կնոջ՝ տակաւ ընդլայնուող ստորին որովայնի վիճակին պատճառաւ — սաղմին զարգացման համար թէ՛ վնասակար և թէ՛ անյարմար է. այդ պատճառին համար է նաև որ այդ ժամանակին մէջ տեղի ունեցած մերձաւորութիւնը սերնդագործ հիւթին անօգուտ կերպով սպառումն է: Թիստոզ էգ անասունները կը դադրին սեռային յարաբերութենէ և արուն էգին մտունդ ճարելով կը զբաղի միայն: Պէ՛տք է որ բնաւոր էակը նուազ ժուժկալ ըլլայ. մանաւանդ, գիտնալով թէ լծակցական վայելքին նուազութիւնը աւելի կը զօրացունէ սիրոյ և հոգեոյ ոյժերը: — Իւր ծննդապահութեան (շոնոսալըբ) մէջ գտնուող կնոջը մօտեցողը կը յապաղեցունէ անոր կատարեալ կաղզուրումը. և այդ հակառակ իսկ է այն պարկեշտութեան զոր հին ժամանակաց կրթեալ ժողովուրդները կը յարգէին:

Այս պատուէրներու համաձայն վարուէ՛, որդեակ իմ, և չափաւորէ՛ սեռային դրդումդ, եթէ կ'ուզես որ յարատև առողջութեամբդ, աշխոյժ ու կայտառ՝ երկար տարիներ վայելես ամուսնութիւնդ,

հովուով ու մարմնով առողջ ծնող մը, առողջ զաւակաց հայր մ'ըլլաս, և վերջապէս՝ թոռներէդ շրջապատուիս: — Ասկէ զատ, պատուէրներուս հետեւելովդ, պիտի չունենաս այն արագահաս ձանձորոյթն ու յափրութիւնը, որ անվրիպելի հետեւանք են զգայական չափազանց վայելքին, և այժմուս ամուսնացելոց շատերուն համար, աւա՛ղ, անհերքելի ճշմարտութեան մը կարգն անցուցած են այն առածը թէ « ամուսնութիւնը սիրոյ գերեզմանն է » . դու պիտի հերքես զայս քու կեանքովդ: — Կանամբրիններուն անժուժկալութեան պատճառաւ մէկ տարուան մէջ անթիւ զաւակներ կը կորսուին (վիժմամբ): — Նոյնպէս՝ խելացութիւն է որ զատ պառկին, երբ կինդ, հետեւելով մայրական պարտականութեանց, իւր ստինքէն կը սնուցանէ զաւակը: Բայց այդ ժուժկալութեանդ մէջ չըլլայ որ դրժես ամուսնական սուրբ հաւատարմութեանդ . չըլլայ որ անառակ կանանց քով վայելել փորձես այն հաճոյքն, ուրկէ զրկուած ես, առժամաբար, լծակցիդ փափուկ վիճակին համար: Ատիկա դառն աղէտ մը պիտի ըլլայ առաքինի կնոջդ համար . ատիկա պիտի թունաւորէ արիւնդ, պիտի խանգարէ առողջութիւնդ և ամէն պարագայի մէջ ալ ամօթահարութիւնը և խղճիդ կշտամբանքը քեզ բաժին պիտի ունենաս: Այդ տեսակ փորձութեանց պիտի կրնաս յաղթել Աստուծոյ ունեցած վախճովդ, մտաւորական ու մարմնական լուրջ զբաղմունքով, կերութեամբ զգուշանալով և խորհելով թէ այդպիսի շուայտութեանց հետեւանքները վնասակար են առողջութեան, ամուսնական խաղաղութեան,

զաւակաց կրթութեան և մարմնոյ ներքին խաղաղութեան . մի՛ վախնար որ առժամեայ ժուժկալութիւնդ վնասակար կ'ըլլայ առողջութեանդ, հակառակ բժշկաց ումանց ըսածին—անչուշտ ցոփակեաց հեշտասէրները շողոքորթելու համար — թէ ժուժկալութիւնը վնասակար է: Բնութիւնը բժիշկներէն աղէկ գիտէ ինչ որ օգտակար կամ վնասակար է առողջութեան. և ո՛չ մէկ ժամանակ առողջապահական կանոնները չեն հակառակի բարոյականին: Այսպէս, ահա, որդեակ իմ, վերոյիշեալ ժամանակներուն մէջ ժուժկալ եղիր և անյողդողդ հաւատարմութիւն ունեցիր կնոջդ հանդէպ: Ինքզինքդ կը խաբես երբ կարծես թէ ուղտափուշին և եղիճին տակ ծաղիկ կրնաս քաղել: Գերագրգիւ երեւակայութիւնը ու անասնական այլամերձութեան տենչն է միայն որ խառնակեցիկ, օտար ու վարձկան աղջկան մը յետամնաց շնորհները կ'ընդունի ամենայն նեղութեամբ և դրամ վատնելով, և այս՝ այն ատեն որ մարդ, առանց պարտազանցութեան, կրնայ իւր անմեղուկ կնոջ քով վայելել այդ հաճոյքը: Ես պիտի անարգէի զքեզ, որդեակ իմ, երբ դուն այդպէս անիրաւ և անհաւատարիմ եղած ըլլայիր, եթէ՛ թեթեւամիտ հեշտասէր մը ըլլայիր: Բայց պիտի անխճէի զքեզ, երբ այնչափ սուղ և այնչափ ամօթալից կերպով ստացած թոյնովդ խոցոտէիր քու անմեղ կինդ: Կին մը արդէն բաւական դժբաղդ եղած չըլլա՛ր երբ իւր միակ ստացուածքը, այսինքն իւր լծակցին սէրը կորուսանէ. և պէ՛տք է որ անոր մեղքն ինքն ալ քաւէ. և պէ՛տք է որ օտար անառակ կանանց պատճառաւ

իւր անուանոյն անսէր վարմանցն ու անակնածութեանց համակերպի . հնազանդի : Թէպէտ վստահ եմ որ դուն ինքզինքդ այդչափ սոսկալի անձնամուսկոյթեան չես մատներ , բայց սա՛ հասկցունել կ'ուզեմ՝ քեզ թէ չի կարծես որ ամուսնութեան ամբողջ տեւողութիւնը այս առաջին ամսուան պէս անուշ է . ո՛չ , ամէն ատեն պիտի չտեսնես շուրջդ սիրոյ զարնանածաղիկները , վարդ , մանիշակ ու անմոտեկ . ցուրտ եղանակներն ալ կան . սառնապաղ դիշերները , բաղդին մութ ամպերը պիտի մթագնեն զգայական վայելքին խաղաղ ու պայծառ օրերը . այս օրուան դիւթիչ խօսակցութեանց և զուարճութեանց պիտի յա՛որդեն յօրանջաբեր անանութիւններ . այն ատեն , որդեակ իմ , պէտք է որ սիրաբորբոք վարմանց քաղցր բարեկամութիւն մը յաջորդէ , ինչպէս՝ կիզիչ արեւուն մարը մտնելէն ետքը քաղցր լուսնկան իւր փայլուն պայծառութեամբ կու գայ անոր տեղը բռնել : Բարեկամութիւնը , ընտանեկան այդ բաղդաբեր չաստուածը , երբեմնի հովուերգական սիրուըտուքներու երանութիւնը կրկնապէս պիտի փոխատրէ . այն սիրահարական տարփանաց պիտի յաջորդեն մտերմութիւն , ներողամտութիւն , փոխադարձ մխիթարութիւն և քաջալիրութիւն . համերաչխ հոգածութիւն զաւակաց կրթութեան և զանոնք ապագային մէջմէկ գործի տեղաւորելու համար խորհրդածութիւն , և ահա՛ , ասոնք միջոցներ պիտի ըլլան ձեր ձանձրոյթը փարատելու : Եւ երբ , որդեակ իմ , երբ դադարիս լծակցիդ խանդավառ սիրահարն ըլլալէ , անոր գորովալից բարեկամն եղիր :

Անոր՝ քեզի համար ունեցած սէրը , իւր մայրական տառապանքները , տնարարութեան համար տարած հոգն ու խնամքը և ասոնցմէ անբաժան եղող ամէն նեղութիւններն ու տհաճութիւնները , քու անձիդ գոհունակութիւնը , դատողութիւնդ , պարտաճանաչութիւնդ ու կրօնքը , այս ամէնը կը պահանջեն զայդ քենէ . վասն զի , վա՛յ այն տան , այն ընտանիքին ուրկէ հեռացած է բարեկամութիւնը , և ադոր տեղ գժտութիւն , անմխարանութիւն , անվստահութիւն , կասկած և փոխադարձ խարէութիւնը մուտ գտած են : Վա՛յ այն ընտանեկան երանութեան , վա՛յ այն զաւակաց երբ այր և կին իրենց զատ զատ սենեակները , իրենց զատ տնարարութիւնը , իրենց մասնաւոր բարեկամներն ու բարեկամուհիներն ունին : Այդ վիճակին մէջ ամբողջ ընտանիքը կ'օտարանայ իրարմէ , կ'ապականի , ծերութեան մէջ աղքատութիւն և կարօտութիւն իրենց բաժին կը մնան և զաւակաց կշտամբանքն աւելի կը դառնացունէ իրենց կեանքը :

Կրնայ ըլլալ նաև որ ամուսինդ երբեմն գժդմնի , մանաւանդ՝ երբ փոփոխական վիճակներու մէջ գտնուելով՝ հիւանդագին ջլազրգուութիւն մը շուտով կը դառնացունէ և կը գժդմնեցունէ զինքն : Դուն ալ , որդեակ իմ , դուն ալ միշտ այնչափ հաճելի չես սիրաբորբոք սիրահարի մը պէս , միշտ հաճոյալիբ չես խօսնայրի մը պէս : Ուստի ներողամտութեամբ և համբերութեամբ վարուէ՛ փափուկ վիճակի մը մէջ գտնուող լծակցիդ քմահաճոյքներուն հետ :

Քեզի դժուար չպիտի ըլլայ տանիլ իւր ակար-

աւթիւնները և ներել իւր աճապապարումներուն երբ անկեղծութեամբ կը սիրես զանի :

Սա ալ ըսեմ թէ մայր ըլլալու օրհնեալ վիճակն ալ մեծ ձախողանքներ կ'ունենայ երբեմն . ուստի աչոր համար ջանա՛ որ փարատես իւր հոգերը , ամոքես իւր ցաւը , սփոփես և քաջալերես զինքն :

Երբ տեսնես որ կինդ պէտք ունի հրահանգներուդ , համողէ՛ զանի միշտ իմաստուն պատճառաբանութեամբ :

Քու խորհուրդներդ սրտակից բարեկամի մը խորհուրդները թող ըլլան իրեն միշտ , և ո՛չ թէ՛ դաժան մարդու մը : Մի՛ փոխեր սակայն որոշումդ , եթէ լաւ մտածուած է , և ո՛չ թէ՛ կըքի , այլ՝ ընտանեկան բարեխառութեան համար ունեցած հոգածու ջանիցդ արդիւնք է :

Էրիկմարդ մը պէտք չէ որ ուզէ այն-բանը որ ուղիղ չէ, կամ այն՝ զոր չի կրնար ի գլուխ հանել . այսու ամենայնիւ պէտք է անյողդողդ մնայ և պէտք չէ որ իւր կնոջը գգուանքովը , աղաչանքովը և արցունքներովը միտքը փոխէ և իւր իրաւացի համողման հակառակ գործէ :

Էրիկ մը պէտք չէ որ իւր ամուսնոյն հանդէպ կծծի գտնուի կամ պատշաճ ուտեստը խնայէ անոր . բայց պէտք չէ նաև տնական անդորրութեան վնասելով , իւր կնոջ նորելքի տենչը և զուարճութեանց միտումը գոհացունելու համար դրամ վատնէ : Դատողութեամբ և քաղցրաբարոյութեամբ առաջնորդելով անոր , ջանա՛ տակաւ հեռացունել զանի այն յիմարամտութիւններէն որոնց միտեալ է փոքր ինչ :

Մի՛ ըլլար շռայլ , մի՛ արեցող , մի՛ խաղամու . գիշերները տունէդ դուրս մի՛ անցուներ . ասոնք այնպիսի սոսկալի մոլութիւններ են , որք կը խանգարեն ամուսնութեան խաղաղութիւնը , կ'աւերեն առողջութիւնը և կը խրամատեն ընտանեկան հասնգիստը . կը գայթակղեցունեն զաւակները և կ'աղարտեն բարի քաղաքացիի համբաւը : Հաւատա՛ խօսքիս , զաւակս , երկրային երանութեանց և ո՛չ մին կը գերազանցէ այն ընտանեկան երջանիկ վիճակը զոր մարդ կը գտնէ սիրագեղ և առաքինի ամուսնոյ մը ընկերակցութեան և բարեկիրթ զաւակաց չըջանակին մէջ : Զգուշացի՛ր այն պակասութիւններէն որոնց ենթակայ եղողն իւր կնոջմէն , իւր զաւակներէն և մինչև իսկ իւր սպասաւորներէն կրնայ յանդիմանուիլ իրաւամբ :

Մարդ երբ իւր տանը մեծը մնալ կ'ուզէ, պէտք չէ որ իւր ստորակարգեալներէն մէկուն ներողամտութեան կարօտի :

Մի՛ բանակուիր կնոջդ հետ և մի՛ յանդիմաներ զանի տղայոց և սպասաւորաց առջև , որպէս զի մի գուցէ ամօթահարի և վշտանայ : Այդպիսի վարմունքովդ դու զրկած կ'ըլլաս զինքն այն յարգու պատիւէն , որուն պէտք ունի տնակառավարութեան և զաւակաց կրթութեան գործերը լաւ կատարելու համար :

Անոր թեթեւ պակասութիւններն սքողէ սիրոյ և ներողութեան քողովը և մի՛ մոռնար թէ դուն ալ կատարեալ մարդ մը չես :

Խնայողութեան նեղ սահմաններուն մէջ մի՛ սեղմեր ամուսինդ . մի՛ ստիպեր որ տնական ծախուց

մանրամասն հաշիւը տայ քեզի, որպէս զի չըլլայ որ քեզ խաբելու ելնէ:

Զգուշացի՛ր այն նախանձէն որ անհիմն է և լոկ կասկածի արդիւնք: Երբ դու քու ամուսնոյդ հետ սիրով ու բարեկամութեամբ, յարգանքով ու վստահութեամբ վարուիս, ուրիշին հաճելի ըլլալ չի մտածեր և թեթեւամտութիւններ չի գործեր:

Անտոգիւտ առաքինութեան օրինակ եղիր իրեն անձամբդ և պիտի տեսնես որ այնպիսի մտադէր զգուշութեամբ պիտի պահպանէ ինքզինքը այն ամէն բաներէն, որք կրնան իրաւացի կասկածի առիթ տալ իւր անմեղութեան դէմ:

Երբ զաւկի տէր ըլլաս, քու ամէն ուժովդ հոգ տար անոնց ֆիզիքական ու բարոյական կըրթութեան. բնութիւնը, կրօնքը և մարդկային ընկերութիւնը կը պահանջեն զայն քեռէ: Թող մի՛ տար որ վնասակար նախապաշարումներ, անբարոյական աղախիններ և դժբաղի աւելորդապաշտ կիներ մուտ գտնեն քու զաւակացդ սննեակին մէջ, որպէս զի չըլլայ թէ դեռաբողբոջ ու փափուկ տունկերդ վնասուին այդ ուտիչ ճճիներէն և կանխահաս կերպով թարշամին: Առնական արիութիւնդ ձեռքէ մի՛ ձգեր և հայրական խնամքդ մի՛ հեռացուներ անոնց քովէն, մանաւանդ՝ իրենց վտանգաւոր տարիքներուն մէջ:

Քու որդւոյդ հանդէպ կծծի մի՛ ըլլար. թող մէկ քանի դահեկան ունենայ միշտ իւր վրան. բայց շատ դրամ ալ մի՛ տար անոր, որպէս զի անբարոյական միտումներու գոհացուցման դիւրութիւն չունենայ:

Երիտասարդական շուայտութեանց սոսկալի հետեւանքները ճանչցո՛ւր և տեղեկացո՛ւր քու որդւոյդ, որպէս զի չըլլայ թէ ադոնց անգիտակցութեամբն, անառակ և հեշտասէր մ'ըլլայ, և մողորի ու եղծանի: Արգելք մի՛ ըլլար իւր կանոնաւոր ու պարկեշտ զբօսանքին. եթէ չունի՛ դուն գոյացուր զայն, որպէս զի հայրական տունը բանտ մը չերեւնայ իրեն: Օգնէ՛, ձեռնտո՛ւ եղիր իրեն յարմար գործ մը, պաշտօն մը գտնելու համար, որպէս զի իւր առնական կորովը չվատնէ անառակ կանանց հետ, այլ՝ բարի հայր մը, ուղղամիտ ու հաւատարիմ քաղաքացի մ'ըլլայ: Նոյնպէս՝ հոգածու հսկողութիւն մ'ունեցիր քու չափահաս աղջկանդ վրայ, որպէս զի ժամանակիս մոլորեցուցիչ հրապուրանքին որս չըլլայ:

Անօգուտ մի՛ ըլլար նաև սպասաւորացդ հանդէպ. արդէն անոնք բաւական դժբաղդ են, որովհետև բաղդը ծառայութեան դատապարտած է զիրենք. քու մերձաւորդ, քու ընկերդ նկատէ զանոնք, և բարեխնամ հայր մ'եղիր անոնց և ոչ թէ՛ վէս հրամայող մը:

Կարելի եղածին չափ քիչ միջամտէ աղախնոյ ընտրութեան: Ամուսնոյդ համար ունեցած յարգանքդ ու պատուոյդ հոգածութիւնը կը պարտաւորեցունեն զքեզ հեռու մնալ այդպիսի միջամտութենէ մը: Կատարեալ վստահութեամբ կնոջդ յանձնէ առտնին գործերու կառավարութիւնը և մի՛ թողուր որ ուրիշն ալ քու գործիդ միջամտէ: Այս կերպով շատ անպատեհութեանց առաջքն

առնուած կ'ըլլայ, և քու ստորակարգեալներուդ
յարգը կը վայելես միշտ :

Ասոնք, որդեակ իմ, այնպիսի խրատներ և
պատուէրներ են զորս, իբրև քու ճշմարիտ բա-
րեկամդ, պարտաւոր էի տալ քեզ . խելամուտ
եղիր ադոնց, հետեւէ՛ ադոնց, ընտանեօք եր-
ջանիկ պիտի ըլլաք և Աստուծոյ օրհնութիւնն
ալ անպակաս պիտի ըլլայ քու և քու տանդ
վրայէն :



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պ. Ա. — Ամուսնութեան և իւր հաճոյքներուն վրայ ընդհանուր տեսութիւն	5
» Բ. — Մարդկային մարմնոյ այն մասերը որ սերն- դագործութեան կը ծառայեն	11
Արու և էգ ծննդագործարանաց կանոնաւոր շէնքը	17
— Արու ծննդագործարանք	17
— էգ ծննդագործարանք	18
» Պ. — Թէ՛ ինչպէս կը ծնի մարդ: Չանագան կար- ծիքներ և անոնց հաւանական հետեւութիւնները	34
» Պ. — Թէ մարդ երբ կրնայ գոհացունել սերնդա- գործութեան զրդումը առանց անձին վնասելու	41
» Ե. — Թէ մարդ որչափ կրնայ գոհացունել սեռա- յին զրդումը. քէ Երբ լաւագոյն է կատարել և քէ ինչ կերպով կատարելու է այդ գործը	55
» Զ. — Առն և կնոջ՝ սեռային զրդումը գոհացունե- լու ատեն ունենալիք ընթացքի մասին մէկ քա- նի կանոններ	67
» Է. — Սեռային զրդումը գոհացունելուն անվնաս- ակարութեան և վնասակարութեան վրայ դի- տողութիւններ . . . (Արանց համար)	71
» Ը. — Սեռային զրդումը գոհացունելուն անվնաս- ակարութեան և վնասակարութեան վրայ դի- տողութիւններ . . . (Կանանց համար)	80
» Թ. — Կանանց՝ յղանալու և արանց՝ սերնդագոր- ծելու կարողութեանց տեսողութեան վրայ	86
» Ժ. — Ժուժկայութիւնը կարելի ընելու համար մէկ քանի խորհուրդներ	92

ՅԱԻԵԼՈՒԱԾ . — Սեռային դրդում յառաջ քերող կամ
 զրգուղ դեղերուն վնասակարութեան վրայ 95
 — Առողջ, զօրաւոր և քարեկազմ գաւակներ
 ծնանելու արուեստը 100
 — Առն անկարողութիւնը 105
 — Կնոջ » 107
 — Գիջութիւն կամ Օնանականութիւն . . . 114
 — Շրջանկատ հօր մը իւր նորապսակ որդւոյն
 տուած խրատները 121



ԹԱՐԳՄԱՆՁԻՆ՝ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄԾ ԳՈՐԾԵՐԸ

	Չ.Ր.Շ.
ԿԻՆՆ՝ ԻՔՐԵՒ ԱՄՈՒՍԻՆ (Թարգմ. և Գեղմ.)	20
ՈՒՂԵՑՈՅՑ ԿԱՆԱՆՑ ԵՒ ՕՐԻՈՐԴԱՅ (Թարգմ. և Գեղմ.)	5
ԱՌՈՂՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԵՐԻՏԱՍԱՐԿՈՒՀԵԱՅ (Թրգ. և Գեղմ.)	6
ՔԵՐԹՈՒԱԾՔ ՆՈՒԻՐԱԿԱՆՔ (Թարգմ. և Գաղղ.)	—
ԱՐՈՒԵՍ ՀԱՐՍՏԱՆԱԼՈՅ (Թարգմ. և Գեղմ.)	2 1/2
ՄԱՅՐԸ (Ֆիզիքական տեսակետով) (Թարգմ. և Գեղմ.)	3
ԹԷ ԻՆՁ Է ԻՄԴԵՐԻՆ (Ջղագարութիւն) (Թարգմ. և Գեղմ.)	3
ԽՈՐՀՐԴԱՏՈՒ (Արական սեռին յատուկ) (Թարգմ. և Գեղմ.)	5
ՄԱՆՁ ՏՂԱՅՈՅ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԿԱՅ ԶԳԱՍՏՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ (Թարգմ. և Գեղմ.)	2
ԿԻՆՆ՝ ԻՔՐԵՒ ՕՐԻՈՐԴ. Թարգմ. և Գեղմ.)	Փառակազմ 20
	Լաթակազմ 15
	Թղթակազմ 10



Կեդրոնատեղի Պ. ՊԱՆԵՆՑ ԳՐԱՏՈՒՆՐ

Թիւ 20, Չախմախաղաւ, Կ. ՊՈԼԻՍ

معارف نظارت جليله سی و مطبوعات اداره عليه سنك رخصتیه طبع
اولتمشدر فی ۷ ایلول ۱۳۱۸

«Ազգային գրադարան»



NL0273102

2538